

1247

1. 6. 801.0806

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Թարգմ. ՍՈՒՐԵՍ.ԹԵՍՆԵՐԻ



1

S-80

1
S-80
1-1

2006-09

04 OCT 2010

№ 6

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԱՐՐ» ԱՄՍԱԳՐԻ

№ 6

1
50-80

Լ. Ն. ՏՕԼՍՕՅ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

(Թարգմանչի առաջաբանով)

Թարգմ. ՍՈՒՐԵԱԹԵԱՆԻ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ
592



Архивное Управлен
К.С.Д. Арм.ССР
НАУЧНО-СПРАВОЧНИ
БИБЛИОТЕКА

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «Էդոս» Գանձակալա Ձ.

1911

23 AUG 2013

1247

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մրրկածուի կեանքի բարդ ու ցաւատանջ ժխտում դարերով դեզերող մարդկութիւնը իր գիտակցական կօլլեկտիվ կենցաղի անյիշելի անցեալից սկսած մինչև այսօր շատ յաճախ ընկել է թախճալից մտորումների մէջ, թէ՛ հրն է մարդկային այս կեանքի հուժկու երթի վախճանական ձգտման կէտը, հրն է նրա այն հիմնական սկզբունքը, որով արդարանար այդ նպատակի իրագործման տենչալից ձգտումը: Ինչո՞ւ տիեզերական անողորմ ցաւ ու տառապանքի, համաշխարհային թեւատարած վշտի իբր յաւիտենական մարմնացումն անպայմանօրէն պէտք է հռչակուի թշուառ ու ապարախտ մարդը... Ծնուելով առանց գիտակցութեան, աշխարհ մտնելով առանց իր նախնական ցանկութեան՝ ինչո՞ւ նա հէնց առաջին քայլից պէտք է ենթակայ լինի ամեն տանջանք ու հալածանքի. ինչո՞ւ նա, այդ անօգնական մարդը, արիւն ու արցունքով, հիւանդութեամբ ու ցաւով անցկացնէ իր կարճ ու վշտոտ կեանքը և ապա մեռնի, մեռնի նոյնպէս չիմանալով, թէ ինչո՞ւ ապրեց, ապրեց տանջանքով, և ինչո՞ւ

ՀԱՐՄԱՆԱԿ

4868 - 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

է մեռնում, կորչում յաւիտեան... Ի՞նչ բան է կամ ո՞րն է այն յաւիտենականութիւնը՝ արտաքոյ ժամանակի և տարածութեան, որի անըմբռնելի ծալքերից բնութիւնը դուրս է կորզում բիւր բիւրոց կարելիութիւններէից մի չնչին մասնիկ — անօգնական, ողորմուկ մարդուն և կարճ ժամանակ բովելով նրան կեանքի հնոցում, ապա կրկին նետում նոյն անըմբռնելի յաւիտենականութեան խորունկ ծոցը: Ինչո՞ւ համար են նրան տրուած կեանքի այն մի քանի տարնեակ տարիները, որոնք անխուսափելի կերպով պէտք է հալուեն կեանքի մռայլ դառնութեան մրուրում: Եթէ, վերջապէս, մարդու անխուսափելի բաժինն է սոսկ տառապանքն ու մահը, ապա ինչո՞ւ ապրել, ապրել մի կարճ կեանք և յետոյ միռնել՝ հակառակ մարմնի և հոգու բուռն ցանկութեան. ինչո՞ւ այդ դաժան, անողորմ ճակատագրի դէմ չյայտարարել մի սոսկալի կռիւ՝ անգամ մահուան տագնապով, ինչո՞ւ չյաղթահարել նրան սեփական անձի ոչնչացմամբ...

Մարդկային հանճարեղ հոգու բողբոջ ու անհաշտ էութիւնը յաճախ է լարել իր բոլոր զօրութիւնն ու ջանքը՝ յուսահատուելով տանջող ու մաշող իրականութիւնից՝ պարզելու համար թիւրիմաց կեանքի տիեզերական առեղծուածը: Մանաւանդ մարդկութեան այդօրինակ տենդոտ ձգտումները շատ յաճախ արտայայտուել են կեանքի այն յուսահատ ճգնաժամերին, երբ ապրելը եղել է առաւել դառն, առաւել տաժանելի, երբ մարդկային հասարակական կեանքը՝ բարձրացած լքման գազաթնակէտին՝ թեակոխել է ձեերի փոխանցման տագնապալից շրջանները...

Մարդկային հասարակութեան տառապանքի դարը

եղել է խիստ երկար. իր մանկութեան որրանից սկսած նա ենթակայ է երկու տարրերի գոռ հարուածներին՝ բնութեան և մարդկութեան: Մարդկութեան հասարակական կեանքը այնպէս է եղել դասաւորուած, որ մարդը բնութեան օգտակար ոյժերը դարերի ընթացքում շահագործել է հէնց իր նման մարդու միջոցով: Մարդը մարդու ձեռքին դարձել է շահագործման զէնք. սեփական ձկունութեամբ ու տոկունութեամբ մէկի համար շատերը եղել են պատուանդան, հիմունք մի բուրգի, որի կատարին իրերի դասաւորութեամբ հանգիստ ու անխուով տեղ է գրաւել այդ մէկը: Եւ իրերի դրութեամբ հասարակական զանգուածը ինքեցիայով հետեւել է մէկերին և ինքը զառնալով պատուանդան՝ կասուցել է բուրգեր... Դարերը սնել ու խորացրել են այդ բուրգերի համասփիւռ արմատները: Բուրգը իր բարդ և ամրակուռ կառուցուածքով, իր շլացուցիչ փայլով ստեղծել է բազում նախապաշարմունքներ իր գոյութեան շուրջը. նախապաշարմունքների անթիւ շերտերը գոլորշիացրել են բուրգի հիմնական գաղափարը... Եւ մարդու այդ բիրտ ու վայրագ դաստակերտը՝ կորցնելով իր հարազատութիւնը, մոռացնելով իր ծագման սկզբնաաղբիւրը՝ դարձրել ու հուշակել է ինքն իրան արգասիք գերբնական զօրութեան, արգասիք՝ աստուածային գերագոյն, սրբազան կամքի... Եւ սակայն աստուածային ու գերբնական՝ բուրգերի վերին կողմանիստները իրանց գազաթնակէտով. ներքինն ու ստորինը — կրաւորական տարրեր... Կեղծութեան ու փարիսեցիութեան ծնունդ գաղափարներ... Վերինի ճիգն է՝ տառապող մարդկութեան ճակատագրի երասանակները իր ձեռքում ամուր բռնելը, սեփական երջանկու-

թեան, սեփական բարօրութեան սկզբունքը մարդկային զանգուածի թշուառութեան ու ապերժանկութեան վրայ զօրեղապէս ամրապնդելը: Այսպիսով և տիրապետող է դառնում սկզբունքը՝ շատերը մէկի համար և մէկը իրան համար: Սօցիալական արդարութեան անողոք հակոտնեան. մէկի երջանկութիւնը ամբողջովին հիմնուած բազմութեան դժբախտութեան վրայ, մէկի ձգտման ճանապարհը՝ փոռած շատերի դիակներով...

Եւ հասարակական կեանքի՝ սոսկ իր երկրային, աշխարհային բնութեամբ՝ զօրեղագոյն հակասութիւնները չէին կարող չունենալ շփման կէտեր, ուժեղ ընդհարումներ, իբրև արգասիք՝ ցասման հուժկու ժայթքումներ: Սօցիալական անարդարութեան դէմ այդօրինակ յախուռն բողոքները չէին կարող չանդրադառնալ դժգոհ տարբերի զաղափարական արտայայտիչների ուղեղում: Եւ սինտետիստ հանճարները, մտքի զօրեղ տիտանները տարիներով տքնել են մարդկային կեանքի կնճռոտ պրօբլէմների լուծման շուրջը: Այդպիսիներէց ոմանք մարդկային ազգի փրկութիւնը որոնում էին նոյն աշխարհային կեանքի մէջ, սակայն ոմանք էլ՝ յուսահատուելով անուղղելի կեանքից՝ դիմում վերացակա՞նութեանը:

Այդ վերջիններից՝ իբրև մտքի զօրեղագոյն տիտան հանդէս եկաւ նաև ուսական դէմօսի, գլխաւորապէս գիւղացիական հուժկու տարրի կօմօպօլիտ արտայայտիչ՝ Լէվ Նիկօլաեվիչ Տօլստօյը:

Հոգեկան խորունկ տրագիզիա կրող այն մտորումները, որոնք տարիներ շարունակ տանջել ու մաշել են Տօլստօյի ուղեղը, հասցրել են նրան ի վերջոյ համամարդկային խղճմտանքի ու ընդհանուր սիրոյ դօզմա-

տիկ սկզբունքներին: Սակայն մտատանջութիւններին, անվերջ մտորումների այն ուղիները, որոնցով նա հասել է այդ սկզբունքներին և որոնց նկարագրութիւնը մենք գտնում ենք նրա «Սոստօվանութիւն» գրքում, որի հայերէն թարգմանութիւնը այսու տալիս ենք հայ ընթերցողներին, պարզապէս երևան է հանում Տօլստօյի փիլիսօփայական խոկմանը ենթակայ երկու պրօբլէմ. մէկը՝ համաշխարհային, միւսը՝ տիեզերական. և մէկը միւսի աղբիւրն է. առաջինը պատճառ, երկրորդը՝ հետևանք:

Տօլստօյը իր ներքին կասկածների ու երերումների բուռն տարափի տակ՝ իբրև «կեանքի հարցեր» հրապարակ է նետում մարդուն յատուկ տառապանքի և ապա մահուան պրօբլէմները: Տառապանքը մարդուն ուղեկցում է ծնուած օրից մինչև կեանքի վերջին վայրկեանը, ապա նետում նրան մի յաւիտենականութեան գիրկը, որի ոչ սկիզբն է ըմբռնելի և ոչ վախճանը: Տառապանքը զուտ աշխարհային է, այսինքն կապուած՝ մարդու անհատական կեանքի հետ. մինչդեռ մահուան պրօբլէմի լուծումը կրում է տիեզերական բնոյթ, որով և նա որոշակի պէտք է տարբերուի իբրև առեղծուած:

Թէպէտ որքան էլ ծեծուած լինի տիեզերական առեղծուածի մութ հարցը, նա տակաւին հեռու է ամփոփ ու շօշափելի լինելուց, այնուամենայնիւ Տօլստօյը մտքի բարձր թռիչքներով շօշափում է նրա մի քանի տարրերը...

Հապա մարդկային կեանքի անվերջ տառապանքը, անվերջ թշուառութիւնը, որ դարեր շարունակ տանջել ու ստրկացրել է նաև մարդկային ուղեղը...

Ի՞նչպէս և ի՞նչ մտորումներով է մօտենում այս ծանրակշիւ հարցին Լ. Տօլստօյը, ահա ծանրութեան այն կենտրօնը, որի մասին ապրումների մի առանձին թափով պատմում է նա իր նշանաւոր «Սոստովանութեան» մէջ: Թէև Տօլստօյի այդ գրուածքը ըստ ձևի կրում է սոսկ սուբեկտիվ բնաւորութիւն, սակայն նրա անհատական վերապրումները անպայման պէտք է համարել յատուկ բոլոր մարդկանց: Իբրև հանճար նա տարրալուծել էր իր մէջ բազմաթիւ անհատներ... Կեանքի և մահուան ճշմարտութիւնները որոնելիս Տօլստօյը վերապրել է ծայրայեղօրէն յուսահատ վայրկեաններ: «Նոյն իսկ,—ասում է նա իր «Սոստովանութեան» մէջ,—ես անկարող էի ցանկալ ճշմարտութիւնը իմանալու, որովհետև գուշակում էի, թէ ինչո՞ւ պիտի կայանայ այն: Ճշմարտութիւնը այն էր, որ կեանքը անմտութիւն է: Ես կարծես ապրել եմ ու ապրել, գնացել եմ ու գնացել և ապա եկել հասել անդունդին. պարզօրէն տեսնում էի, որ առջև ոչինչ չկայ՝ բացի կորստից: Եւ կանգ առնել չէ կարելի, և յետ գնալ, և աչքերը փակել չէ կարելի՝ չտեսնելու համար որ առաջդ ոչինչ չկայ, բացի տառապանքներից ու իսկական մահից —կատարեալ ոջնցացումից»: Ճշմարտութիւնը իմանալու համար նա դիմում է գիտութեանը, դիմում է պրօգրէսսին, սակայն բաւարար պատասխան նա չէ ստանում: Նրա ուղեղը մաշում է այն հարցը, թէ մարդուն տրուած է կեանքի մի այնպիսի իմաստ, որով նա կապուած լինէր տիեզերքի հետ ոչ միայն իր գոյութեամբ ժամանակի և տարածութեան մէջ, այլ և յաւիտենականութեան մէջ: Մարդկային կեանքի տանջալից կերպարանքը իր բուժումը, ըստ Տօլստօյի, չէր կարող

գտնել համաշխարհային տառապանքի իրական ոչնչացմամբ ժամանակի և տարածութեան մէջ: Պրօգրէսսը, առաջադիմութիւնը Տօլստօյի համար պալլիատիվ տարր էր. նրա երկու ողբերգական դէպքերի ակնաստես լինելը—Պարիզում մահուան պատիժը, իսկ այստեղ իր խելացի, բարի և երիտասարդ եղբօր տանջալից, դանդաղ մահացումը—բաւական էր, որ պրօգրէսսը նրա համար դառնար նախապաշարմունք:

Դէպի անվերջ տառապող դէմօք մի առանձին ատէր ունենալով, գրեթէ ձուլուելով նրա հետ, Լ. Տօլստօյը ամբողջ էութեամբ տարուեց վերջինիս փրկութեան գաղափարով: Ժխտելով պրօգրէսսի դրական դերը մարդկային ընդհանուր ազատագրման տեսակէտից, նա ժխտում էր և գիտութեան դերը, ընդունելով, սակայն, որ գիտութիւնը ունի իր յատուկ հարցերն ու պատասխանները, բայց կեանքի խնդիրների վերաբերութեամբ նա լուր է և անպատասխան: Պրօգրէսս, գիտութիւն, գեղարուեստ—սրանք շատ շուտով յայտարարուեցին անբաւարար ու կեանքի հարցի հետ ոչ մի առնչութիւն չունեցող, ուստի և մնում էր Տօլստօյին դիմել կրօնին՝ զտուած ամեն նախապաշարումից և աւելորդ բալլաստից՝ և այնտեղ որոնել բացատրութիւն՝ մարդկային անհատական կեանքը յաւիտենականութեան հետ կապող սկզբունքի մէջ...

Սակայն կրօնական ձեռկերպումներով հնարաւոր էր փրկել մարդկային կեանքը ներքին կրակոտ հակասութիւններից, որոնք պատմական անհրաժեշտութեամբ դանդաղօրէն զարգանում են ու քարշ տալիս իրանց հետ և՛ պրօգրէսսը, և՛ գիտութիւնը, և՛ գեղարուեստը, և՛ նոյն ինքն կրօնը... Հնարաւոր է երբեքից կրօնա-

կան ձևակերպումներով հանգցնել դասակարգային անտազօսիզմը, կոիւրը: Կարելի է սրտի և զգացմունքի թելադրանքներով դադար տալ այն վայրագութիւններին, որոնք այդ պայքարի մէջ ծնվում ու սնվում են շահագործման ու բռնութեան սկզբունքներով: Տօլստօյը մի առանձին հակումն չէր ցոյց տալիս զբաղվելու սօցիալակսն և պատմական այդ խնդիրների քննութեամբ և վերլուծութեամբ: Միտքն ու խելքը նա բաւական չէր համարում լուծելու կեանքի հարցերը. դրանց լուծման գործում առաջնակարգ դերը սրտին և զգացմունքին էր պատկանում: Եւ երբ նա շրջապատող իրականութեան այլանդակ կերպարանքի բուժումը որոնում էր կրօնական դաւանանքի մէջ, ապա անշուշտ սրամաքանական հետևողականութեամբ պիտի կանգ առնէր անհատի ինքնակատարելագործութեան սկզբունքի վրայ. ճիշտ այնպէս, ինչպէս արել էին Բուդդան, Կօնֆուցիոսն ու Քրիստոսը: Մեծ էին այդ մարդիկ, նոյն և Տօլստօյը, իբրև մարդկութեան խղճատանքի մաքուր տիպարներ. սակայն նրանց վարդապետութեան խոշոր միջուկը այն էր, որ նրանց այդ ուսմունքը չէր պարունակում իր մէջ գործնականութեան տարրը: Ժխտել կուրտուրան, ժխտել գիտութիւնը, ժխտել գեղարուեստը, ժխտել վերջապէս այն ամենը, ինչ որ այժմ գոյութիւն ունի մեր բռնութեան ու շահագործման դարերում, նշանակում է քարոզել ապագայ ազբատութեան և ողորմելիութեան ուսմունքը: Ժխտել գեղարուեստն ու կուլտուրան՝ ըստ իս՝ նշանակում է ժխտել, ոչնչացնել այն զէնքը, որով հէնց Տօլստօյը Տօլստօյ դարձաւ, որի անտաշ քանքարի նրբացնող ու յղկող գործիքը, զէնքը եղաւ...

Սակայն ինչո՞ւ ժխտել այդ բոլորը:
 «Հասարակ դանակը աւազակի ձեռքում անարեկման միջոց է, իսկ խիրուրդի ձեռքում՝ փրկարարը...» — ասել էինք մենք մի անգամ: Կուլտուրան, գիտութիւնն ու գեղարուեստը, ինչպէս և մարդկային գանգուածի ստուար մասը բռնութեան շղթաների մէջ են. կը գայ ժամանակ և վերջինիս հետ կազատագրուել նաև գիտութիւնը: Եթէ բռնակալի և շահագործողի ձեռքում գիտութիւնը այսօր օժանդակ դեր է խաղում նրա համար. եթէ գեղարուեստը սեփականութիւն է սոսկ մեծատուններին, նոյն շահագործողներին. եթէ կեանքի ամեն բարիք, բժշկութիւնն ու կուրօրտ, ցնծութիւնն ու բերկրանք՝ ամեն ինչ ծառայում է այդ մեծատուններին, ապա դա յաւիտեանական երեոյթ չէ. դա միայն խիրուրդի ձեռքում լինելիք այն փրկարար դանակն է, որ տակաւին աւազակի ձեռքին է գտնվում...
 Ինչպէս Բուդդայի, Կօնֆուցիոսի և Քրիստոսի, նոյն և Տօլստօյի ուսմունքը մեզ փոխադրում է մի այլ աշխարհ, որտեղից սպասում է մեր փրկութիւնը. մեր անհատական կեանքը՝ ժամանակի և տարածութեան մէջ ըմբռնելի՝ նրանք ճգնում են վերլուծել յաւիտեանականութեան և անվախճանականութեան հետ շղկապած: Ուստի և այդ խոշոր ու լայնամիտ պրօբլէմի լուծման խնդիրը վերացրել էր նրանց՝ էական կեանքից: Նրանք թողին մեր իրական յօշոտուած կեանքը, թողին ցաւ ու տառապանքների բուժումը իրական սպեղանիով ու դիմեցին վերացական կեանքի սաւառնումներին...
 Ինչո՞ւ: Կեանքը շատ շուտով յոռետես էր դարձրել նրանց...

Բնութեան անողոր հարուածները, որոնց առջև մարդը խղճուկ ու անպաշտպան էր, նրա անվերջ արհաւիրքները, որոնք անխղճօրէն խորատակում են նոյն իսկ մարդկութեան խոշորագոյն հատուածներ. իսկ ներքին հասարակական կեանքը՝ լի դառնութիւններով ու անբուժելի ցաւերով... Դաժան, մռայլ իրականութիւն: Ո՞ւր գնալ, ո՞ր կողմը նետուել՝ փրկութիւն հայցելու. մարդկային հասարակական կեանքը՝ իր միանգամայն անմխիթար և անուղղելի վիճակով՝ մի սոսկալի, տաժանելի ժխոր է, մի խաւար ու մռայլ ստորերկրեայ անդուռն անձաւ: Զկայ ելք, չկայ փրկութիւն, չկայ և յոյս:

Ո՞ւր գնալ. ի՞նչ անել:

Եւ կեանքից յուսահատողները, նրա վերածնութեան վրայ յոռետեսութեամբ նայողները բնականաբար իրանց յոյսն ու հայեացքը պիտի հեռացնէին կեանքի իրականութիւնից դուրս:

Յոռետես էր Տօլստօյը, երբ նա որոնում էր տեղ՝ փրկութեան խարխիւլը գցելու համար: Երկար ժամանակ չգտնելով սակայն այդ յենակէտը, նա քանիցս վճռում է վերջ տալ աննպատակ կեանքին անձնասպանութեամբ: Բայց բանականութիւնը, որ շարունակ կռիւ էր մղում նրա սրտի և զգացմունքի թելագրանքների դէմ, ի վերջոյ փրկեց նրան այդ անհետեանք, անօգուտ վճռից: Եւ որովհետեւ Տօլստօյը պրօգրէսսի, գիտութեան, սօցիալական, տնտեսական կեանքի ձեւփոխութիւններին չէր հաւատում, ուստի և նա իր փրկութեան խարխիւլը նետեց միատէք մտորումների ու վերացական մտքերի կենտրօնը, որտեղ անբացատ-

րելի ու անորոշ յենարանների վրայ բազմել էր Աստուծու զաղափարը...

Եւ յոռետես Տօլստօյը վերածնուեց. նա գտաւ Աստուծուն, որը իբրև վեհագոյն ոյժ՝ միմիայն հնար ունի ազատագրելու մարդկութիւնը թշուառ ու նողկալի պայմաններից: Անհատը ինքը պիտի փրկէ իրան՝ աստուածային սկզբունքը իր մէջ արտայայտելով:

— Ի՞նչ եմ ես. ինչո՞ւ եմ ապրում. ի՞նչ կապ՝ իմ և տիեզերքի միջև, ի՞նչ նպատակ յաւիտենականութիւնից իմ գալու և կարճ ժամանակից յետոյ կրկին նրա խոր ծոցը ընկղմուելու մէջ, — անընդհատ կրկնում է Տօլստօյը խորին մտատանջութեամբ:

Հարցեր՝ տաղնապալից ու տանջող, որոնք կրկին շօշափում են տիեզերական առեղծուածի տարրերը, շողկապուած անհատական կեանքին որևէ իմաստ հարդրելու հետ: Մարդկային կեանքի սօցիալական անարդարութիւնների դէմ իր հուժկու բողոքը հնչեցնելուց և հասարակական «բուրգերի» գոյութեան սկզբունքը երերուն յայտարարելուց յետոյ (այդ անսակէտից Տօլստօյը իրաւամբ անիշխանական է), նա իր հայեացքը ուղղում է կեանքի նպատակի (նչ վախճանական) հարցը լուծելու խնդրին, կրկին և կրկին ընկնելով ուղեղը այրող մտորումների հակասական ժխորի մէջ: Եւ վերացական՝ իր համար մատչելի՝ եթերում երկար մտատանջութիւններից յետոյ Տօլստօյը լուծեց սեփական բանականութեան առջև այն սկզբունքը, որով ինքն իրան շողկապում էր յաւիտենականութեան հետ, իբրև անբաժան տարր տիեզերական կեանքի, որ բարձրագոյն ու բացարձակ ճշմարտութեան — Աստուծու — կամքը կատարելու նպատակով յաւիտենականից գա-

լիս է լոյս աշխարհ, ապա կրկին անցնում գնում նոյն տեղը...

«Միակ իմաստը, որ իր մահկանացու լինելը չը մոռացող մարդը կարող է հաղորդել կեանքին, դա այն է, որ նա ինքնուրոյն էակ չէ, այլ սոսկ Աստուծու կամքի գործիքը»:

Եւ քանի որ մարդկային կեանքը մի ժամանակաւոր երևոյթ է՝ ժամանակով ու տարածութեամբ անվախճան տիեզերքում, ուստի և կարիք չկայ մարդուն առանձնապէս կենտրոնանալու այս անցաւոր աշխարհի կեանքի կարգաւորման մասին: «Եթէ դա այդպէս է,—ասում է Տօլստօյը,—ապա ակնյայտնի է, որ սեփական կեանքի կարգաւորման համար ապրելը խենթութիւն է»...

«...Տիեզերքի մէջ մարդու իր կացութիւնը պարզ ըմբռնելումն է, որ բացվում է նրա առջև ճշմարիտ հաւատքը գէպի Աստուած և նրա օրէնքը: Իր կացութեան այս գիտակցութիւնից ըստ ինքեան ըզխում է՝ հնազանդութիւն Աստուծու կամքին, բոլոր մարդկանց հաւասարութիւնը ճանաչելը, սիրելն ու ծառայելը նըքանց, նոյնպէս և կեանքի հիմնական օրէնքները. անել ուրիշին այն, ինչ որ կը ցանկաս որ քեզ անեն»:

Այնուամենայնիւ նրա համար կայ մի նպատակ, որ իրագործել է պէտք հէնց այս անցաւոր կեանքում. և դա, ըստ Տօլստօյի, անհատի ներքին կատարելագործման արգասիքը կը լինի, անկախ՝ կեանքի արտաքին միջավայրի այս կամ այն բնոյթից. այդ նպատակը՝ «ինձ համար մատչելի նպատակը՝ համայն աշխարհի երջանկութիւնն է...»: Այստեղ անհրաժեշտօրէն շեշտում է ի նկատի ունենալ քրիստոնէական հինգ պատուիրաններն ևս. մի՛ բարկանա, մարմնական ցանկու-

թիւնների անձնատուր մի՛ լինի, մի՛ երդուիր, բռնութիւն գործ մի՛ դնիր և սիրիւր թշնամիներիդ և այլն, և այլն, և այլն...

Սակայն ի՞նչ:

Յօշոտուած, արիւնաքամ մարդը կեանքի մօայլ, հիւժող պայմաններում երբէք չի դարմանուի բարոյական ինքնակատարելագործութեան փորձով. յօշոտուածը յօշոտուած կը մնայ, կեանքն ու պայմանները՝ մռայլ ու դաժան: Մութ տանջարանների, գետնափոր բանտերի, քարէ տուրքակների ու կախաղանների խորտակումը կրօնական ձեւերպումների և անհատի բարոյական ինքնակատարելագործութեան գործը չէ, այլ կենսունակ ոյժերի անընդհատ, ակտիվ գործունէութեան՝ կեանքի համապատասխան պայմաններում: Իսթան, սպանիչ, հեղձուցիչ միթնոլորտում շօշափելի օդ, թարմացուցիչ թթուածին կուղեն. փիլիսօփայական հառաչանքը այդ պարագայում ոչ թէ թարմացուցիչ, այլ միմիայն թմրեցուցիչ կը լինի...

Հնարաւոր է վէրքը բժշկել ազօթքներով ու աղերսանքներով, երբ նրա բորբոքուած, պալարուած կերպարանքը նիւթական սպեղանի է պահանջում: Նոյնը չէ՞ միթէ սօցիալական օրգանիզմի ցաւ. ու տառապանքը, խեղդիչ, ապականիչ կերպարանքը, որ դառնացնում է մարդու օրն ու արեւը:

Ո՞ւր է այն վերին արգարութիւնը, այն անծայրածիր սիրող էակը, ամենատես ու ամենակարող նախախնամութիւնը, որը իբրև այդպիսին (տրամաբանօրէն դատելով) շօշափելի կերպով արտայայտէր իր գոյութիւնը, կեանքի գարշապարը լիզող, իրականութեան նողկալի յատակում սողոսկող մարդկային ստորին զան-

գուածի դառնակոտոջ վայնասունն ու հառաչանքը, արիւն ու արցունքի շառագունուած մթնոլորտում սգաւոր մայրերի, անօգնական որբերի ողբն ու լացը յաճախ և յաճախ մինչև երկինք է հասնում. երկինք է հասնում վայրագ կոտորածների զոհերի գանգերից ու ոսկորներից դիզուած սարսուլի բուրգը... Մակայն, աւանդ... լավում է արդարութիւն պահանջող կոծն ու հառաչանքը, դարմանվում է կեանքի նեխուած մրուրը քամող լքուածների վիրաւոր մարմինը... Օ՛, մարդ, մարդ, վերացական եթերում դու խղճուկ մարդ, որ՛ ստեղծելով քո վերացական Աստուծուն՝ դու քո ամբողջ էութեամբ ձգտում ես նրան անմատչելի եթերում պահել, որպէս զի շօշափելի իրականութեան մէջ դու նւրան չարաչար կերպով չտապալես...

Տիեզերական առեղծուածի լուծման պրօցէսը ամենից առաջ պիտի ունենայ մի կարևոր էտապ. դա այն է, որ մենք նախ պէտք է ամոքենք մեր լքուած մարմինը, ապա իրական կեանքի բարձր ձևերի ներդաշնակ հնչիւններով ձգտենք լուծելու վախճանականի և անվախճանականի, այլ և ժամանակաւորի և յաւիտենականութեան յարաբերականութիւնը, ձգտենք լուծելու վերջապէս տիեզերական բարդ առեղծուածը...

«Ես վատ և անմխտ կերպով ապրեցի, այնպէս՝ ինչպէս բոլորը. բայց յետոյ՝ զրեթէ երեսուն տարի սրանից առաջ պարզուեց իմ առջև ճշմարտութիւնը, և այն օրից իմ կեանքը փոխուեց, դարձաւ խաղաղ, երջանիկ, ուրախ, և քանի գնում, քանի նա մօտենում է մահուան, այնքան լաւանում»:

Չպէտք է մոռանալ, որ այս սողերը Տօլստոյը գրել է 1905 թուին: Թէ՛ որքան խաղաղ, երջանիկ և

26.11.02-8984
 522

ուրախ է եղել նրա կեանքը, այդ սակայն երևան եկաւ 1910 թուին, երբ ութսուներկուամեայ փրիլիսօփան՝ ձմերային մի սառնամանիք օր՝ թօթափեց իր ստների փողին Եասնայա Պօլեանայում և մի առանձին տենդով հեռացաւ, գնաց «խաղաղ ու երջանիկ» համարուած կեանքից...

Ինչո՞ւ գնաց. երևի, դառն էր այն կեանքը, որ նա համարել էր դրական ու օրինակելի:

Թւում է, սակայն, որ ծերունագարդ հանձարը ոչ թէ հեռացաւ իր կեանքին նոր իմաստ հաղորդելու նպատակով, ոչ, այլ՝ կեանքի նկատմամբ առհասարակ իր ստեղծած իմաստի համապատասխան իր կեանքը նորոգելու համար...

Վերացական էակի նկատմամբ իր ձևակերպումները դարձան նրա համար պատգամներ. պէտք է բաժանուէր կեանքից, քանի որ նա իր անձը կապել էր Աստուծու զաղափարին, ձուլուելով նրա հետ... «Աստուած՝ դա անսահմանն է այն ամենի, ինչ որ ես իմ մէջ գտնում եմ սահմանափակ. ես՝ մարմին եմ սահմանափակ, Աստուած՝ մարմին է անսահման. ես՝ էակ եմ 63 տարի ապրող, Աստուած՝ էակ է յաւիտեան ապրող. ես՝ էակ եմ իմ ըմբռնողութեան սահմաններում մտածող, Աստուած՝ էակ է անհզր մտածող. ես՝ էակ եմ երբեմն մի փոքր սիրող, Աստուած՝ էակ է անձայրածիր սիրող: Ես՝ մասն եմ, Նա՝ ամբողջ: Ես ինձ չեմ կարող այլ կերպ ըմբռնել, քան՝ որպէս Նրա մասը»:

Ըստ որում՝ Աստուած մարդու սոսկալի հակադրութիւնն է... մարդը սահմանափակ, Աստուած՝ անսահման. և երբ սահմանափակ մարդը իր աւագահատիկի մեծութեան արդարասիրութեամբ կարող է զգալի

ՀԱՄԱՐ

գլխարտութեան օրինակը ցոյց տալ, Աստուած, որ ան-
ասհման է այդ պարագայում ևս, անարդարութիւնը ան-
շուշտ պէտք է անմիջապէս ջնջէր երկրի երեսից...

Եւ Տօլստօյը մահուան գաղափարը ոչնչացնելու
համար գտաւ այն Աստուծուն, որի հետ շաղկապելով
իր ժամանակաւոր անձը՝ դարձաւ յաւիտենական: Այդ-
պէս՝ ըստ ամենայնի շօշափելով տիեզերական առեղ-
ծուածի որոշ տարրը միայն, նա կանգ առաւ այնտեղ,
որտեղ ստիպուած եղաւ խոստովանել. «...Վախճանա-
կան նպատակի նկատմամբ ես ոչինչ իմանալ չեմ կա-
րող...»:

Եւ այդպէս՝ որքան էլ սակայն գործնականութեան
տարրից զուրկ լինեն Բուդդայի, Կօնֆուցիոսի, Քրիս-
տոսի, նոյն և Տօլստօյի վարդապետութեան հիմնական
գաղափարները, այնուամենայնիւ մեծ են նրանք. մեծ
է և Տօլստօյը սօցիալական արդարութեան ջերմագին
քարոզով, մեծ է՝ ճշմարտութեան անընդհատ որոնու-
մով, մաքուր ու անկեղծ եղբայրսիրութեան, հաւասա-
րութեան դաւանանքներով, մեծ է համամարդկային
խղճմտանքի մարմնացման իր վեհ պատկերով...

ՍՈՒՐԽԱԹԵԱՆ

Թիֆլիս, 8 յունուարի 1911 թ.

Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

I

Ես մկրտուել ու գաստիարակուել եմ քրիստոնէա-
կան ուղղափառ դաւանանքով: Ինձ սովորեցնում էին
այն՝ իմ մանկութեան ու պատանեկութեան ամբողջ
ընթացում: Սակայն երբ տասնութամեայ հասակումս
դուրս եկայ համալսարանի երկրորդ կուրսից՝ ես այլևս
չէի հաւատում և ոչ մի բանի այն ամենից, ինչ որ
ինձ սովորեցրել էին:

Դատելով մի քանի յիշողութիւններով՝ ես լրջօրէն
երբէք էլ չեմ հաւատացել, այլ միայն հաւատ եմ ու-
նեցել դէպի այն, ինչ սովորեցնում էին ինձ և որը իմ
առջև դաւանում էին մեծերը. սակայն այդ հաւատը
եղել է չափազանց խախուտ:

Յիշում եմ, երբ ես մօտ տասն-մէկ տարեկան
էի, ինչպէս գիմնադիւանդում սովորող մի երեխայ, Վօլօ-
դենկա Մ.-ն, որը վաղուց վախճանուած է, գալով մեզ
մօտ մի կիրակի օր՝ իբրև վերջին նորութիւն՝ յայտ-
նեց բոլորիս գիմնագիծում արուած մի գիւտի մասին:
Պիւտը կայանում էր նրանում, որ Աստուած չկար, և
այն ամենը՝ ինչ որ մեզ սովորեցնում են՝ հնարովի
բաներ են (դա տեղի ունեցաւ 1838 թուին): Յիշում

եմ, թէ ինչպէս իմ մեծ եղբայրները հետաքրքրուեցին այդ նորութեամբ, կանչեցին ինձ խորհրդի, և մենք բոլորս, յիշում եմ, խիստ կենդանացանք և այդ լուրը ընդունեցինք որպէս մի շատ ուշադրաւ և չափազանց նշանաւոր բան:

Յիշում եմ նոյնպէս, թէ ինչպէս՝ երբ իմ մեծ եղբայր Դիմիտրին համալսարանում եղած ժամանակ յանկարծ իրան յատուկ խանդոտութեամբ անձնատուր եղաւ կրօնին ու սկսեց յաճախել բոլոր ժամերգութիւններին, պաս պահել, վարելով մաքուր ու բարոյական կեանք, մենք բոլորս, նոյն իսկ մեծերը, անդադար ծաղրի էինք ենթարկում նրան և, չգիտեմ ինչու, անունը դրել էինք Նոյ:

Յիշում եմ, Կազանի համալսարանի այն ժամանակուայ հոգաբարձու Մուսին-Պուշկինը, որը մեզ իր մօտ պարելու էր հրաւիրում, վերջինից հրաժարուող եղբօրս համոզում էր նրանով, որ Դաւիթն էլ պարելիս է եղել տապանի առջև: Ես այն ժամանակ համակրում էի մեծերի այդ կատակներին և դրանցից եզրակացնում էի, որ վարդապետարանը սովորել պէտք է, եկեղեցի գնալ պէտք է, սակայն այդ բոլորը լուրջ ընդունել պէտք չէ: Յիշում եմ նոյնպէս, որ Վօլտերին ես կարգացել եմ շատ երիտասարդ հասակումս, որի ծաղրանքները ոչ միայն ինձ չէին վրդովում, այլ և չափազանց զուարճացնում էին:

Իմ հրաժարումը դաւանանքից տեղի ունեցաւ իմ մէջ այն ձևով, որով կատարվում էր և այժմ էլ է կատարվում մեր կրթութեան աստիճանի մարդկանց մէջ: Իմ կարծիքով, դա մեծ մասամբ տեղի է ունենում հետևեալ կերպով. մարդիկ ապրում են այնպէս, ինչ-

պէս բոլորն են ապրում, իսկ բոլորը ապրում են այն սկզբունքների հիման վրայ, որոնք ոչ միայն ընդհանուր ոչինչ չունեն դաւանաբանութեան հետ, այլ և մեծ մասամբ հակադիր են նրան: Դաւանաբանութիւնը կեանքի մէջ գործօն մասնակցութիւն չունի, և ուրիշ մարդկանց հետ ունեցած յարաբերութիւնների ժամանակ նրան բաղխուելու և հէնց անձնական կեանքում երբէք հաշուի առնելու կարիք չէ լինում: Այդ դաւանաբանութիւնը դաւանվում է ինչ-որ մի տեղ, կեանքից հեռու, նրանից անկախ: Եթէ բաղխվում էլ ես նրա հետ, ապա բաղխվում ես սոսկ իբրև մի արտաքին, կեանքի հետ ոչնչով չկապակցուած երևոյթի հետ:

Մարդու կեանքից կամ նրա գործերից՝ ինչպէս այժմ, այնպէս էլ այն ժամանակ, անհնարին է իմանալը՝ հաւատացող է նա թէ՞ ոչ: Թէկուզ եթէ լինի էլ որևէ տարբերութիւն ուղղափառութիւնը բացարձակ դաւանողի և ժխտողի միջև, այնուամենայնիւ դա յօգուտ առաջինի չէ: Ինչպէս այժմ, այնպէս էլ այն ժամանակ՝ բացարձակօրէն ուղղափառութիւն ճանաչելն ու դաւանելը յստուկ էր գլխաւորապէս այն մարդկանց, որոնք բուժ են ու դաժան և իրանք իրանց սակայն խիստ նշանաւոր համարող: Իսկ խելքը, ազնուութիւնը, շիտակութիւնը, բարեմտութիւնն ու բարոյականութիւնը երևում էին մեծ մասամբ այն մարդկանց մէջ, որոնք իրանց համարում էին չհաւատացող:

Դպրոցներում սովորեցնում են վարդապետարան և աշակերտներին ուղարկում եկեղեցի. պաշտօնեաներից պահանջում են հաղորդման վկայականներ: Սակայն մեր շրջանի մարդը, որը այլևս չէ սովորում ու պետական ծառայութեան մէջ չէ զտնվում, հէնց այժմ

էլ — իսկ հնումը առաւել ևս — կարող է տասնեակ տարիներ ապրել առանց երբէք յիշելու, որ նա գտնվում է քրիստոնեաների մէջ և ինքն ևս համարվում քրիստոնէական ուղղափառ հաւատը դաւանող: Ըստ որում ինչպէս այժմ, այնպէս էլ առաջ հաւատարմութեամբ ընդունուած և արտաքին ճնշումով պահպանուած դաւանաբանութիւնը աստիճանաբար հալվում է գիտութեան ազդեցութեան և կեանքի փորձերի ներքոյ, որոնք դաւանաբանութեանը հակադիր են. և մարդ շատ յաճախ ապրում է, երևակայելով թէ նրա մէջ իբր ամբողջացուած մնում է այն դաւանանքը, որը նրան հաղորդել են մանկութիւնից, մինչդեռ վաղուց արդէն նրա հետքն անգամ չէ մնացել:

Ինձ Ս.-ն՝ մի խելացի և շիտակ մարդ՝ պատմում էր, թէ ինչպէս նա հաւատալուց դադարել է: Քսանվեցամեայ հասակում մի անգամ նա, որսորդութեան ժամանակ, քնելուց առաջ երեկոյեան՝ մանկութիւնից մնացած ըստ հին սովորութեան՝ կանգնում է աղօթքի: Նրա հետ որսի դուրս եկած մեծ եղբայրը խոտերի վրայ պռոկած դիտելիս է եղել եղբօրը: Երբ Ս.-ն աւարտում է աղօթքն ու պռոկում՝ եղբայրը նրան ասում է. «Եւ դու դեռ շարունակում ես անել այդ»:

Եւ նրանք էլ ոչինչ չխօսեցին իրար հետ: Այն օրից Ս.-ն դադարում է աղօթելուց և եկեղեցի գնալուց: Եւ ա՜հ երեսուն տարի է, որ ոչ աղօթում է, ոչ հագորդում և ոչ էլ եկեղեցի յաճախում: Եւ դա ոչ այն պատճառով, որ իմանալով իր եղբօր համոզմունքները՝ նա միացաւ նրան, ոչ նրա համար, որ իր մտքում որեւէ վճիռ կայացրեց, այլ սոսկ այն պատճառով, որ եղբօր խօսքերը մատի մի թեթև զարկէին այն պարս-

պին, որը պատրաստ էր կործանուելու հէնց իր սեփական ծանրութիւնից: Կարծես դա մի մատնանշութիւն լինէր այն հանգամանքի վրայ, որ այնտեղ, ուր նրա կարծիքով հաւատ կար, վաղուց արդէն դատարկ տեղ է մնացել, ուստի և այն քառերը, որ նա արտասանում է, այն խաչակնքումներն ու երկրպագութիւնները, որ նա անում է աղօթքի կանգնելիս, կատարելապէս անմիտ գործողութիւններ են: Գիտակցելով զրանց անմտութիւնը՝ նա չէր կարող այլ ևս շարունակել այն:

Իմ կարծիքով այդպէս է եղել և լինում մարդկանց մեծամասնութեան հետ: Ես ասում եմ մեր կրթութեան տէր մարդկանց նկատմամբ, այն մարդկանց, որոնք շիտակ են իրանք իրանց հետ, և ոչ այն մարդկանց մասին, որոնք հաւատի առարկան դարձնում են միջոց՝ իրանց ժամանակաւոր նպատակներին հասնելու համար: (Այդ մարդիկ ամենաարմատական չհաւատացողներն են, որովհետեւ երբ դաւանանքը նրանց համար միջոց է՝ կենցաղավարական որեւէ նպատակների հասնելու համար, ապա դա անշուշտ այլ ևս հաւատք չէ): Մեր կրթութեան տէր այդ մարդիկ գտնվում են այն դրութեան մէջ, ուր գիտութեան և կեանքի լոյսը արդէն վառել է արհեստական շէնքը, և նրանք կամ նշմարել են այն և տեղ բացել, կամ տակաւին չեն նշմարել:

Մանկութիւնից ինձ հաղորդուած դաւանաբանութիւնը անյայտացաւ իմ մէջ ևս այնպէս, ինչպէս ուրիշների մէջ, սակայն այն տարրերութեամբ, որ ես տամսհինգամեայ հասակումս սկսեցի կարդալ փիլիսոփայական գրուածքներ, ուստի և իմ հրաժարումը դաւանանքից շատ վաղ դարձաւ գիտակցական: Տասնվեցամեայ հասակումս ես դադարեցի աղօթելուց և սե-

փական դրդմամբ՝ եկեղեցի յաճախելուց ու հաղորդուե-
լուց: Ես չէի հաւատում այն բանին, որը ինձ հաղորդել
էին մանկութիւնից, բայց ես յամենայն դէպս հաւա-
տում էի ինչ-որ մի բանի: Բայց ի՞նչ բանի էի հաւա-
տում՝ ես ոչ մի պարագայում ասել չէի կարող: Հաւա-
տում էի նաև Աստուծուն, կամ աւելի շուտ՝ Աստուծուն
չէի ժխտում, սակայն սրբաբան Աստուծուն՝ այդ ևս ա-
սել չէի կարող: Չէի ժխտում նաև Քրիստոսին և նրա
ուսմունքը, սակայն ինչո՞ւն էր նրա ուսմունքը՝ այն
ևս ասել չէի կարող:

Յիշելով այժմ այն ժամանակը, ես պարզօրէն
տեսնում եմ, որ իմ հաւատքը, դաւանանքը — այն, որը
բացի իմ կենդանական բնազդներից առաջ էր մղում
իմ կեանքը — իմ միակ ճշմարիտ դաւանանքը այն ժա-
մանակ՝ կատարելագործման դաւանանքն էր: Սակայն
ինչո՞ւն էր կայանում այդ կատարելագործումը և ինչ
էր նրա նպատակը՝ ես չէի կարող ասել: Ես ճգնում էի
կատարելագործուել մտաւորապէս, ես սովորում էի ա-
մեն բան, ինչ կարողանում էի և դէպի որը կեանքը
ինքն էր ինձ դրդում. ես ճգնում էի կատարելագործել
իմ կամքը, կազմում էի ինձ համար որոշ կանօններ,
որոնց և աշխատում էի հետևել, կատարելագործում էի
ինքս ինձ Ֆիզիքապէս, ամեն տեսակ վարժութիւն-
ների միջոցով զարգացնելով ոյժ ու ճարպիկութիւն և
ամեն զրկանքներով ընտելացնում ինձ դիմացկունու-
թեան և համբերութեան: Եւ այս ամենը ես համարում
էի կատարելագործումն: Ամեն ինչի սկիզբը, ի հարկէ,
բարոյական կատարելագործութիւնն էր, սակայն շու-
տով նա փոխուեց ընդհանուր կատարելագործութեան,
այսինքն՝ փոխուեց ոչ թէ իմ կամ Աստուծու առջև

առաւել լաւ լինելու ցանկութեան, այլ՝ ուրիշ մարդ-
կանց առջև: Եւ մարդկանց առջև լաւ լինելու ձգտումը
շատ շուտով փոխուեց ուրիշներից աւելի ուժեղ, այ-
սինքն ուրիշներից աւելի փառաւոր, նշանաւոր և ա-
ւելի հարուստ լինելու ցանկութեան:

II

Երբեկից ես կը պատմեմ իմ կեանքի պատմու-
թիւնը, որ և՛ յուզիչ է, և՛ ուսանելի իմ երիտասար-
դական այդ տասը տարիներում: Կարծում եմ, որ շատ
շատերն են զգացել նոյնը: Ես ամբողջ հոգով կամեցել
եմ լինել լաւ. սակայն ես երիտասարդ էի, ունէի կըր-
քեր, և երբ փնտռում էի լաւութիւն՝ ես մնում էի
միայնակ, միանգամայն միայնակ: Իւրաքանչիւր ան-
գամ, երբ փորձում էի արտայայտել այն ամենը, ինչ
որ կազմում էին իմ ամենասրտագին ցանկութիւնները,
այն է՝ որ ես կամենում էի բարոյապէս լաւ լինել, ես
հանդիպում էի արհամարհանքի և ծաղրի, բայց հէնց
որ անձնատուր էի լինում ստոր կրքերի՝ ինձ գովում
ու խրախուսում էին:

Փառասիրութիւն, իշխելասիրութիւն, ընչաքաղ-
ցութիւն, հեշտասիրութիւն, հպարտութիւն, բարկու-
թիւն, վրէժխնդրութիւն — սրանք բոլորը յարգվում էին:

Անձնատուր լինելով այդ կրքերին՝ ես նմանում
էի մեծերին և զգում էի, որ ինձանով գոհ են: Իմ
բարի հորաքոյրս՝ մի մաքուր արարած, որի հետ ես
ապրում էի՝ միշտ ինձ ասում էր, թէ նա ոչինչ աւելի

չէր ուզենայ, քան այն, որ ես կապ ունենայի մի ամուսնացած կնոջ հետ. «rien ne forme un jeune homme, comme une liaison avec une femme comme il faut»; մի այլ բախտ էլ էր կամենում եւս ինձ համար. դա այն էր, որ ես լինէի ադիւտանտ, և առաւել եւս լաւ թագաւորի ձօն. առաւել մեծ բախտն էլ—դա այն էր, որ ես ամուսնանալի չափազանց հարուստ աղջկայ հետ և որ իբրև արգասիք այդ ամուսնութեան՝ ունենայի ըստ հնարաւորութեան մեծաքանակ ստրուկներ:

Առանց սարսափի, արգահատանքի և սրտի ցաւի չեմ կարող վերջիշել այդ տարիները: Պատերազմի մէջ՝ ես մարդիկ էի սպանում, հրաւիրում էի մենամարտի, որպէս զի էլի սպանեմ. թղթախաղում տարվում էի, գիւղացիները աշխատանքը վատնում, տանջում նրանց, բռնաբարում, խարում: Ստախօսութիւն, գողութիւն, անբարոյականութեան բոլոր տեսակները, արբեցողութիւն, բռնութիւն, մարդասպանութիւն... Չկար մի ոճիբ, որ ես գործած չլինէի, և այդ բոլորի համար իմ հասակակիցները ինձ գովում էին ու համարում և այժմ էլ համարում են համեմատաբար աւելի բարոյական մարդ:

Այդպէս ես ապրեցի տասը տարի:

Այդ ժամանակ ես սկսեցի գրել՝ զրդուած փառասիրութիւնից, ընչաքաղցութիւնից և հպարտութիւնից: Իմ գրուածքների մէջ ես նոյնն էի անում, ինչ որ կեանքի մէջ: Անուն և փող վաստակելու նպատակով, որի համար ես գրում էի, անհրաժեշտ էր թագցնել լաւը և ասել վատը: Ես այդպէս էլ անում էի: Բանի անգամ ես փորձել եմ՝ սառնասրտութեան և նոյն իսկ թիթև ծաղրի դիմակով սքօղուած՝ իմ գրուածքներին

մէջ թագցնել այն ձգտումներս ղէպի բարին, որոնք կազմում էին իմ կեանքի իմաստը: Եւ ես համուծ էի իմ նպատակին. ինձ գովում էին:

Քսան-վեց տարեկան հասակումս, պատերազմից յետոյ, ես եկայ Պետերբուրգ և մտայ գրողների շրջանը: Ինձ ընդունեցին իբրև իւրայինի, ինձ շողոքորթում էին: Եւ ես, տակաւին անկարող՝ շուրջս դիտելու, արդէն իւրացրի գրող գասակարգի այն մարդկանց հայեացքները, որոնց հետ ես ծանօթացել էի և որոնք իմ նախկին փորձերը՝ լաւ դառնալու վերաբերմամբ միանգամայն սնչացրին իմ մէջ: Այդ հայեացքները իմ կեանքի սանձարձակութեանը իբրև հիմք՝ գրեցին մի թէօրիա, որը և նրան արդարացնում էր:

Կեանքի նկատմամբ այդ մարդկանց—իմ ընկերակից-գրողների—ունեցած կարծիքը կայանում էր նրանում, որ կեանքը ընդհանրապէս առաջ է գնում զարգանալով և որ այդ զարգացման մէջ մասնակցութիւն ունենք՝ մտքի մարդիկս, իսկ մտքի մարդկանց մէջ գլխաւոր ազդեցութիւն ունեցողը մենք ենք՝ գեղարուեստագէտներս, բանաստեղծներս: Մեր կոչումն է՝ ուսուցանել մարդկանց: Բայց որպէս զի իմ առջև չը կանգնի այն բնական հարցմունքը, թէ ինչ դիտեմ ինքս և ինչ եմ ուսուցանում, այդ թէօրիայի մէջ բացատրուած էր, որ դա դիտենալ հարկաւոր չէ, քանի որ գեղարուեստագէտն ու բանաստեղծը ուսուցանում են անգիտակցօրէն: Ես համարվում էի հրաշալի գեղարուեստագէտ ու բանաստեղծ, ուստի և ինձ համար չափազանց հեշտ էր իւրացնել այդ թէօրիան: Ես—գեղարուեստագէտս, բանաստեղծս—գրում ու ուսուցանում էի, չիմանալով թէ ինչ եմ ուսուցանում: Իրա համար

ինձ վճարում էին դրամ, ես ունէի հիանալի մնունդ, բնակարան, կանայք, հասարակութիւն. ես անուն ունէի: Ուստի և այն, ինչ որ ես ուսուցանում էի, չափազանց լաւ բաներ էին:

Բանաստեղծութեան նշանակութեան և կեանքի զարգացման դաւանանքը՝ իսկապէս մի դաւանանք էր, և ես նրա քուրմերից մէկն էի: Լինել նրա քուրմը՝ չափազանց դուրեկան էր և ձեռնտու: Եւ ես բաւական երկար ապրեցի այդ դաւանանքով, առանց կասկած ունենալու նրա ճշմարտութեան մասին: Սակայն այսօրինակ կեանքի երկրորդ և մանաւանդ երրորդ տարին ես սկսեցի կասկածել այդ դաւանանքի՝ անսխալականութեան վրայ և սկսեցի վերլուծել այն: Կասկածիս առաջին առիթը այն եղաւ, որ ես սկսեցի նկատել, թէ ինչպէս դրա քուրմերից ոչ բոլորն են համաձայն իրար հետ: Ոմանք ասում էին՝ մենք ամենալաւ և ամենաօգտակար ուսուցիչն ենք. մենք ուսուցանում ենք այն, ինչ կարևոր է, իսկ ուրիշները սխալ են ուսուցանում: Սակայն ուրիշները ասում էին. ո՛չ, մենք ենք իսկականները, իսկ դուք սխալ էք ուսուցանում: Եւ նրանք վիճում էին, խոսվում, հայտնում, խարում, անզգամութիւն անում իրար դէմ: Բացի այդ՝ նրանց մէջ կային շատերը, որոնք չէին մտածում, թէ ո՞վ է մեղաւոր և ո՞վ՝ արդար, այլ ուղղակի հասնում էին իրանց շահադիտական նպատակներին մեր այգօրինակ գործունէութեան օժանդակութեամբ: Այս բոլորը ստիպեցին ինձ կասկածանքի մէջ ընկնելու մեր դաւանանքի ճշմարտութեան նկատմամբ:

Բացի դրանից, կասկած ունենալով գրողներին դաւանանքի ճշմարտութեան վրայ, ես սկսեցի ուշադրու-

թեամբ դիտել նրա քուրմերին և համոզուեցի, որ այդ դաւանանքի համարեա բոլոր քուրմերը՝ գրողները՝ անբարոյական մարդիկ են, և գլխաւորապէս վատ մարդիկ, բնաւորութեամբ աննշան, — առաւել ստոր այն մարդկանցից, որոնց ես պատահում էի իմ անցեալ շուայտ գինուորական կեանքում,— սակայն ինքնավրտահ, ինքնաբաւական, ինչպէս որ լինում են միանգամայն սուրբ մարդիկ, կամ այնպիսիք, որոնք նոյն ի՞նչ չգիտեն, թէ ինչ է սրբութիւնը: Այդ մարդիկ ինձ համար դարձան զգուելի, և ես ինքս էլ ինձ համար եղայ զգուելի, ապա հասկացայ, որ այդ դաւանանքը միմիայն մի պատրանք է:

Սակայն տարօրինակ է այն, որ ես թէպէտ դաւանանքի այդ ամբողջ կեղծիքը շուտով ըմբռնեցի և հրաժարուեցի նրանից, բայց այդ մարդկանց ինձ տուած աստիճանից — գեղարուեստագէտի, բանաստեղծի, ուսուցչի — ես չհրաժարուեցի: Ես միամտօրէն կարծում էի, թէ բանի ինքս բանաստեղծ եմ ու գեղարուեստագէտ, ապա ուրեմն կարող եմ բոլորին ուսուցանել, առանց իմանալու թէ ինչ եմ ուսուցանում: Եւ ես այդպէս էլ անում էի:

Այդ մարդկանց հետ ունեցած մերձաւորութեամբս ես ձեռք բերեցի մի արատ ևս՝ հիւանդագին չափերով զարգացած հպարտութիւն և խելագար համոզումն, որ ես կոչուած եմ մարդկանց ուսուցանելու, առանց իմանալու թէ ինչ պէտք է ուսուցանել:

Այժմ, յիշելով այդ ժամանակամիջոցի իմ և այդ մարդկանց ժամանակակից տրամադրութեան մասին (այդպիսիների թիւը, ասենք, այժմ էլ հազարներ են), ինձ համար և՛ ցաւալի է, և՛ սարսափելի, և՛ ծիծաղելի.

առաջ է գալիս ճիշտ նոյն զգացմունքը, որը կարող ես զգալ խելագարների տան մէջ:

Մենք բոլորս այն ժամանակ համոզուած էինք, որ մեզ հարկաւոր է խօսել և խօսել, գրել, տպագրել որքան կարելի է շուտ, որքան կարելի է շատ, որ այդ բոլորը կարևոր է մարդկութեան երջանկութեան համար: Եւ մենք հազարներով՝ իրար ժխտելով, շարունակ հայհոյելով անվերջ տպագրում, գրում էինք, ուրիշներին ուսուցանելով: Եւ չնկատելով այն, որ մենք ոչինչ չգիտենք, որ կեանքի ամենահասարակ հարցին — թէ ինչն է լաւ և ինչը վատ—չգիտենք ինչ պատասխան տանք, մենք ամենքս, իրար չլսելով, մի անգամից խօսում էինք, երբեմն ներելով իրար ասածը և իրար գովաբանելով այն դիտաւորութեամբ, որ ինձ էլ ներեն ու գովաբանեն, երբեմն էլ գրգռուելով իրար դէմ ճիշտ այնպէս, ինչպէս խելագարների տանը:

Հագարաւոր բանուորներ օր ու դիշեր ուժասպառ լինելով աշխատում էին, շարում, տպագրում միլիոնաւոր բառեր և պատն էլ տարածում էր նրանց՝ ամբողջ Ռուսաստանի մէջ, իսկ մենք աւելի ևս ուսուցանում էինք և ամենեին չէինք կարողանում հասցնել ամեն ինչ ուսուցանելու, և շարունակ բարկանում էինք, որ մեզ քիչ են լսում:

Չափազանց տարօրինակ էր, բայց այժմ ամեն ինչ հասկանալի: Մեր սրտազին անկեղծ դատողութիւնը այն էր, որ մենք ուզում էինք ըստ ամենայնի առատ գրամ և գովասանքներ ստանալ: Այդ նպատակին հասնելու համար մենք ուրիշ ոչինչ չգիտէինք անել, բացի լրագիրներ ու գրքեր գրելուց: Եւ հէնց այդ էինք անում մենք: Բայց որպէս զի այդ անօգուտ բանը ա-

նելով հանդերձ մենք միևնոյն ժամանակ ունենանք այն համոզումը, թէ մենք չափազանց նշանաւոր մարդիկ ենք, մեզ տակաւին անհրաժեշտ էր ունենալ և մի այլ դատողութիւն, որը կարողանար նաև արդարացնել մեր գործունէութիւնը: Եւ անա մեր մէջ հնարուած էր հետեւեալը. ամենայն ինչ, որ գոյութիւն ունի, բանական է: Իսկ այն, ինչ որ գոյութիւն ունի, զարգանում է: Զարգանում է սակայն՝ լուսաւորութեան միջոցով: Լուսաւորութիւնն էլ չափվում է գրքերի, լրագրի տարածումով: Իսկ մեզ դրամ են վճարում և յարգում նրա համար, որ մենք լրագիրներ և գրքեր ենք գրում, ուստի և մենք՝ ամենաօգտակար և լաւ մարդիկ ենք: Այդ դատողութիւնը գուցէ շատ լաւ լինէր, եթէ մենք իրար հետ համերաշխ լինէինք, բայց որովհետև մէկի արտայայտած իւրաքանչիւր միտք միւսի արտայայտածի տրամադժօրէն հակառակն էր լինում, ուստի և այդ հանգամանքը պէտք է մեզ ստիպէր զգաստանալու: Սակայն մենք այդ չէինք նկատում: մեզ դրամ էին վճարում, և մեր խմբի մարդիկ մեզ գովաբանում, ուստի և մենք, մեզանից իւրաքանչիւրը իրան արդար էր համարում:

Այժմ ինձ համար պարզ է, որ այստեղ խելագարների տան համեմատութեամբ ոչ մի տարբերութիւն չկար. այն ժամանակ սակայն ես աղօտ կերպով էի կասկածում այդ մասին, ըստ որում և, ինչպէս և բոլոր խելագարները, ինձանից զատ ամենքին համարում էի խելագարներ:

III

Այդպէս ապրիցի ես վեց տարի ես, անձատուր լինելով այդ անմտութեան, մինչև ամուսնանալու: Այդ ժամանակամիջոցում ես զնացի արտասահման: Կեանքը եւրօպայում և իմ մերձեցումը եւրօպական առաջագէմ և գիտնական մարդկանց հետ՝ առաւել ևս ամրապնդեցին իմ այն հաւատը կոտարելագործման նկատմամբ առհասարակ, որով ես ապրում էի, որովհետև հէնց նոյն բանն էի գտել նաև նրանց մէջ: Այդ հաւատը իմ մէջ ընդունեց այն սովորական ձևը, որը յատուկ է մեր ժամանակի կրթուած մարդկանց մեծամասնութեանը: Այդ դաւանանքը արտայայտվում էր «պրօգրէսս» բառով: Այն ժամանակ ինձ թւում էր, թէ այդ բառով ինչ-որ մի բան արտայայտվում է: Ես տակաւին չէի ըմբռնում այն, որ, ինչպէս իւրաքանչիւր կենդանի մարդ, տանջուելով այն հարցերով, թէ ինչպէս լաւ է ինձ ապրել, ես պատասխանելով՝ ապրել համաձայն պրօգրէսսի, — պատասխանում եմ ճիշտ նոյնը, ինչ կը պատասխանէր նաւակում նստած և ալիքներով ու քամով տարուող մարդը՝ նրա համար այս գլխաւոր ու միակ հարցին. «Թր կողմը ուղղուել», — եթէ նա, չպատասխանելով բուն հարցին, ասէր. «մեզ սա ուր-որ տանում է»:

Այն ժամանակ ես այդ չէի նկատում: Շատ սակաւ ղէպքերում միայն՝ ոչ բանականութիւնս, այլ զգացմունքս վրդովվում էր մեր ժամանակի այդ ընդհանուր նախապաշարման ղէմ, որով մարդիկ իրանցից թագցնում էին կեանքի նկատմամբ ունեցած իրանց

անհասկացողութիւնը: Այսպէս, երբ ես Պարիզումն էի, մահուան պատժի ղէպքը մերկացրեց իմ առջև պրօգրէսսի նախապաշարման խարխուլ լինելը: Երբ ես տիսայ, թէ ինչպէս գլուխը բաժանուեց մարմնից և թէ մէկը ու թէ միւսը հատ-հատ թրխկացին արկղում, ես հասկացայ, — ոչ խելըովս, այլ ամբողջ էութեամբս, — որ գոյութեան և պրօգրէսսի խելամտութեան և ոչ մի թէօրիա չէ կարող արդարացնել այդ վարմունքը և որ եթէ նոյն իսկ աշխարհի բոլոր մարդիկ որևէ թէօրիաներով տիեզերքի ստեղծագործութեան առաջին օրից սկսած ընդունէին, որ դա՛ կարևոր է, — ես գիտեմ, որ դա՛ կարևոր չէ, որ դա վատ բան է, ուստի և դրա դատաւորը — ինչն է լաւ և կարևոր — նա չէ, ինչ որ ստում և անում են մարդիկ, և ոչ էլ պրօգրէսսը, այլ ես եմ՝ իմ սրտով: Կեանքի համար պրօգրէսսի նախապաշարման գիտակցութեան անբաւարար լինելու մի այլ ղէպքը՝ իմ եզրօր մահն էր: Մի խելացի, բարի, լուրջ մարդ՝ նա հիւանդացաւ երիտասարդ հասակում, տառապեց աւելի, քան մի տարի, և մեռաւ տանջանքների մէջ, առանց հասկանալու թէ ինչնու ապրեց, և առաւել պակաս հասկանալով՝ թէ ինչնու է ինքը մեռնում: Ոչ մի թէօրիա ոչինչ չէր կարողանում պատասխանել այս հարցերին ոչ ինձ և ոչ նրան՝ նրա զանգաղ ու տանջալից մահացման միջոցին: Իսայց դրանք կասկածների միմիայն սակաւաթիւ ղէպքերն էին. էսպէս սակայն ես շարունակում էի ապրել՝ ընդունելով միայն դաւանանքս ղէպի պրօգրէսսը: «Ամեն ինչ զարգանում է, ես էլ եմ զարգանում. բայց թէ ինչնու եմ ես զարգանում այդ ամենի հետ, դա կերևայ ապագայում»: Այն ժա-

մանակ ես պէտք է հէնց այդպէս էլ ձևակերպէի իմ դաւանանքը:

Վերագառնալով արտասահմանից, ես ընակութիւն հաստատեցի գիւղում և ընկայ գիւղացիական դպրոցների պարապմունքների մէջ: Այդ պարապմունքը իմ սրտին առանձնապէս մօտ էր, որովհետև նրա մէջ չկար ինձ համար ակնյայտնի դարձած այն կեղծիքը, որը արդէն իմ աչքն էր ծակում գրական ուսուցչութեան գործունէութեան մէջ: Ես այստեղ ևս գործում էի յանուն պրօգրէսսի, սակայն արդէն քննադատաբար վերաբերուելով հէնց դէպի ինքը պրօգրէսսը: Ես ինքս ինձ ասում էի, որ պրօգրէսսը իր մի քանի երևոյթիւնների մէջ կատարուել է անկանօն կերպով և որ անհրաժեշտ է դէպի նախնական մարդիկ, դէպի գիւղական մանուկները ազատ վերաբերուել, առաջարկելով նրանց ընտրել պրօգրէսսի այն ուղին, որը նրանք կը ցանկան: Իսկապէս ասած՝ պտտվում էի շարունակ հէնց միեւնոյն անլուծելի խնդրի շուրջը, որը կայանում էր սրանում. ուսուցանել, չիմանալով թէ ինչ ես ուսուցանում: Գրական գործունէութեան բարձր շրջաններում ես ըմբռնեցի, որ չէ կարելի ուսուցանել, չիմանալով թէ ինչ ես ուսուցանում, որովհետև տեսնում էի, որ բոլորն էլ ուսուցանում են զանազան բաներ և իրար հետ ունեցած վէճերով միմիայն թագցնում միմեանցից իրանց սեփական չգիտութիւնը: Այստեղ սակայն՝ գիւղական մանուկների հետ՝ ես կարծում էի, որ կարելի է այդ գժուարութիւնը զանց առնել, թոյլ տալով մանուկներին սովորել այն, ինչ իրանք են կամենում: Այժմ ինձ համար ծիծաղելի է յիշել այն, թէ ինչպէս ես այս ու այն կողմն էի ընկնում, որպէս զի կատարած

չինեմ իմ ցանկութիւնը՝ ուսուցանելու, թէև հոգուս խորքում շատ լաւ գիտակցում էի, որ ես ոչինչ չեմ կարող ուսուցանել, որը լինի կարևոր, որովհետև ինքս էլ լաւ չգիտեմ, թէ ինչն է կարևոր: Դպրոցական միամեայ պարապմունքներից յետոյ ես երկրորդ անգամ գնացի արտասահման, որ այնտեղ իմանամ, թէ ինչ պէտք է անել, որ ոչինչ չիմանալով հանդերձ՝ կարելի լինի ուրիշներին սովորեցնելու գիտութիւն ձեռք բերել:

Եւ ինձ թւում էր, թէ այդ բանը ես արտասահմանում սովորեցի և, սպառազինուած այդ իմաստութեամբ, գիւղացիների ազատագրման տարին վերադարձայ Ռուսաստան ու, վերցնելով միջնորդի պաշտօնը, սկսեցի ուսուցանել և՛ անկիրթ ժողովրդին՝ դպրոցներում, և՛ կրթուածներին՝ ամսագրքերում, որը ես սկսել էի հրատարակել: Գործը, ըստ երևոյթին, գնում էր լաւ, սակայն զգում էի, որ ես մտաւորապէս ոչբոլորովին առողջ եմ և դա երկար շարունակուել չէ կարող: Այդ միջոցին ես, հաւանական է, համնէի այն յուսահատութեան, որին հասայ տասն-հինգ տարի յետոյ, եթէ իմ կեանքը չունենար մի այլ կողմ և՛ տակաւին անծանօթ ինձ համար և փրկութիւն խոստացող. դա ընտանեկան կեանքն էր:

Մի տարուայ ընթացքում ես պարապում էի միջնորդութեամբ, դպրոցներով, ամսագրով, և այնպէս տանջուեցի, մանաւանդ մոլորութիւնից, այնպէս ծանր դարձաւ ինձ համար միջնորդութեան առիթով մղած իմ կռիւը, այնքան աղօտ երկաց նաև իմ դպրոցական գործունէութիւնը, այնպէս զզուելի դարձաւ ինձ համար՝ ամսագրում իմ այս ու այն կողմը նետուելս, որը կայանում էր հէնց նոյն բանի մէջ—բոլորին ուսուցա-

նելու ցանկութիւնը և ծածկելու այն, որ ես չգիտեմ ինչ ուսուցանեմ, որ ես հիւանդացել եմ աւելի հոգեպէս, քան Ֆիզիքապէս—որ թողեցի ամեն ինչ և գնացի անապատ՝ բաշկիրների մօտ օդ շնչելու, դըմըգ խմելու և կենդանական կեանք վարելու համար:

Վերադառնալով այնտեղից՝ ես ամուսնացայ: Ընտանեկան երջանիկ կեանքի պայմանները միանգամայն հեռացրին ինձ կեանքի ամեն մի ընդհանուր իմաստի որոնումից: Այդ միջոցին իմ ամբողջ կեանքը կենտրոնացած էր ընտանիքիս՝ կնոջս և երեխաներիս մէջ, ըստ որում և՛ ապրելու միջոցների աւելացման մէջ: Ձգտումեառ կատարելագործումը, որը առաջ փոխուած էր ձրգտումով դէպի կատարելագործումն ընդհանրապէս, դէպի պրօգրէսսը, այժմ արդէն ուղղակի փոխուեց մի այլ ձգտման. որքան կարելի է լաւ լինէր ինձ իմ ընտանիքի հետ միասին:

Այդպէս անցաւ էլի տասն-հինգ տարի:

Չնայելով որ այդ տասն-հինգ տարիների ընթացքում գրող լինելը ես համարում էի դատարկ բան, բայց այնուամենայնիւ շարունակում էի գրել: Ես արդէն ճաշակել էի գրող լինելու գայթակղութիւնը, իմ մի չնչին աշխատասիրութեան համար դրամական խոշոր վարձատրութեան և ծափահարութեան գայթակղութիւնը, և անձնատուր էի լինում նրան իբրև մի միջոցի՝ իմ նիւթական կացութեան բարւոքման և հոգուս խորքում իմ ու ընդհանուր կեանքի իմաստի բոլոր հարցերի խլացման համար:

Ես գրում էի ուսուցանելով այն, ինչ որ ինձ համար միակ ճշմարտութիւնն էր. այն է՝ մարդուն անհրաժեշտ է ապրել այնպէս, որ իրան՝ ընտանիքի հետ

միասին՝ ըստ ամենայնի լաւ լինի:

Այդպէս էի ապրում ես. սակայն հինգ տարի առաջ սկսեց իմ մէջ տեղի ունենալ մի շատ տարօրինակ բան. լինում էին րօպէսներ, երբ ինձ վրայ սկզբում տիրում էին մի տեսակ շուարման րօպէսներ, կեանքի դադարումներ. կարծես չէի իմանում, թէ ինչպէս պէտք է ապրել, ինչ անել, և ես շփոթվում էի ու ընկնում լքման մէջ: Բայց դա անցնում էր, և ես շարունակում էի ապրել առաջուայ պէս: Այնուհետև շուարման այդ րօպէսները սկսեցին աւելի յաճախակի կրկնուել և միշտ միևնոյն ձևով: Կեանքի այդ դադարումները միշտ արտայայտվում էին միատեսակ հարցերով. ինչու, համար. իսկ այնուհետև:

Սկզբում ինձ թւում էր, թէ դրանք աննպատակ, անտեղի հարցեր են: Ինձ թւում էր, որ այդ ամենը արդէն յայտնի է և որ՝ եթէ ես երբևիցէ կամենամ դրադուել դրանց լուծմամբ, դա ինձանից առանձին ճիգ չի էլ պահանջի, որ այժմ միայն ժամանակ չունեմ զբաղուելու, և երբ մտադրուեմ, այն ժամանակ պատասխաններն էլ կը գտնեմ: Սակայն աւելի յաճախ և յաճախ սկսեցին կրկնուել այդ հարցերը, աւելի ստիպողական կերպով պահանջուեցին պատասխանները և, որպէս կէտեր ընկնելով միևնոյն տեղի վրայ, խտացան անպատասխան այդ հարցերը և կազմեցին մի սև բիծ:

Պատահեց այն, ինչ պատահում է ներքին մահաբեր ցաւով բռնուած իւրաքանչիւր հիւանդացողի հետ: Սկզբում հանդէս են գալիս թուլութեան աննկատելի նշաններ, որոնց վրայ հիւանդը ուշադրութիւն չէ դարձնում. ապա այդ նշանները կրկնվում են աւելի յաճախակի և՛ ըստ ժամանակի՝ ձուլվում մի անբաժան տա-

ուպանքի: Տառապանքը աճում է, և հիւանդը հնար չէ ունենում սթափուելու, երբ արդէն գիտակցում է, որ այն՝ ինչ որ նա ընդունել էր որպէս թուլութիւն՝ նրա համար ամենանշանաւորն է եղել աշխարհումս, որ դա մահն է եղել:

Նոյնը պատահեց ինձ հետ: Ես հասկացայ, որ դա պատահական թուլութիւն չէ, այլ մի ինչ-որ չափազանց նշանաւոր բան, և եթէ միևնոյն հարցերը կրկնւ-վում են, ապա անհրաժեշտ է նրանց պատասխանը տալ: Հարցերը սակայն թոււմ էին չափազանց անմիտ, հասարակ, մանկական: Բայց հէնց որ ես ձեռք մեկնեցի դէպի նրանց և փորձեցի լուծել, անմիջապէս համոզուեցի, որ՝ առաջին՝ այդ հարցերը մանկական չեն և ոչ էլ անմիտ, այլ կեանքի մէջ ամենախոշոր և խորունկ հարցերն են, և՛ երկրորդ՝ ես չեմ ու չեմ կարող լուծել նրանց, որքան էլ խորհեմ, մտածեմ: Նախ քան զբազուելս սամարական (նահանգ՝ Ռուսաստանում. թարգ.) կալուածքովս, որդուս դաստիարակութեամբ, գիրք գրելով՝ կարևոր է ինձ գիտենալ, թէ ինչո՞ւ համար պէտք է անեմ այդ բոլորը: Քանի որ ես չգիտեմ, թէ ինչո՞ւ համար, ես չեմ կարող ոչինչ անել, ես չեմ կարող ապրել: Տնտեսութեան վերաբերեալ մտքերիս մէջ, որոնք այն ժամանակ շատ էին ինձ զբաղեցնում, յանկարծ գլխումս ծագում էր այս միտքը. «Իէ, լուս, դու Սամարայի նահանգում կունենաս 6,000 դեսեատին հող, 300 զուխ ձի. իսկ յետոյ...»: Եւ ես միանգամայն շուարում էի, չիմանալով թէ ինչ մտածեմ այնուհետև: Կամ՝ մտածելով երեխաներիս դաստիարակութեան մասին, ես տտում էի ինքս ինձ. «Ինչո՞ւ համար»: Կամ՝ դատելիս, թէ ինչպէս ժողովուրդը կարող

է հասնել բարեկեցութեան, ես յանկարծ ասում էի ինքս ինձ. «Իմ ինչ գործն է»: Կամ՝ մտածելով այն փառքի մասին, որը ձեռք կը բերեն ինձ համար իմ հեղինակութիւնները, ես տտում էի. «Իէ, լուս, դու կը լինես աւելի անուանի, քան Գօգօլը, Պուշկինը, Շէկսպիրը, Մօլիէրը, քան աշխարհի բոլոր գրողները. բայց յետոյ...»: Եւ ես ոչինչ և ոչինչ չէի կարողանում պատասխանել: Հարցերը չեն սպասում. անհրաժեշտ է իսկոյն պատասխանել. եթէ չես պատասխանի՝ ապրել անհնարին է: Իսկ պատասխան չկայ:

Ես զգացի, որ այն, որի վրայ ես կանգնած էի, խորտակուել է, որ կանգնելու տեղ այլ ևս չունեմ. որ այն, որով ես ապրում էի, այլ ևս չկայ, ապրելու ոչինչ չունեմ:

IV

Իմ կեանքը կանգ առաւ: Ես չէի կարող շնչել, ուտել, խմել ու քնել, և չէի կարող չնչնել, չուտել, չխմել և չքնել. բայց կեանք չկար, որովհետև չկային այնպիսի ցանկութիւններ, որոնց բաւարարութիւն տալը ես համարէի խելամիտ: Եթէ ցանկանում էլ էի որևէ բան, նախապէս գիտէի, որ իմ ցանկութեանս թէկուզ բուարարութիւն տայի թէ չտայի, միևնոյն է, դրանից ոչինչ չէր դուրս գալու: Եթէ ինձ մօտ գար մի կախարդուհի և առաջարկէր ի կատար ածել իմ ցանկութիւնը, ես չէի իմանայ, թէ ինչ պատասխա-

նեմ: Եթէ արբած բօպէնիբիս ես ունեմ ոչ թէ ցանկու-
 թիւններ, այլ նախկին ցանկութիւնների սովորու-
 թիւններ, ապա զգաստ բօպէնիբիս ես գիտեմ, որ դա
 պատրանք է, որ ցանկալու ոչինչ չկայ: Եւ այն իսկ ես
 անկարող էի ցանկալ ճշմարտութիւնը իմանալու, ո-
 բովհետեւ գուշակում էի, թէ ինչո՞ւմ պիտի կայանայ
 այն: Ըշմարտութիւնը այն էր, որ կիանքը անմտու-
 թիւն է: Ես կարծես ապրել եմ ու ապրել, գնացել եմ
 ու գնացել և ապա եկել հասել անդունդի. պարզօրէն
 տեսնում էի, որ առջևս ոչինչ չկայ, բացի կորստից: Եւ
 կանգ առնել չէ կարելի և յետ գնալ. և աչքերը
 փակել չէ կարելի՝ չտեսնելու համար, որ առաջդ ոչինչ
 չկայ, բացի տառապանքներից ու իսկապան մահից,
 կատարեալ ոչնչացումից:

Ինձ հետ տեղի ունեցաւ այն, որ ես՝ առողջ ու
 բախտաւոր մարդս՝ զգացի, որ այլ ևս ապրել չեմ կա-
 ռող, մի ինչ-որ անյաղթելի զօրութիւն քարշում է ինձ
 դէպի այն բանը, որով մի կերպ ես պէտք է ազատուէի
 կեանքից: Չէ կարելի ասել, որ ես կրամենում էի ինձ
 սպանել:

Այն զօրութիւնը, որ ինձ կեանքից հեռու էր տա-
 նում, ցանկութիւնից առաւել զօրեղ էր, լիբրուռն, ա-
 ռաւել ընդհանուր: Դա մի զօրութիւն էր, նման նախ-
 կին ձգտմանս առ կեանքը, միայն հակառակ յարաբե-
 րականութեամբ: Ես իմ սովորով ոյժով ձգտում էի ան-
 ջատուել կեանքից: Անձնասպանութեան միտքը ծագեց
 իմ մէջ նոյն բնական ճանապարհով, ինչպէս առաջ ծա-
 գում էին մտքերը՝ կեանքի բարելաւութեան վերաբեր-
 մամբ: Այդ միտքը այնքան գայթակղեցուցիչ էր, որ ես
 ստիպուած էի հէնց իմ դէմ խորամանկութիւններ գոր-

ծաղրել, որպէս զի այն ի կատար չածեմ չափազանց
 արագութեամբ: Ես չէի ուզում շտապել՝ միմիայն այն
 պատճառով, որ կամենում էի գործադրել ամեն ջանք՝
 ցանցից ազատուելու համար. եթէ չազատուեմ՝ առա-
 ջինը հօ միշտ կաջողեցնեմ: Եւ ահա այդ միջոցին ես,
 բախտաւոր անձնաւորութիւնս, ինձանից թագցնում էի
 պարանը, որպէս զի չկախուեմ սենսակումս գտնուող
 երկու պահարանների արանքներում, որտեղ ես ամեն
 գիշեր մենակ էի լինում շորերս հանելիս. դադարեցի
 հրացանով որսի գնալուց, որպէս զի չգայթակղուեմ
 կեանքից անջատուելու այդ չափազանց հեշտ միջոցով.
 ես ինքս չզիտէի, թէ ինչ էի կամենում. կեանքից ես
 վախենում էի, ձգտում էի անջատուելու նրանից և՛
 միևնոյն ժամանակ՝ որոշ բան ակնկալում նրանից:

Եւ դա տեղի ունեցաւ իմ մէջ այն ժամանակ,
 երբ ամեն կողմից շրջապատուած էի այն բանով, որը
 համարվում է իսկական երջանկութիւն. դա այն ժա-
 մանակ էր, երբ ես տակաւին յիսուն տարեկան չկայի.
 Ես ունէի բարի, սիրող և սիրելի կին, լաւ գաւակներ
 և մեծ կալուածք, որը առանց իմ աշխատանքի աճում
 ու մեծանում էր: Ես յարգուած էի իմ մերձաւորների և
 ծանօթների կողմից, առաւել քան հրեւիցէ գովաբան-
 վում ուրիշներից և կարող էի համոզուած լինել, որ
 իմ անունը հուշակուած է, առանց որոշ անձնախաբէու-
 թեան: Միևնոյն ժամանակ ես ոչ թէ խելագարուած էի
 կամ հոգեպէս հիւանդ, այլ ընդհակառակը՝ ես տիրա-
 պետում էի թէ հոգեկան և թէ ֆիզիքական ոյժով,
 որպիսի երևոյթի ես սակաւ էի հանդիպում իմ հասա-
 կակիցների շրջանում. ֆիզիքապէս ես կարող էի աշ-
 խատել հնձաններում առանց երբէք յետ մնալու դիւ-

ղացիներէց. մտաւորապէս ես կարող էի անընդհատ կերպով գործել 8—10 ժամ, ոչ մի յոգնածութիւն չզգալով այդօրինակ լարուածութիւնից: Եւ այդպիսի կացութեան մէջ ես հասայ այն կէտին, որ ապրել այլ եւ չեմ կարողանում եւ, վախենալով մահից, ստիպուած էի անձիս դէմ խորամանկութիւններ գործադրել՝ ինքս ինձ կեանքից չզրկելու համար:

Ինձ համար հոգեկան այդ կացութիւնը արտա- յայտվում էր այս ձևով. իմ կեանքը ինչ-որ մէկի՝ (մի անյայտնի. թարգմ.) իմ գլխին խաղացած մի ինչ-որ անմիտ և չար կատակ է: Չնայելով որ ես չէի ընդու- նում այդ «ինչ-որ մէկին», որը ինձ ստեղծել է, սա- կայն պատկերացման այն ձևը—թէ ինչ-որ մէկը ինձ ծաղրել է չար և անմիտ կերպով աշխարհ բերելով ինձ —ինձ համար պատկերացման ամենաբնական ձևն էր:

Ակամայից թւում էր, որ այնտեղ՝ ուր-որ՝ կայ մէկը, որը այժմ հրճոււմ է ինձ վրայ դիտելով՝ թէ ինչպէս ամբողջ 30—40 տարի ապրեցի, ապրեցի՝ սո- վորելով, զարգանալով, աճելով մարմնով ու հոգով և ինչպէս այժմ էլ մտաւորապէս ամբողջովին ամրացած, հասնելով կեանքի այն զագաթնակէտին, որտեղից նա ամբողջապէս բացվում է իմ առջև,—ինչպէս ես իբրև յիմարագոյն յիմար կանգնած եմ այդ զագաթնակէտի վրայ, պարզօրէն հասկանալով որ կեանքում ոչինչ չը կայ, չէ եղել և չէ լինելու: Իսկ նրան դեռ ծիծաղելի է այդ...

Սակայն կար այդ մէկը, որը ինձ վրայ ծիծաղում է, թէ՛ ոչ. դա ինձ չէր սփոփում: Ես չէի կարող որևէ խելացի իմաստ հաղորդել վարմունքներէցս և ոչ մէկին և ոչ էլ իմ ամբողջ կեանքին: Ինձ միայն զարմացնում

էր այն հանգամանքը, թէ ինչպէս է, որ ես դեռ սկզբում չեմ կարողացել հասկանալ այն: Այդ բոլորը շատ վաղուց յայտնի են ամենքին: Եթէ ոչ այսօր, վաղը կը գան հիւանդութիւնները, մահը (և արդէն ե- կել էին) սիրելի մարդկանց վրայ, և ոչինչ չի մնայ բացի գարշահոտութիւնից և որդերից: Իմ գործերը, ինչպիսիք էլ որ լինեն նրանք, բոլորն էլ վաղ թէ ուշ կը մոռացուեն. ես էլ հօ չեմ մնալու: Դէ՛հ, ուրեմն ին- չո՞ւ համար եմ հոգս անում: Ինչպէս կարող է մարդ չտեսնել այս ամենը և ապրել. անձ որն է զարմանա- լին: Կարելի է ապրել՝ քանի կեանքից արբած ես. բայց հէնց որ զգոստանաս՝ չես կարող չտեսնել, որ այս ամենը միմիայն պատրանք է, անմիտ պատրանք: Բանն էլ հէնց նրանումն է, որ ծիծաղելի ու սրամիտ ոչինչ չկայ, այլ ուղղակի՝ դաժան ու անմիտ բան:

Վաղուց արդէն պատմուած է արևելեան առակը մի ճանապարհորդի մասին, որը դաշտում հանդիպում է մի կատաղի գաղանի: Փախչելով գաղանից, ճանա- պարհորդը ցատկում է անջրդի ջրհորի մէջ, որի յա- տակում նա տեսնում է մի վիշապ, երախը բացած՝ պատրաստ նրան կլանելու: Եւ դժբախտը, համարձա- կութիւն չունենալով ջրհորից դուրս գալու՝ կատաղած զաղանից չոչնչանալու համար, նոյն կերպ չհամարձա- կուելով իջիլ ջրհորի յատակը՝ վիշապից չկլանուելու համար, փարվում է ջրհորի ձեղքուածքում բուսած վայրենի թփի ճիւղերին և այդպէս մնում կախ ընկած: Նրա ձեռքերը թուլանում են, նա զգում է, որ շուտով պէտք է կորստի մատնուի երկու կողմերում նրան սպասողներից էլ. բայց նա դեռ մնում է այդպէս փա- րուած և տեսնում է, որ երկու մկներ՝ մէկը սև, միւսը

սպիտակ՝ հաւասար չափով պտոյտ են գործում թփի քարակ բնի շուրջը և կրծոտում այն, որից ինքը կախ ընկած մնում է: Ահա մի վայրկեանից թուփն ինքն իրան կը քանդուի ու կը պոկուի, և նա կը նետուի վիշապի երախը: Ճանապարհորդը այդ տեսնում է և իմանում, որ իր կորուստը անխուսափելի է, բայց քանի այդպէս կախ ընկած է մնում՝ նա որոնում է իր շուրջը և գտնում թփի տերևների վրայ մեղրի կաթիլներ ու լեզուն հասցնելով սկսում լիզել: Ճիշտ նոյն ձևով են եմ փարուած կեանքի ճիւղերին, գիտնելով որ մահուան վիշապը անխուսափելի կերպով սպասում է՝ պատրաստ ինձ յօշոտելու, և չեմ կարողանում ըմբռնել, թէ ինչո՞ւ համար եմ ընկել այս տառապանքների մէջ: Եւ ես փորձում եմ ծծել այն մեղրը, որը անցեալում ինձ սփոփում էր, սակայն այլ ևս նա ինձ չէ ուրախացնում. իսկ այդ սև ու սպիտակ մկները որ ու գիշեր կրծոտում են այն ճիւղերը, որոնցից ես փարուած մնում եմ: Ես պարզապէս տեսնում եմ վիշապին, ուստի և մեղրն ինձ համար քաղցր չէ: Ես տեսնում եմ մի քան՝ անխուսափելի վիշապին և մկներին՝ և չեմ կարող հայեացքս նրանցից հեռացնել: Սա առակ չէ, այլ ճշմարիտ, անվիճելի և իւրաքանչիւրին հասկանալի արդարութիւն:

Վիշապի սարսափը խլացնող՝ իմ ուրախ կեանքի նախկին պատրանքը ինձ այլ ևս չէ խաբում: Որքան էլ ինձ ասեն թէ՝ «դու չես կարող ըմբռնել կեանքի իմաստը, մի մտածիր, ապրիր», ես չեմ կարող անել այդ, որովհետև անցեալում երկար ժամանակ արել եմ այդպէս: Այժմ ես չեմ կարող չտեսնել օրն ու գիշերը, որոնք վազում են ու տանում ինձ դէպի մահ: Ես մի-

միայն այդ եմ տեսնում, որովհետև այդ է միակ ճշմարտութիւնը: Մնացածը սուտ է:

Մեղրի այն երկու կաթիլները, որոնք ամենից աւելի հեռացրել են ինձ դաժան ճշմարտութիւնից—սէլը դէպի ընտանիքս ու գրականագիտութիւնը, որը ես համարում էի գեղարուեստ— ինձ համար այլ ևս քաղցր չեն:

«Ընտանիքս...»,—ասում էի ինքս ինձ.— բայց ընտանիքս, այսինքն կինս ու զաւակներս էլ մարդ են: Նրանք ևս միևնոյն պայմանների մէջ են գտնվում, որոնց մէջ եմ ես. նրանք կամ պէտք է ապրեն կիզծիքի մէջ, կամ տեսնեն սարսափելի ճշմարտութիւնը: Ինչո՞ւ համար սակայն ապրեն: Ինչո՞ւ սիրեմ նրանց, պահպանեմ, մեծացնեմ և հսկեմ նրանց վրայ: Միևնոյն յուսահատութեան համար, որի մէջ ես եմ գտնվում, թէ ըթամտութեան: Սիրելով նրանց, ես չեմ կարող նրանցից թագնել ճշմարտութիւնը. ճանաչողութեան իւրաքանչիւր քայլը տանում է դէպի այդ ճշմարտութիւնը: Իսկ ճշմարտութիւնը մահն է»:

«Գեղարուեստը, բանաստեղծութիւնը»... Մարդկային գովասանքների աշողութեան ազդեցութեան տակ ես երկար ժամանակ ինձ համոզում էի, թէ դա մի գործ է, որ կարելի է անել չնայած մահուան զարտեանը, որը ամեն ինչ պիտի ոչնչացնէ՝ թէ՛ իմ գործերը և թէ՛ նրանց յիշատակը. բայց ես շուտով տեսայ, որ դա ևս պատրանք է: Ինձ համար պարզ էր, որ արուեստը կեանքի զարգարանն է, կեանքի հրապուրիչը: Սակայն կեանքը ինձ համար կորցրել է իր հրապուրանքը, ուրեմն ինչպէս կարող եմ ես ուրիշներին հրապուրել:

Քանի ես դեռ չէի ապրում իմ կեանքով, այլ ուրիշի կեանքն էր տանում ինձ իր ալիքների վրայ, քանի ես հաւատում էի, որ կեանքը ունի իմաստ, թէև ես չգիտեմ արտայայտել այն, բանաստեղծութեան և արուեստների մէջ կեանքի բազմապիսի անդրադարձումները ինձ ցնծութիւն էին պատճառում: Զարհուրելի էր նայել ինձ համար արուեստի այդ հայելիից, սակայն երբ զգացի ինքնան ապրելու անհրաժեշտութիւնը, այդ հայելին դարձաւ ինձ համար կամ անպէտք, աւելորդ և ծիծաղելի, կամ տանջալից: Անհնարին էր ինձ մխիթարուել նրանով, որ ես հայելիի մէջ տեսնում էի դրութեան անմիտ և յուսահատեցուցիչ լինելը: Լաւ էր այդ բանին ուրախանալը, երբ ես հոգուս խորքում հաւատում էի, որ իմ կեանքը իմաստալից է: Այն ժամանակ լոյսերի այդ խաղը—կեանքի մէջ ծիծաղելին, ողբերգականը, գթաշարժը, գեղեցիկը, սարսափելին—ինձ դուարձացնում էր: Սակայն երբ իմացայ, որ կեանքը անիմաստ է և սոսկալի, հայելիի մէջ խաղը ինձ այլ ևս չէր կարող զբաղեցնել: Մեղրի ոչ մի քաղցրութիւնը ինձ համար անուշ լինել չէր կարող, քանի ես տեսնում էի վիշապին ու իմ յենակէտը կրծող մկներին:

Սակայն դա բաւական չէ: Եթէ ես հասարակօրէն ըմբռնած լինէի, որ կեանքը իմաստ ունի, ես կարող էի այդ գիտենալ հանգիստ կերպով, կարող էի գիտենալ, որ դա իմ ճակատագիրն է: Բայց ես դրանով չէի հանգստանում: Եթէ ես նման լինէի անտառաբնակ այն մարդուն, որը հաւատացած է, թէ անտառը ոչ մի ելք չունի, ես դեռ կարող էի ապրել: Բայց ես նման էի անտառում մոլորուած այն մարդուն, որին տիրել է մոլորման սարսափը և նա այս ու այն կողմը նետուե-

լով կամենում է ճանապարհ դուրս գալ—գիտենալով որ իր իւրաքանչիւր քայլը առաւել ևս մոլորեցնում է նրան— և չէ կարող ջնտուել այս ու այն կողմը:

Ահա որն էր սարսափելին: Եւ որպէս զի ազատուեմ այդ սարսափից, ես ուզում էի ինձ սպանել: Ես սարսափ էի զգում այն բանից, որը ինձ սպասում էր. գիտէի, որ այդ սարսափը ընդհանուր կացութիւնից աւելի սարսափելի է, սակայն համբերութեամբ սպասել վախճանին՝ ես անկարող էի: Որքան էլ համոզեցուցիչ լինէր այն դատողութիւնը, թէ սրտի անօթը՝ միկնոյն է՝ պատառուելու է կամ որևէ բան պայթելու և ամեն ինչ վերջանալու, այնուամենայնիւ ես չէի կարող համբերութեամբ սպասել վախճանին: Խաւարի սարսափը սոսկալի մեծութեան էր, և ես կամենում էի շուտով, շատ շուտով անգատուել նրանից՝ պարանով կամ փամփուշտով:

Արդ, հէնց այդ զգացումն էր գլխաւորապէս, որ ուժգնօրէն քարշում էր ինձ դէպի ինքնասպանութիւն:

V

«Բայց գուցէ ես որևէ բան աննկատելի եմ թողել, չեմ հասկացել,—մի քանի անգամ ասում էի ինքս ինձ,— չէ կարող լինել, որ յուսահատութեան այս դրութիւնը մարդկանց համար յատուկ լինի»: Եւ ես իմ այս հարցերի բացատրութիւնը որոնում էի բոլոր այն գիտութիւնների մէջ, որոնց ձեռք են բերել մարդիկ:

ես տանջուելով ու երկար ժամանակ որոնում էի, և ոչ թէ պարզապէս հետաքրքրութիւնից ու թմրած գրութեամբ, այլ որոնում էի տառապելով, յամառօրէն, օր ու գիշերներով. որոնում էի այնպէս, ինչպէս կորստի մատնուածը՝ փրկութիւն. սակայն ոչինչ չգտայ:

Ես որոնում էի բոլոր գիտութիւնների մէջ, և սակայն ոչ միայն ոչինչ չգտայ, այլ և համոզուեցի, որ բոլոր նրանք, որոնք ինձ պէս որոնել են նրան գիտութեան մէջ, նոյնպէս ոչինչ չեն գտել: Եւ ոչ միայն ոչինչ չեն գտել, այլ և պարզապէս ընդունել են, որ այն, որը հասցրել է ինձ յուսահատութեան—կեանքի անիմաստութիւնը—մարդու համար մատչելի միակ և ոչ-կասկածելի գիտութիւնն է:

Ես որոնում էի ամենուրեք, և, շնորհիւ ուսման մէջ իմ անցկացրած կեանքի, նոյն և գիտական աշխարհի հետ իմ ունեցած կապերի, ինձ մատչելի էին հէնց իրանք՝ գիտութեան բազմապիսի բոլոր ճիւղերի՝ գիտնականները, որոնք չէին մերժում պարզելու իմ առջև իրանց գիտութիւնները ոչ միայն գրքերում, այլ և զրոյցների մէջ, որով ես իմացայ այն ամենը, ինչ գիտութիւնը պատասխանում է կեանքի հարցին:

Երկար ժամանակ ես չէի կարողանում հաւատալ այն բանին, որ գիտութիւնը ոչինչ այլ պատասխան չէ տալիս կեանքի հարցերին, քան այն, ինչ որ արդէն պատասխանում է: Երկար ժամանակ ինձ թւում էր—վնասելով գիտութեան եղանակի նշանաւորութիւնն ու լրջութիւնը, որը հաստատում էր մարդկային կեանքի հարցերի հետ ոչինչ ընդհանուր չունեցող իր ձևակերպումները—թէ ես ինչ-որ բան չեմ հասկանում: Երկար ժամանակ ես ընկճվում էի գիտութեան առջև, և ինձ

թւում էր, որ իմ հարցերի պատասխանների անհամապատասխանութիւնը ոչ թէ գիտութեան յանցանքի արդիւնքն է, այլ իմ տգիտութեան: Բայց այդ գործը ինձ համար մի կատակ, մի խաղալիք չէր, այլ իմ ամբողջ կեանքի գործը, և ես կամայակամայ եկել էի այն համոզման, որ իմ հարցերը օրինական միակ հարցերն են, որոնք ծառայում են իբրև հիմք իւրաքանչիւր գիտութեան, և որ ոչ թէ ես եմ յանցաւոր իմ հարցերով, այլ գիտութիւնը, եթէ նա յաւակնութիւն ունի պատասխանելու այդ հարցերին:

Իմ հարցը այն հարցն էր, որը ինձ յիսուն տարեկան հասակումս հասցրել էր ինքնասպանութեան. դա մի՞ իւրաքանչիւր մարդու մէջ ննջող՝ սկսած անմիտ երեխայից մինչև ամենախիմաստուն ծերունին՝ հասարակ հարց էր, մի հարց, առանց որի ապրելը անհնարին է. այդպէս զգացի ես գործնականութեան մէջ: Հարցը կայանում էր սրանում. «Ի՞նչ պիտի դուրս գայ այն բանից, որը ես այժմ անում եմ և պիտի անեմ վաղը. ինչ պիտի դուրս գայ իմ ամբողջ կեանքից»:

Այլ կերպ արտայայտած՝ հարցը պիտի տրուի այսպէս. «Ինչո՞ւ ապրեմ, ինչո՞ւ որևէ բան ցանկամ, ինչո՞ւ որևէ բան անեմ»: Կարելի է հարցը արտայայտել և այս ձևով. «Կո՞յ արդեօք իմ կեանքի մէջ մի այնպիսի իմաստ, որը չօղջանար ինձ սպասող անխուսափելի մահով»:

Հէնց այս միևնույն հարցի՝ տարբեր ձևերով արտայայտուած՝ պատասխանը ես որոնում էի մարդկային գիտութեան մէջ: Եւ ես գտայ, որ այդ հարցի վերաբերութեամբ մարդկային բոլոր գիտութիւնները կարծես բաժանուելիս լինեն երկու հակադիր կիսամթնո-

լորտների, որոնց հակառակ ծայրերի վրայ գտնվում են երկու բևեռներ. մէկը՝ բացասական է, միւսը՝ դրական. և սակայն ոչ մէկ և ոչ միւս բևեռի վրայ կեանքի հարցերի պատասխաններ չկան:

Գիտութիւնների մի շարքը կարծես չէ էլ ընդունում այդ հարցը, սակայն պարզ ու ճշգրիտ կերպով պատասխանում է իր առաջադրած անկախ հարցերին. դա փորձնական գիտութիւնների շարքն է, և նրանց ծայր-կէտի վրայ կանգնած է մաթեմատիկան. գիտութիւնների միւս շարքը ընդունում է հարցը, բայց չէ պատասխանում նրան. դա վերացական գիտութիւնների շարքն է, և նրանց ծայր-կէտի վրայ՝ բնագիտութիւնն է:

Իմ երիտասարդական վաղ անցեալից սկսած ինձ զբաղեցրել են վերացական գիտութիւնները, սակայն յետոյ մաթեմատիկական և բնական գիտութիւնները ինձ գրաւեցին, և մինչև որ պարզապէս չգրի առաջս իմ հարցը, մինչև որ դա ինքն իրան չհասունացաւ իմ մէջ, պահանջելով ստիպողական լուծումն, մինչ այդես բաւականանում էի իմ հարցի պատասխանների այն կեղծիքներով, որ տալիս է գիտութիւնը:

Երբեմն՝ փորձնական ասպարիզում՝ ես ինձ ասում էի. «Ամեն ինչ զարգանում է, շերտաւորվում, քայլում դէպի բարդացումն ու կատարելագործումն, և կան օրէնքներ, որոնք դեկավարում են այդ ընթացքը: Ինչ ամբողջի մասն ես: Ըմբռնելով, ըստ հնարաւորութեան, ամբողջութիւնը, ըմբռնելով և զարգացման օրէնքը, դու ըմբռնում ես նաև քո տեղը այդ ամբողջութեան մէջ, նոյն և՛ քեզ»: Որչափ էլ ամօթ լինի ինձ համար խոստովանելը, բայց կար ժամանակ, երբ ես

Պարծես բաւականանում էի դրանով: Դա հէնց այն ժամանակն էր, երբ ես ինքս բարդանում ու զարգանում էի: Իմ մկանունքները աճում ու ամրանում էին, յիշողութիւնս ճոխանում, մտածողութեան ու ըմբռնողութեան ընդունակութիւնս մեծանում, ես աճում ու զարգանում էի, և, զգալով իմ մէջ այդ աճումը, ինձ համար բնական էր մտածելը, թէ հէնց դա է ամբողջ տիեզերքի օրէնքը, որի մէջ ես կը գտնեմ իմ կեանքի հարցերի լուծումը: Սակայն եկաւ ժամանակը, երբ անեցումը իմ մէջ կանգ առաւ. ես զգացի, որ այլ ևս չեմ զարգանում, այլ ցամաքում եմ, մկանունքներս թուլանում, ատամներս ընկնում են. և ես տեսայ, որ այդ օրէնքը ինձ ոչ միայն ոչինչ չէ բացատրում, այլ և այդպիսի օրէնք երբէք գոյութիւն չէր էլ կարող ունենալ և որ ես ընդունել եմ իբրև օրէնք այն, ինչ որ գտել եմ իմ մէջ կեանքի որոշ շրջանում: Ես աւելի խստօրէն վերաբերուեցի այդ օրէնքի ձևակերպութեանը. ուստի և ինձ համար պարզուեց, որ անվախճան զարգացման օրէնք չէ կարող լինել. պարզուեց, որ ասել թէ՛՝ անվախճան տարածութեան և ժամանակի մէջ ամեն ինչ զարգանում է, կատարելագործվում, բարդանում, շերտաւորվում, դա՛ նշանակում է ոչինչ չասել: Իրանք բոլորը բաւեր են առանց նշանակութեան, որովհետև անվախճանութեան մէջ չկայ ոչ մի բարդ, ոչ մի հասարակ բան, ոչ առջև և ոչ ետև, ոչ լաւագոյն և ոչ վատագոյն:

Դիւաւորը սակայն այն է, որ իմ հարցը անձնական է. ինչ բան եմ ես իմ ցանկութիւններով.— մնում էր բոլորովին առանց պատասխանի: Եւ ես հասկացայ, որ այդ գիտութիւնները չափազանց հետաքրքրական

են, չափազանց գրաւիչ, սակայն այդ ճշգրիտ ու պարզ գիտութիւնները խոտոր յարաբերական են իրանց կցորդութեամբ կեանքի հարցերին. որ չափով որ պակաս է նրանց կցորդութիւնը կեանքի հարցերում, այն չափով նրանք ճշգրիտ են ու պարզ. որ չափով նրանք աւելի ճգնում են լուծումն տալ կեանքի հարցերին, այն չափով նրանք դառնում են աւելի անհասկանալի և ոչ-հրապուրիչ: Եթէ դիմելու լինես այդ գիտութիւնների այն ճիւղին, որը ճգնում է լուծումն տալ կեանքի այդ հարցերին—Փիզիօլօգիային (ճիւղին), հոգեբանութեանը, բիօլօգիային, սօցիօլօգիային, այդ դէպքում կը հանդիպես մտքի ապշեցուցիչ աղքատութեան, մեծագոյն անորոշութեան, ոչնչով չարդարացուած յաւակնութեան՝ իրանց չվերաբերող հարցերի լուծման տեսակէտից և մի մտածողի անվերջ հակասութիւններին միւսների հետ և նոյն իսկ՝ ինքն իրան հետ: Եթէ դիմելու լինես գիտութիւնների այն ճիւղին, որը չէ զբաղվում կեանքի հարցերի լուծմամբ, բայց պատասխանում է իր գիտական իրայատուկ հարցերին, այդ դէպքում կը մնաս հիացած մարդկային խելքի գօրութեան վրայ, սակայն նախապէս պէտք է իմանաս, որ կեանքի հարցերին պատասխան չկայ: Այդ գիտութիւնները ուղղակի ժխտում են կեանքի հարցը: Նրանք ասում են. «Այն հարցին, թէ դու ինչ բան ես և ինչո՞ւ ես ապրում, մենք պատասխան չունենք և զբանով չենք զբաղվում. իսկ եթէ քեզ հարկաւոր է գիտենալ լոյսի օրէնքները, քիմիական միութիւնները, օրգանիզմների զարգացման օրէնքը, եթէ քեզ հարկաւոր է գիտենալ մարմինների օրէնքը, նրանց ձևն ու թուրքի և մեծութիւնների յարաբերութիւնը, եթէ քեզ

հարկաւոր է գիտենալ քո խելքի օրէնքները, այդ դէպքում մենք ունենք այդ ամենի պարզ, ճշգրիտ և անվիճելի պատասխանները»:

Առհասարակ փորձնական գիտութիւնների յարաբերութիւնը կեանքի հարցի վերաբերմամբ կարող է արտայայտուել այսպէս: Հարց. ինչո՞ւ եմ ապրում: Պատասխան. անվախճան մեծ տարածութեան մէջ, անվախճան երկար ժամանակում, անվախճան փոքր մասնիկները կիրպարանափոխվում են անվախճան բարդութեան մէջ, և երբ դու կրմբոնես այդ կերպարանափոխութիւնների օրէնքները, այն ժամանակ կրմբոնես նաև, թէ ինչո՞ւ ես ապրում երկրի վրայ:

Երբեմն վերացականութեան ապարիզում ես ինձ ասում էի. «Ամբողջ մարդկութիւնը ապրում է, զարգանում հոգեկան սկզբունքների, իդէալների հիման վրայ, որոնք նրան ղեկավարում են: Այդ իդէալները արտայայտվում են կրօնների, գիտութիւնների, արուեստների, պետականութեան ձևերի մէջ: Այդ իդէալները հետզհետէ դառնում են բարձր և բարձր, և մարդկութիւնը ընթանում է դէպի բարձրագոյն երջանկութիւնը: Ես մարդկութեան մասն եմ, ուստի և իմ կոչումը կայանում է նրանում, որ ես նպաստեմ մարդկային իդէալների գիտակցմանը և իրականացմանը»: Եւ ես իմ թուլամտութեան շրջանում դրանով քաւականանում էի. սակայն հէնց որ պարզ կերպով կանգնեց իմ մէջ կեանքի հարցը, այդ ամբողջ թէօքիան մի ակնթարթում կործանուեց: Չշեշտելով այն անազնիւ անճշտութեան վրայ, որով այդ շարքի գիտութիւնները արտաբերում են իբրև ընդհանուր եզրափակումներ՝ մարդկութեան փոքր մասի ուսումնասիրու-

թեամբ. չընդունելով այդ հայեացքի զանազան կողմնակիցների փոխադարձ հակասութիւնների վրայ, թէ ինչո՞ւնն են կայանում մարդկութեան իղէալները.— այդ հայեացքի տարօրինակութիւնը, եթէ չսսեմ անմտութիւնը, կայանում է նրանում, որ պատասխանելու համար իւրաքանչիւր մարդու առջև դրուած այն հարցին, թէ՛ «ի՞նչ եմ ես», կամ՝ «ի՞նչ եմ անում», կամ՝ «ի՞նչ անեմ»,—մարդ պէտք է նախ լուծի մի հարց. ի՞նչ բան է իրան անձանօթ ամբողջ մարդկութիւնը, որից նրան յայտնի է նրա մի աննշան մասնիկը մի աննշան ժամանակաշրջանում: Որպէս զի մարդ հասկանայ, թէ ինչ է ինքը, պէտք է ամենից առաջ հասկանայ, թէ ինչ է այդ ամբողջ խորհրդաւոր մարդկութիւնը՝ կազմուած այնպիսի մարդկանցից. որոնք՝ ինչպէս և ինքը՝ չեն հասկանում իրանք իրանց: Պէտք է խոստովանեմ, որ կար ժամանակ, երբ ես դրան հաւատում էի: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ ես ունէի իմ ցանկութիւնները արժայատող սիրած իղէալներ, ըստ որում ես աշխատում էի հնարել մի այնպիսի թէօրիա, որի հիմամբ կարողանայի նայել իմ ցանկութիւնների վրայ՝ որպէս մարդկութեան օրէնքի վրայ: Բայց հէնց որ իմ հոգու մէջ բարձրացաւ կեանքի հարցը իր ամբողջ պարզութեամբ, այդ պատասխանը անմիջապէս յօդս ցնդեց: Եւ ես հասկացայ որ՝ ինչպէս որ փորձնական գիտութիւնների մէջ կան իսկական գիտութիւններ և կիսագիտութիւններ, որոնք փորձում են պատասխաններ տալ իրանց չվերաբերող հարցերին, այնպէս էլ այս ասպարիզում ես հասկացայ, որ կան ամենատարածուած գիտութիւնների ամբողջ շարքեր, որոնք նոյն կերպ ճգնում են պատասխանելու

իրանց չվերաբերող հարցերին: Այդ ասպարիզի կիսագիտութիւնները—իրաւաբանական գիտութիւնները, սօցիալ-պատմական—փորձում են լուծել մարդու հարցերը նրանով, որ վրանցից իւրաքանչիւրը իր տեսակէտից որպէս թէ լուծում է ամբողջ մարդկութեան կեանքի հարցը:

Սակայն՝ ինչպէս որ փորձնական գիտութիւններին ասպարիզում անկեղծօրէն հարց տուող մարդը, թէ ինչպէս պէտք է ապրել, չէ կարող բաւականանալ այս պատասխանով՝ «ուսուցիչները անվախճան տարածութեան մէջ անվախճան մանր մասնիկների ժամանակով ու բարդութեամբ անվախճան փոփոխութիւնները և այն ժամանակ դու կը հասկանաս կեանքը», հէնց միևնոյն կերպ անկեղծ մարդը չէ կարող բաւականանալ այս պատասխանով. «ուսուցիչները ամբողջ մարդկութեան կեանքը, որի ոչ սկիզբը, ոչ էլ վախճանը մենք անկարող ենք իմանալու և որի փորձիկ մասնիկն անգամ չգիտենք, և այն ժամանակ դու կը հասկանաս քո կեանքը: Հէնց միևնոյն կերպ՝ ինչպէս փորձնական կիսագիտութիւնների մէջ՝ այս կիսագիտութիւններն ևս այն չափով լցուած են մթութիւններով, անճշտութիւններով, անմտութիւններով ու հակասութիւններով, որ չափով որ նրանք շեղվում են ինդիքների բուն էութիւնից: Փորձնական գիտութեան նպատակն է՝ նւթական երևոյթների պատճառական հետևողականութիւնը: Բաւական է փորձնական գիտութիւնը փորձ անէ մտցնելու իր մէջ վախճանական պատճառի ինդիքը, որպէս զի ստացուի անհեթեթութիւն: Վերացական գիտութեան նպատակն է՝ կեանքի անպատճառական էութեան գիտակցութիւնը: Բաւա-

կան է մտցնել նրա մէջ պատճառական երևոյթների հետախուզութիւնը, ինչպէս օրինակ՝ սօցիալական, պատմական երևոյթները, որ ստացուել միևնոյն անհեթեթութիւնը:

Փորձնական գիտութիւնը այն ժամանակ միայն տալիս է գրական գիտութիւն և արտայայտում մարդկային խելքի վեհութիւնը, երբ նա չէ մտցնում իր հետախուզութիւնների մէջ վախճանական պատճառը: Եւ, ընդհակառակը, վերացական գիտութիւնը այն ժամանակ գիտութիւն է և արտայայտում մարդկային մտքի վեհութիւնը, երբ նա միանգամայն հեռացնում է պատճառական երևոյթների հետևողականութեան հարցերը և քննում մարդուն միմիայն վախճանական պատճառի տեսակէտից: Այդպէս է գիտութիւնը այդ ասպարիզում, որը կազմում է նրա բեկոր—բնագանցութիւնը կամ փիլիսոփայութիւնը: Այդ գիտութիւնը պարզապէս ղնում է այս հարցը. ի՞նչ եմ ես և ի՞նչ՝ ամբողջ տիեզերքը. ինչո՞ւ եմ ես և ինչո՞ւ է ամբողջ տիեզերքը: Եւ իր գոյութեան օրից նա միշտ միակերպ է պատասխանում: Գաղափարն է արգեօք սուբստանցիան, հոգի՞ն թէ՞ կամքն է անուանում փիլիսոփան կեանքի էութիւնը, որ գտնվում է իմ մէջ և ամբողջ աշխարհի մէջ. փիլիսոփան միայն մի բան է ասում. որ այդ էութիւնը կայ և որ ես էլ միևնոյն էութիւնն եմ: Բայց ինչո՞ւ համար է այն. նա չգիտէ և չէ պատասխանում, եթէ նա ճշմարիտ մտածող է: Ես հարցնում եմ. ինչո՞ւ գոյութիւն ունենայ այդ էութիւնը: Ի՞նչ դուրս կը գայ այն բանից, որ նա գոյութիւն ունի և պիտի ունենայ... Եւ փիլիսոփայութիւնը ոչ միայն չէ պատասխանում, այլ և ինքը նոյն բանն է հարցնում:

Եւ եթէ դա ճշմարիտ փիլիսոփայութիւն է, ապա նրա ամբողջ աշխատանքը միմիայն կայանում է նրանում, որ այդ հարցը ղնի պարզ կերպով: Եթէ նա ամուր է կանգնած իր նպատակի առջև, ապա նա չէ կարող այլ կերպ պատասխանել այս հարցին. «Ի՞նչ եմ ես և ամբողջ տիեզերքը». «Ամեն բան և ոչինչ». իսկ հարցին թէ՛ «Ինչո՞ւ», «Ինչո՞ւ... չգիտեմ»:

Այնպէս որ՝ ինչպէս ուզում ես շուռ տուր փիլիսոփայութեան այդ վերացական պատասխանները, այնուամենայնիւ երբէք չես ստանալու պատասխանի նմանող մի բան. և դա ո՛չ այն պատճառով, որ պարզ և փորձնական շրջանում նրա պատասխանը իմ հարցին չէ վերաբերում, այլ նայն, որ այստեղ, ուր մտաւոր ամբողջ աշխատանքը ուղղուած է գլխաւորապէս իմ հարցին, չկայ պատասխան, իսկ պատասխանի փոխարէն ստացվում է միևնոյն հարցը, միայն բարդուած ձևով:

VI

Կեանքի հարցերին պատասխաններ որոնելու մէջ ես միանգամայն նոյն կացութիւնն եմ զգացել, ինչ զգում է անտառում մոլորուած մարդը:

Դուրս է եկել տափարակի վրայ, բարձրացել ծառը և պարզապէս տեսել անսահման տարածութիւններ, բայց տեսել է և այն, որ տուն չկայ այնտեղ և լինել էլ չէ կարող. գնում է խորքը, գնում է խաւարով և տեսնում խաւար, տեսնում, որ այնտեղ էլ տուն չկայ ու չկայ:

Այդպէս մուրրուած շրջում էի ես մարդկային գիտութիւնների անտառում՝ մաթեմատիկական և փորձնական գիտութիւնների լուսամուտների միջից, —որոնք բաց էին անում իմ առջև պարզ հօրիզօններ, բայց այնպիսի հօրիզօններ, որոնց օւղղութեամբ տներ լինել չէին կարող, — նոյն և վերացական գիտութիւնների խաւարի միջից, որոնց միջով ես խորասոյզ էի լինում առաւել խոլ խաւարի մէջ և այն չափով, որ չափով առաջ էի շարժւում, և վերջապէս համոզուեցի, որ ելք չկայ և չէ էլ կարող լինել:

Անձնատուր լինելով գիտութիւնների լուսաւոր մասին, հասկանում էի, որ ես միմիայն իմ հայեացքն եմ հեռացնում իսկական հարցից: Որքան էլ իմ առաջը բացուող հօրիզօնները գրաւիչ ու պարզ լինէին, որքան էլ գրաւիչ լինէր խորասուզումը այդ գիտութիւնների անվախճանութեան մէջ, ես արդէն հասկանում էի, որ դրանք, այդ գիտութիւնները, առաւել պարզ են այն չափով, որ չափով պակաս կարեօք են նրանք ինձ համար, պակաս պատասխանում իմ հարցին:

Հարկաւ, ես գիտեմ այն ամենը, — առում էի ես ինձ, — ինչ որ գիտութիւնը այնպէս յամառօրէն ցանկանում է իմանալ, բայց իմ կեանքի իմաստի վերաբերեալ հարցին այդ ճանապարհի վրայ չկայ պատասխան: Վերացական ասպարիզում սակայն ես հասկանում էի, որ չնայելով նրան, կամ հէնց նրա համար, որ գիտութեան նպատակը ուղղուած էր ուղղակի իմ հարցի պատասխանի կողմը, չունի այլ պատասխան, բացի այն, ինչ որ ես ինքս եմ տուել ինձ. — ինչ իմաստ ունի իմ կեանքը: — Ո՛չ մի: — Կամ՝ ինչ դուրս կը գայ իմ կեանքից: — Ոչինչ: — Կամ՝ ինչո՞ւ գոյու-

թիւն ունի այն ամենը, ինչ որ գոյութիւն ունի, և ինչո՞ւ գոյութիւն ունեմ ես: — Նրա համար, որ գոյութիւն ունի:

Հարցնելով մարդկային գիտութիւնների մի կողմին, ես ստացայ անհամար քանակութեամբ ճշգրիտ պատասխաններ այն հարցերի վերաբերմամբ, որոնց մասին ես չէի հարցրել. աստղերի քիմիական բաղադրութիւնների մասին, Հերակլեան համաստեղութեան մէջ արևի շարժման, մարդու և տեսակների ծագման, անսահման մանր ձևերի, եթերի անկշիռ մասնիկների մասին. սակայն գիտութիւնների այդ ասպարիզի պատասխանը իմ հարցին, թէ ինչո՞ւն է իմ կեանքի իմաստը, մէկ հատ էր. — դու այն ես, ինչ որ դու քու կեանքն ես համարում. դու՝ մասնիկների ժամանակաւոր, պատահական կապակցութիւնն ես: Այդ մասնիկների փոխադարձ ներգործութիւնը, փոփոխութիւնը արտադրում են քո մէջ այն, ինչ որ դու քո կեանքն ես համարում: Այդ կապակցութիւնը կը շարունակուի որող ժամանակ, ապա այդ մասնիկների փոխադարձ ներգործութիւնը կը վերջանայ. և կը վերջանայ այն, որը դու կեանք ես անուանում, որով կը վերջանան նաև քո բոլոր հարցերը: Ի՞նչ մի ինչ-որ բանից պատահաբար կծկած գնդիկ ես: Գնդիկը նեխւում է: Այդ նեխումը գնդիկը իր կեանքն է համարում: Կը փշրուի գնդիկը, կը վերջանան նաև նեխումն ու բոլոր հարցերը: Այդպէս է պատասխանում գիտութիւնների պարզ կողմը և ուրիշ ոչինչ չէ կարող ասել, եթէ միայն նա խստօրէն հետևում է իր հիմունքներին:

Այդօրինակ պատասխանով ակնբեր է դառնում այն, որ պատասխանը իսկական հարցերին չէ պա-

տասխանում: Ինձ համար կարևոր է գիտենալ իմ կեանքի իմաստը, իսկ որ նա անվախճանի մասնիկն է՝ ոչ միայն նրան չէ հաղորդում որևէ իմաստ, այլ ոչնչացնում ամեն հնարաւոր իմաստ:

Միևնոյն անհասկանալի համաձայնութիւնները, որ կայացնում է փորձնական, ճշգրիտ գիտութեան այդ կողմը վերացականութեան հետ, երբ շեշտվում է, թէ կեանքի իմաստը կայանում է զարգացման և այդ զարգացմանը նպաստման մէջ,—իրանց անորոշութեան և անճշտութեան շնորհիւ չեն կարող համարուել պատասխաններ:

Գիտութեան միւս կողմը՝ վերացականը, երբ նա խստորէն կանգնած է իր հիմունքների վրայ, հարցին ուղղակի պատասխանելով ամենուրեք և բոլոր դարերում պատասխանում է և պատասխանել է միևնոյնը. տիեզերքը ինչ-որ մի անվախճան և անհասկանալի բան է: Մարդկային կեանքը այդ անհասանելի «ամենի» անհասանելի մասնիկն է: Ես կրկին դուրս եմ գցում վերացական և փորձնական գիտութիւնների այն բոլոր համաձայնութիւնները, որոնք կազմում են կիսազիտութիւնների ամբողջ բալաստը, աւելորդ բեռը, այսպէս կոչուած իրաւաբանական, քաղաքական, պատմական կիսազիտութիւնները: Այդ գիտութիւնների մէջ ևս անճիշտ կերպով մտցվում են զարգացման, կատարելագործման գաղափարները այն տարբերութեամբ սակայն, որ այնտեղ՝ ամեն ինչի զարգացումն է, իսկ այստեղ մարդկային կեանքի: Անճշտութիւնը միատեսակ է. զարգացումը, կատարելագործումը անվախճանի մէջ չէ կարող ունենալ ո՛չ նպատակ, ո՛չ ուղղութիւն և այդ տեսակէտից իմ հարցին ևս նա ոչինչ չէ պատասխանում:

Իսկ այնտեղ, որտեղ վերացական գիտութիւնը ճշգրիտ է, այսինքն իսկական փիլիսոփայութեան մէջ—ոչ այն, որին Շօպէնհաուէրը անուանում է պրօֆէսօրական փիլիսոփայութիւն, որի ծառայութիւնը բոլոր գոյութիւն ունեցող երևոյթների բացառապէս ըստ նոր փիլիսոփայական սիւնակների դասաւորման մէջ է և նրանց նոր անուններ հաղորդելու—այնտեղ, որտեղ փիլիսոփան աչքից չէ վրիպեցնում էական հարցը, պատասխանը միշտ միատեսակ է, մի պատասխան՝ որ դրել են Սօկրատը, Շօպէնհաուէրը, Սոդոմոնը և Բուդդան:

«Մենք ճշմարտութեանը կը մօտենանք այն չափով միայն, որ չափով կը հեռանանք կեանքից,—ասում է Սօկրատը՝ պատրաստուելով մահուան:—Ի՞նչ բանի ենք ձգտում կեանքի մէջ մենք՝ ճշմարտութիւն սիրողներս: Ձգտում ենք՝ անջատուելու մարմնից և բոլոր այն չարիքներից, որոնք ըղիւսում են մարմնական կեանքից: Եթէ այդպէս է, ինչպէս ուրեմն չուրախանանք, երբ մահը մեզ մերձենում է:

«Իմաստունը ամբողջ կեանքի մէջ իր մահն է որոնում, ուստի և մահը նրա համար սարսափելի չէ»:

Բայց ահա թէ ինչ է ասում Շօպէնհաուէրը.

«Ըմբռնելով տիեզերքի ներքին էութիւնը իբրև կամք, և բոլոր երևոյթների մէջ՝ ընութեան մութ ոյժերի անգիտակցական ձգտումներից մինչև մարդու լիակատար գիտակցութեամբ գործողութիւնը. ընդունելով այդ կամքի միմիայն առարկայականութիւնը, մենք ոչ մի պարագայում չենք խուսափելու այն հետևանքից, որով կամքի ազատ ժխտման, ինքնոչնչացման հետ միասին կանյայտանան և բոլոր այն.

երևոյթները, այն մշտական ձգտումն ու հակումը առանց նպատակի ու հանգստի՝ առարկայականութեան բոլոր աստիճաններում, որի մէջ և որի միջոցով կազմուած է տիեզերքը, կանյայտանան հետևողական ձևերի հետ միասին նրա բոլոր երևոյթները իրանց ընդհանուր ձևերով, տարածութեամբ և ժամանակով, և վերջապէս՝ նաև նրա վերջին հիմնական ձևը— սուբիեկտն ու օբիեկտը: Չկայ կամր, չկայ պատկերացումն, չկայ նաև տիեզերքը: Մեր առջև, ի հարկէ, մնում է միմիայն ոչնչութիւնը: Բայց այն, որը ընդգիծմանում է դէպի ոչնչութիւն թեքուող այդ փոխանցմանը— մեր բնութիւնը չէ՞ որ միմիայն առ գոյութիւն ձգտող այդ կամքն է, որ կազմում է և՛ մեր սեփական, և՛ մեր տիեզերքի էութիւնը: Իսկ որ մենք այնպէս սարսափում ենք ոչնչութիւնից կամ, որ նոյն բանն է, այնքան ապրել ենք կամենում, նշանակում է միայն, որ մենք ոչ այլ ինչ ենք, եթէ ոչ կեանքի այդ կամեցողութիւնը, որից զատ՝ ոչինչ չգիտենք: Ուստի և այն, ինչ որ կը մնայ մեզ համար կեանքի լիակատար անչացումից, մեզ, որ տակաւին լի ենք կամքով, անշուշտ անչնչութիւն է. բայց, և ընդհակառակը, նրանց համար, որոնց մէջ կամքը իրանից դարձել ու հրաժարուել է, նրանց համար մեր այս անքան իրական տիեզերքը իր բոլոր արևներով ու ծիր-կաթիլներով ոչնչութիւն է»:

«Ունայնութիւն ունայնութեանց,--ասում է Սոգոմոնը.— ունայնութիւն ունայնութեանց և ամենայն ինչ ունայնութիւն է: Ի՞նչ օգուտ մարդուն՝ արևի տակ կատարած իր բոլոր աշխատանքներից: Մի ազգ զնում է և ուրիշ ազգ է գալիս, բայց երկիրը մնում

յաւիտեան: Ինչ որ եղել է, նոյնը պիտի լինի. ինչ որ գործուած է, նոյնը պիտի գործուի. և արևի տակ ոչինչ նոր բան չկայ: Կայ արդեօք մի այնպիսի բան, որի համար ասուէր, թէ «նայիր, սա նոր բան է». մեզանից առաջ անցած դարերի մէջ արդէն եղել են այդպիսիք: Չկայ անցեալի յիշատակը, նոյն և ապագայում լինելիքի յիշատակը՝ չէ մնալու ապագայում եկողների մէջ: Ես, էկկլէսիաստէսս, երուսաղէմի մէջ Իսրայէլի վրայ թագաւոր եղայ: Եւ իմ սրտին ևս յանձնեցի իմաստութեամբ քննելու և փորձելու այն ամենը, ինչ որ լինում է երկնքի տակ. այդ ծանր զբաղմունքը Աստուած տուեց մարդու որդիներին, որ նրանք վարժուեն դրանում: Արևի տակ բոլոր կատարուած գործերը տեսայ. և ահա բոլորն էլ ունայնութիւն ու հոգու տառապանք է... Ես իմ սրտի մէջ այսպէս խօսեցի. ահա ես մեծացայ ու երուսաղէմի մէջ ինձանից առաջ եկողներից ամենից աւելի իմաստութիւն ստացայ, և իմ սիրտը շատ իմաստութիւն ու գիտութիւն տեսաւ: Եւ իմ սիրտը թողցի՝ իմաստութիւնը ճանաչելու և խենթութիւնն ու յիմարութիւնը գիտենալու համար. հասկացայ, որ դա էլ հոգու տանջանք է: Որովհետև շատ իմաստութեան մէջ շատ տրտմութիւն կայ, և իր գիտութիւնը աւելացնողը՝ իր վիշտն է աւելացնում:

«Ասացի ես իմ սրտի մէջ. եկ այժմ ջեզ փորձեմ ուրախութեան միջոցով, ուստի և վայելէ բարիքներ. սակայն դա էլ ունայնութիւն է: Ծիծաղի մասին ես ասացի, թէ դա յիմարութիւն է, իսկ ուրախութեան մասին, թէ՛ ի՞նչ է սրա արածը: Սրտումս խորհեցի, որ մարմինս գիտով զուարթացնեմ և իմաստութեան առաջնորդութեամբ անմտութիւնը ճանաչեմ, որ

տեսնեմ, թէ որն է բարին մարդկանց որդիներն հա-
մար, որ պէտք է անէին նրանք երկնքի տակ իրանց
կեանքի բոլոր օրերում: Նախաձեռնեցի մեծամեծ գոր-
ծեր, ինձ համար տներ կառուցի և այգիներ տնկեցի:
Ինձ համար պարտէզներ ու դրախտներ շինեցի և նրանց
մէջ ամեն տեսակ պտղատու ծառեր տնկեցի: Ինձ
համար ջրամբարներ շինեցի, որպէս զի նրանցով ծառ
բուսցնող անտառը ուողոտի: Ծառաներ ու աղախիններ
ձեռք բերեցի և իմ տան մէջ ծնուած ծառաներ ու-
նեցայ. և ինձանից առաջ Երուսաղէմում եղողներից
ամենից աւելի արջառներ ու հօտեր եւ ունեցայ: Ինձ
համար նաև՝ արծաթ ու ոսկի, թագաւորներից ու գա-
ւառներից գանձեր դիզեցի. ձեռք բերեցի ինձ մօտ եր-
զիչ այրեր ու կանայք և մարդկանց որդիների ամեն
տեսակ շքեղութիւն ու զուարճութիւններ: Եւ Երու-
սաղէմում ինձանից առաջ եղողների մէջ ամենից մեծը
եւ եղայ ու բարգաւաճեցի. և իմ իմաստութիւնն էլ
ինձ մօտ էր մնում: Եւ իմ աչքերի ամեն ցանկութիւնը
եւ նրանցից չարգելեցի և իմ սիրտը՝ ամեն տեսակ ու-
րախութիւնից զուրկ չթողեցի: Եւ եւ իմ ձեռքերի
կատարած բոլոր գործերի և կատարելու համար իմ
գործ զրած ամեն մի աշխատանքիս վրայ նայեցի, և
ահա՛ բոլորը ունայնութիւն է ու հոգու տանջանք, և
ոչ մի օգուտ չկար նրանցից արևի տակ: Ու դարձայ
եւ տեսնելու՝ իմաստութիւնը, նաև յիմարութիւնն ու
անմտութիւնը... Սակայն իմացայ, որ նրանց բոլորին
էլ պատահած դիպուածը միատեսակ է: Այն ժամանակ
եւ իմ սրտի մէջ ասացի. որովհետև անմիտին պատա-
հածը ինձ էլ պիտի պատահի, ուրեմն եւ ինչո՞ւ համար
աւելի իմաստուն եղայ. այդ պատճառով իմ սրտում

ասացի, որ այս էլ ունայնութիւն է: Որովհետև ինչպէս
անմիտի, այնպէս էլ իմաստունի համար յաւիտեան
յիշատակ չկայ. այժմ եղած բաները ապագայ ժամա-
նակում բոլորը պիտի մոռացուեն, և, աւաղ, իմաս-
տունն էլ անմիտի հետ հաւասար պիտի մեռնի: Եւ
զգուեցի եւ կեանքից, որովհետև արևի տակ եղած
գործերը ինձ զգուելի երևացին, որովհետև ամենայն
ինչ ունայնութիւն ու հոգու տանջանք է: Եւ զգուեցի
եւ արևի տակ գործ զրած իմ բոլոր աշխատանքից, ո-
րովհետև ինձանից յետոյ գալու մարդուն պիտի թող-
նեմ այն... Արևի տակ գործ զրած իր բոլոր աշխա-
տանքից ու սրտի տանջանքից ինչ օգուտ մարդուն:
Որովհետև նրա բոլոր օրերը լի են վշտերով, իսկ գոր-
ծերը՝ տրտմութիւնով. նոյն իսկ գիշեր ժամանակ նրա
սիրտը հանգստութիւն չունի: Դա էլ ունայնութիւն է:
Անգամ ուտելն ու խմելը, իր աշխատանքով իր հոգին
զուարճացնելը՝ մարդու ձեռքին չէ...

«Ամեն բանի և ամենքին միեւնոյնն է պատահում.
արդարին ու ամբարշտին, բարի մարդուն, մաքուրին
ու անմաքուրին. զո՞հ անողին ու զո՞հ չանողին պատա-
հածը միեւնոյն բանն է. ինչպէս է բարի մարդը, այն-
պէս է և մեղաւորը, երգում անող և երգումից երկըն-
չողը: Արևի տակ կատարուած բոլոր գործերի վատու-
թիւնը այն է, որ բոլորի ճակատագիրը մէկ է. և մարդ-
կանց որդիների սիրտը լցուած է չարութեամբ, և խն-
թութիւնը իրանց սրտի մէջ է, երբ նրանք կենդանի
են, իսկ յետոյ այն անցնում է մեռեալներին: Ով գտնը-
վում է կենդանիների մէջ՝ նա գեռ կունենայ յոյս, ո-
րովհետև ողջ շունը առաւել լաւ է, քան մեռած առիւ-
ծը: Կենդանիները գիտեն, որ պիտի մեռնեն, իսկ մի-

ուերները ոչինչ չգիտեն. ու չկայ նրանց համար վարձատրութիւն, որովհետև նրանց յիշատակը մոռացութեան է տրուած: Ե՛ւ սէրը նրանց, և՛ ատելութիւնը, և՛ նախանձը կորան այլ ևս, չունեն նաև և ո՛չ մի բաժին արևի տակ կատարուող գործերի մէջ»:

Այսպէս է ասում Սողոմոնը, կամ նա, ով գրել է այդ խօսքերը:

Ահա թէ ինչ է ասում հնդկական իմաստութիւնը:

Սակիա-Մունին՝ այդ երիտասարդ, բախտաւոր արքայորդին, որից թագցրել էին հիւանդութիւնները, ծերութիւնն ու մահը, գնում է զբօսանքի և տեսնում մի սոսկալի ծերունու՝ անատամ ու փցլնրոտ: Արքայորդին, որից մինչև այդօր թագնուած էր ծերութիւնը, զարմանում է ու հարցնում իր կառապանին, թէ ի՞նչ բան է դա և ինչո՞ւ այդ մարդը հասել է այդպիսի խղճալի, զգուելի դրութեան: Եւ երբ նա իմանում է, որ դա մարդկանց ընդհանուր ճակատագիրն է, որ իրան՝ երիտասարդ արքայորդուն ևս անխուսափելի կերպով նոյնն է սպառնում, նա այլ ևս չէ կարողանում գնալ զբօսելու և հրամայում է վերադառնալ, որպէս զի այդ մասին խորհի: Նա փակվում է միախնակ ու խորհում: Եւ, հաւանական է, հնարում է իր համար որևէ միեթարութիւն, որովհետև նա կրկին ուրախ ու երջանիկ դուրս է գալիս զբօսելու: Սակայն այս անգամ նրան հանդիպում է մի հիւանդ: Նա տեսնում է հիւժուած, կապտած, դողդողացող, պղտոր աչքերով մի մարդու: Արքայորդին, որից թագնուած էին հիւանդութիւնները, կանգ է առնում ու հարցնում, թէ ի՞նչ բան է դա: Եւ երբ նա իմանում է, որ դա հիւանդութիւն է, որին ենթակայ են բոլոր մարդիկ և որ նա ինքն

ևս, առողջ ու երջանիկ արքայորդին, հէնց վաղը կաթող է հիւանդանալ միևնոյն կերպ, նա կրկին տրամադրութիւն չէ ունենում զուարճանալու և հրամայում է վերադառնալ, կրկին որոնում է անդորրութիւն և, երևի, գտնում է, որովհետև երրորդ անգամ ևս գնում է զբօսնելու. բայց երրորդ անգամ նա տեսնում է մի նոր տեսարան ևս. նա տեսնում է, որ ինչ-որ բան են տանում: «Այդ ի՞նչ է»: Մեռած մարդ: Մինչ բան է մեռածը»,—հարցնում է արքայորդին: Նրան ասում են, որ մեռած լինել՝ նշանակում է լինել այնպէս, ինչպէս է այս մարդը: Արքայորդին մօտենում է ննջեցեալին, քաց է անում և նայում նրա վրայ: «Ի՞նչ կը լինի սքան յետոյ»,—հարցնում է արքայորդին: Նրան ասում են, որ մեռեալին կը թաղեն հողի մէջ: «Մեչո՛ւ»: Նրա համար, որ նա այլ ևս երբէք կենդանի չէ լինելու, և նրանից կարտագրուի միմիայն գարշահոտութիւն և որդեր: «Եւ դա բոլոր մարդկանց ճակատագիրն է: Ինձ հէտ էլ նոյնը կը լինի: Ի՞նձ կը թաղեն, և ինձանից էլ պիտի դուրս գայ գարշահոտութիւն, և ինձ պիտի ուտեն որդերը»: Այո՛: «Յետ դարձիր: Ես զբօսնելու չեմ գնայ և այլ ևս երբէք չեմ գնալու»:

Եւ Սակիա-Մունին չկարողացաւ կեանքում միեթարութիւն գտնել. նա վճռեց, որ կեանքը մեծագոյն չարիք է, և հողու ամբողջ զօրութիւնը գործադրեց, որպէս զի ազատուի նրանից ինքը և ազատի ուրիշներին: Եւ ազատի այնպէս, որ մահից յետոյ կեանքը որևէ կերպ չվերականգնուի, որպէս զի արմատից խապառ ոչնչացնէ կեանքը: Այդ է ասում հնդկական ամբողջ իմաստութիւնը:

Ահա այն շեշտակի պատասխանները, որ տալիս է

մարդկային իմաստութիւնը, երբ նա պատասխանում է կեանքի հարցին:

«Մարմնի կեանքը չարիք է և կեղծիք: Ուստի և այդ մարմնական կեանքի ոչնչացումը երանութիւն է, և մենք պէտք է ցանկանք այդ», — ասում է Սոկրատէսը:

«Կեանքը այն է, ինչ որ չպէտք է լինէր. չարիք է: և փոխանցումը դէպի ոչնչութիւն՝ կեանքի միակ երանութիւնն է», — ասում է Շոպէնհաուէրը:

«Տիեզերքում ամեն ինչ — և՛ յիմարութիւնը, և՛ իմաստութիւնը, և՛ հարստութիւնը, և՛ աղքատութիւնը, և՛ զուարճութիւնը, և՛ վիշտը — ամենայն ինչ ունայնութիւն է և դատարկութիւն: Մարդը կը մեռնի և ոչինչ չի մնայ: Եւ դա յիմարութիւն է», — ասում է Սոդոմոնը:

«Տառապանքների, թուլացման, ծերութեան և մահուան անխուսափելիութեան գիտակցութեան հետ ապրել չէ կարելի. անհրաժեշտ է անձը կեանքից ազատել, կեանքի ամեն հնարաւորութիւնից», — ասում է Բուդդան:

Եւ այն, ինչ որ ասացին այս զօրեղ գլուխները, ասում էին, մտածում ու զգում նրանց պէս միլիոն միլիոնաւոր մարդիկ: Եւ մտածում, և զգում եմ նաև ես:

Այսպէս ուրիմն՝ գիտութիւնների շրջանում իմ թափառումները ոչ միայն ինձ դուրս չբերին իմ յուսահատութիւնից, այլ միմիայն սաստկացրին այն: Գիտութիւններից մէկը չպատասխանեց կեանքի հարցին, միւսը սակայն շեշտակի պատասխանեց, հաստատելով իմ յուսահատութիւնն ու ցոյց տալով, որ այն, որին ես հասել եմ, իմ մոլորումների արդիւնքը չէ, խելքիս հիւանդագիւն գրութեան, ընդհակառակը, նա հաստատեց իմ առջև այն, որ ես մտածել եմ ուղիղ և միացել

մարդկութեան զօրեղ գլուխների հղրափակումներին:

Ինքս ինձ խաբելու կարիք չունեմ: Ամենայն ինչ ունայնութիւն է: Երջանիկ է նա, ով չէ ծնուել. մահը կեանքից լաւ է. պէտք է նրանից ազատուել:

VII

Գիտութեան մէջ չգտնելով բացատրութիւն, ես այդ բացատրութիւնը սկսեցի որոնել կեանքի մէջ, յոյս ունենալով գտնել այն՝ ինձ շրջապատող մարդկանց մէջ: Եւ ես սկսեցի ինձ նման մարդկանց զննել, թէ ինչպէս են ապրում նրանք իմ շուրջը և ինչպէս են վերաբերում այն հարցին, որը ինձ հասցրել է յուսահատութեան:

Եւ ահա թէ ինչ գտայ ես այն մարդկանց մէջ, որոնք ինձ հետ հաւասար կացութեան մէջ են գտնվում թէ ըստ կրթութեան և թէ կենցաղավարութեան:

Ես հասկացայ, որ իմ շրջանի մարդկանց համար կայ չորս ելք՝ ազատուելու համար այն սոսկալի կացութիւնից, որի մէջ գտնվում ենք մենք բոլորս:

Առաջին ելքը — դա անգիտութեան ելքն է: Նա կայանում է այն բանում, որ չգիտենաս, չհասկանաս այն, որ կեանքը չարիք է ու անիմաստութիւն: Այդ կարգի մարդիկ՝ մեծ մասամբ կանայք են ու տակաւին երիտասարդ մարդիկ կամ շատ բթամիտները, որոնք դեռ չեն ըմբռնել կեանքի այն խնդիրը, որը առաջ էք նետուել Շոպէնհաուէրի, Սոդոմոնի, Բուդդայի առջև:

Նրանք չեն տեսնում ո՛չ իրանց սպասող վիշապին, ո՛չ թփերը կրծոտող մկներին, այն թփերը, որոնց փարուել են նրանք ու ծծում մեղրի-կաթիլները: Սակայն նրանք մեղրի այդ կաթիլները լիզում են միմիայն մինչև մի որոշ ժամանակ. հէնց որ մի որևէ պատճառ նրանց ուշադրութիւնը թեքի վիշապի ու մկների կողմը՝ նրանց լիզելուն վերջ կը դրուի: Այդպիսիներից ես սովորելու ոչինչ չունեմ. չէ կարելի դադարել գիտեանալոյց այն, ինչ որ գիտես:

Երկրորդ ելքը — դա էպիկուրէականութեան ելքն է: Նա կայանում է այն բանում, որ գիտեանալով հանդերձ կեանքի անյուսալիութիւնը՝ օգտուես ժամանակաւորապէս այն բարիքներով, որոնք արդէն գոյութիւն ունեն. չնայես ո՛չ վիշապի վրայ, ո՛չ մկների, այլ ամենալաւ կերպով լիզես մեղրը, մանաւանդ եթէ այդպիսին շատ է կուտակուած: Այդ ելքը Սոդոմոնը այսպէս է արտայայտում:

«Եւ ես ուրախութիւնը գովեցի, որովհետև ոչինչ աւելի լաւ չկայ մարդու համար արևի տակ, քան ուտելը, խմելն ու զուարճանալը. դա է, որ ուղեկցում է նրա աշխատանքին՝ իր կեանքի օրերում, որ տուել է նրան Աստուած արևի տակ:

«Եւ այդպէս՝ գնահ, հացը ուրախութեամբ կեր ու գինիդ ուրախ սրտով խմիր... Քո սիրած կնոջը հետ կեանք վայելիր ունայն կեանքիդ բոլոր օրերում, որովհետև դա արևի տակ կատարած քո աշխատանքի ու կեանքի բաժինն է... Այն ամենը, ինչ որ կարող է գործել քո ձեռքը, ոյժով գործիր, որովհետև գնալու գերեզմանիդ մէջ ո՛չ գործ կայ, ո՛չ խորհուրդ, ո՛չ գիտութիւն և ո՛չ իմաստութիւն»:

Այսպէս է պահպանում մեր շրջանի մարդկանց մեծամասնութիւնը իր մէջ կեանքի կարելիութիւնը: Այն պայմանները, որոնց մէջ գտնվում են նրանք, տալիս են աւելի շատ բարիք, քան չարիք, իսկ բարոյական բթութիւնը տալիս է նրանց հնարաւորութիւն մոռանալու այն, որ իրանց ելքի արդասիքը պատահական է, որ չէ կարելի բոլորին էլ 1000 կին և պալատներ ունենալ, ինչպէս էր Սոդոմոնը, որ 1000 կին ունեցող իւրաքանչիւր մարդու վրայ ընկնում է 1000 մարդ առանց կնոջ և իւրաքանչիւր պալատի վրայ ընկնում է 1000 մարդ, որոնց ձակատի քրտինքովն է կառուցուել նա, և որ այն պատահականութիւնը, որը երէկ ինձ դարձրել էր Սոդոմոն, վաղը կարող է դարձնել ինձ Սոդոմոնի ստրուկ: Իսկ երևակայութեան բթութիւնը տալիս է այդ մարդկանց հնարաւորութիւն մոռանալու այն, ինչ հանգիստ չէր տալիս Բուդդային, — հիւանդութեան, ծերութեան և մահուան անխուսափելիութիւնը, որը այսօր կամ էգուց կաւերէ բոլոր այդ բաւականութիւնները:

Այդպէս խորհում ու զգում է մեր ժամանակի և կենցաղավարութեան մարդկանց մեծամասնութիւնը: Այն, ինչ որ այդ մարդկանցից ոմանք պնդում են, թէ իրանց մտքի բթութիւնն ու երևակայութիւնը՝ փիլիսոփայութիւն է, որը նրանք համարում են պօզիտիվ, ըստ իս՝ չէ տարբերում նրանց այն կարգի մարդկանցից, որոնք հարցը չտեսնելու համար մեղրն են լիզում: Եւ այդ տեսակի մարդկանց նմանուել՝ ես չկարողացայ չունենալով նրանց երևակայութեան բթութիւնը՝ ես անկարող էի արհեստական կերպով վերարտադրել այն իմ մէջ: Որպէս ամեն մի կենդանի մարդ, ես անկարող

էի դարձնել աչքս մկներից ու վիշապից, քանի որ մի անգամ նա արդէն տեսել էր նրանց:

Երրորդ ելքը—դա ոյժի և էներգիայի ելքն է: Նա կայանում է նրանում, որ ըմբռնելով կեանքի չարիք ու անիմաստութիւն լինելը՝ ոչնչացնես նրան: Այդպէս են վարվում սակաւաթիւ, գօրեղ և հետևողական մարդիկ: Ըմբռնելով նրանց գլխին խաղացուած կատակի ամբողջ անմտութիւնը և ըմբռնելով, որ մեռածների երանութիւնը առաւել է՝ քան կենդանիներիներ՝ և որ աւելի լաւ է անէանալ,—նրանք հէնց այդպէս էլ վարվում են ու միանգամից վերջ դնում այդ յիմար կատակին, մանաւանդ որ միջոցներ էլ կան: պարան՝ վզի համար, ջուր, դանակ՝ սիրտը խրելու, երկաթուղու վրայ՝ ֆնացքները: Եւ այդպէս վարուողները թիւը մեր շրջանի մարդկանց մէջ աւելի և աւելի ստուգարանում է: Եւ այդպէս վարվում են մարդիկ մեծ մասամբ կեանքի ամենայաւ շրջանում, երբ հոգու ոյժերը գլուխվում են ամենաձաղկեալ դրութեան մէջ, մինչդեռ մարդկային բանականութիւնը նուստացնող սովորութիւններ՝ իւրացուած են տակաւին շատ քիչ:

Ես տեսնում էի, որ դա ամենագովելի ելքն է, և ուզում էի ըստ այնմ վարուել:

Չորրորդ ելքը—դա թուլութեան ելքն է: Նա կայանում է նրանում, որ ըմբռնելով կեանքի չարիքն ու անիմաստութիւնը՝ այնուամենայնիւ քարշ տաս նրան, նախապէս համոզուած լինելով, որ դրանից ոչինչ չէ կարող դուրս գալ: Այդ կարգի մարդիկ գիտեն, որ մահը կեանքից լաւ է, բայց չունենալով ոյժ բանականորէն վարուելու՝ վերջ տալու շուտով կեղծիքին ու սպանելու իրանց՝ դեռ ևս ինչ-որ բան են ակնկալում:

Դա թուլութեան ելքն է, որովհետև եթէ ես ճանաչում եմ լաւագոյնը և նա իմ տիրապետութեան տակ է, ապա ինչո՞ւ չպէտք է յանձնուեմ այդ լաւագոյնին... Ահա ես գտնվում էի այդ կարգի մարդկանց մէջ:

Այդպէս՝ իմ կարգի մարդիկ չորս ճանապարհով են փրկվում սոսկալի հակասութիւնից: Որքան էլ ես լաւ էի իմ մտաւոր ուշադրութիւնը, այս չորս ելքից գատուրի չգտայ: Առաջին ելքը. չհասկանաս այն, որ կեանքը անմտութիւն է, ունայնութիւն ու չարիք և որ աւելի լաւ է չսպրելը: Ես չէի կարող չիմանալ այդ, և երբ մի անգամ իմացայ՝ այլ ես անկարող էի փակել աչքերս այդ բանի վրայ: Երկրորդ ելքը. օգտուես կեանքից այնպէս, ինչպէս որ նա այժմ կայ, առանց մտածելու ապագայի վերաբերմամբ: Այդ ևս անել ես չէի կարող: Ես, ինչպէս և Սակիա-Մուսին, չէի կարող որսի գնալ, երբ գիտէի ծերութեան, տառապանքի և մահուան գոյութիւնը: Իմ երեակայութիւնը շատ վառ էր: Բացի այդ՝ ես չէի կարող ուրախանալ քօպէական պատահականութեամբ, որը մի ակնթարթով միայն շարտում է ինձ իմ բաժին բաւականութիւնը: Երրորդ ելքը. ըմբռնելով, որ կեանքը չարիք է և յիմարութիւն՝ խզես այն, սպանես ինքդ քեզ: Ես այդ ըմբռնեցի, սակայն, չգիտեմ ինչո՞ւ, տակաւին չէի սպանում ինքս ինձ: Չորրորդ ելքը. ապրես Սողոմոնի և Շապէնհաուէրի գրութեամբ. գիտենալով հանդերձ, որ կեանքը քո գըլխին խաղացուած մի յիմար կատակ է, միևնոյն ժամանակ ապրես, լուացուես, հազնուես, ճաշես, խօսես և նոյն իսկ գրքոյկներ գրես: Դա ինձ համար զղուելի էր և տանջող, սակայն այնուամենայնիւ ես մնում էի այդ կացութեան մէջ:

Այժմ ես տեսնում եմ, որ եթէ ես ինձ չսպանեցի, ապա դրա պատճառը՝ իմ մտքերի անարդար լինելու աղօտ գիտակցութիւնն էր: Որքան էլ համոզիչ ու ոչ-կասկածելի լինէր իմ և իմաստուն մարդկանց մտքերի ընթացքը, որ ինձ հասցրեց կեանքի անխմաստութեան գաղափարին, իմ մէջ մտում էր մի անհասկանալի կասկած՝ դատողութիւններիս ճշմարտութեան նկատմամբ:

Կասկածը այսօրինակ էր. ես և իմ բանականութիւնը ընդունեցինք, որ կեանքը հակաբանական է: Եթէ չկայ բարձրագոյն բանականութիւն (նա չկայ և ոչ մի բան այդ ապացուցանել չէ կարող), ապա ուրեմն բանականութիւնը ինձ համար կեանքի ստեղծագործողն է: Եթէ չլինէր բանականութիւնը՝ ինձ համար կեանք էլ չէր լինի: Ի՞նչպէս ուրեմն այդ բանականութիւնը կարող է ժխտել կեանքը, երբ նա ինքն է կեանքի ստեղծագործողը: Կամ թէ՛ մի այլ կողմից. եթէ չլինէր կեանքը, չէր լինի և իմ բանականութիւնը, ուստի և բանականութիւնը կեանքի զաւակն է: Կեանքը ամեն ինչ է: Բանականութիւնը՝ կեանքի արգասիքն է. և այդ բանականութիւնը՝ ժխտում է հէնց նոյն կեանքը: Ես զգում էի, որ այստեղ ինչ-որ մի բան կայ:

Որ կեանքը մի անմիտ չարիք է, դա անկասկած է, — ասում էի ինքս ինձ: — Բայց ինքս ապրում էի և տակաւին ապրում եմ, և ապրել ու ապրում է ամբողջ մարդկութիւնը: Ուրեմն ի՞նչ: Ինչո՞ւ է ապրում, երբ կարող է չապրել: Ուրեմն ե՞ս եմ Շօպէնհաուէրի հետ այնքան խելացին, որ միայն ըմբռնեցի կեանքի անմաստ և չարիք լինելը:

Կեանքի դատարկութեան նկատմամբ դատողութիւնը այնքան էլ խորամիտ բան չէ, որովհետև շատ

վաղուց այդ անում էին բոլորը, նոյն և ամենահասարակ մարդիկ, բայց և այնպէս ապրել են ու ապրում: Ուրեմն ի՞նչ. նրանք բոլորն էլ ապրում են և երբէք չէ՞ն մտածում կասկածելու կեանքի խելացիութեան նկատմամբ:

Իմ գիտութիւնը՝ ամբապնդուած իմաստունների իմաստութեամբ՝ բացեց իմ առջև այն, որ տիեզերքում ամեն ինչ — գործարանաւոր թէ անգործարանաւոր — կառուցուած է չափազանց խելացի կերպով, միմիայն՝ իմ դրութիւնն է յիմար: Իսկ այդ խենթերը — մարդկանց անազին զանգուածներ — ոչինչ չգիտեն այն մասին, թէ ի՞նչպէս է կառուցուած տիեզերքում գործարանաւորն ու անգործարանաւորը, և թւում է նրանց, թէ կեանքը դրուած է անչափ խելացիօրէն:

Եւ իմ գլխում ծագում էր նաև այս միտքը. իսկ եթէ ես որևէ բան դեռ չեմ իմացել: ԶԷ որ չգիտութիւնը այդպէս է վարվում: ԶԸ որ չգիտութիւնը միշտ հէնց այդ է ասում:

Երբ նա որևէ բան չէ իմանում, նա ասում է, թէ յիմար բան է այն, ինչ որ ինքը չգիտէ: Իսկապէս դուքս է գալիս, որ կայ մարդկային մի ամբողջութիւն, որ ապրել և ապրում է՝ կարծես ըմբռնելով իր կեանքի իմաստը, ապա թէ ոչ՝ այդ չըմբռնած՝ նա ապրել չէր կարող. իսկ ես ասում եմ, որ այդ ամբողջ կեանքը անմտութիւն է, ուստի և ապրել չեմ կարողանում:

Ոչ ոք մեզ չէ արգելում ժխտել կեանքը ինքնասպանութեամբ: Բայց այդ պարագայում՝ սպանիր քեզ և դատողութիւն էլ չես անի: Չես հաւանում կեանքը՝ սպանիր քեզ: Բայց եթէ ապրում ես և չես կարողանում ըմբռնել կեանքի իմաստը, ապա դադարեցրո՛ւ այն

և մի պտոյտ զայ այդ կեանքի մէջ՝ պատմելով ու նկարագրելով այն, որ դու այդ կեանքը չես հասկանում: Մտել ես ուրախ ընկերութեան մէջ, բոլորը ուրախ են, բոլորը գիտեն, թէ ինչ են անում, իսկ թէ թեզ համար ձանձրալի է ու զգուելի՝ հեռացիր:

Իսկապէս ասած մենք՝ ինքնասպանութեան անհրաժեշտութեան մէջ համոզուածներս ու այն ի կատար չածողներս՝ ոչ այլ ինչ ենք, եթէ ոչ միանգամայն թուլամորթ մարդիկ, անհետևողականներ և, պարզն ասած, իրանց յիմարութեամբ պարծեցող անմիտ մարդիկ, ինչպէս յիմարը իր նախընտան տոպրակով:

Չէ՞ որ մեր իմաստութիւնը, որքան էլ նա հաստատուն լինի, չտուեց մեզ մեր կեանքի իմաստի գիտութիւնը: Իսկ ամբողջ մարդկութիւնը, կեանք շինողները, միլիոնաւոր մարդիկ՝ չունեն կասկած կեանքի իմաստի վերաբերութեամբ:

Իսկապէս շատ հին, հին ժամանակներից, կեանքի սկզբնաւորութեան օրից, որի մասին ես քիչ բան գիտեմ, մարդիկ ապրել են՝ ունենալով հանդերձ միևնոյն դատողութիւնը կեանքի դատարկութեան մասին,—որը ինձ ցոյց տուեց նրա անիմաստութիւնը,—այնուամենայնիւ ապրում էին, ապրում, տալով այդ կեանքին որոշ իմաստ:

Այն օրից, երբ սկսուեց մարդկանց կեանքը, նրանք՝ արդէն ունէին նրա իմաստը և վարում այդ կեանքը, որը և հասել է մինչև իմ օրերը: Այն ամենը, ինչ որ կայ իմ մէջ և իմ շուրջը,—մարմնականն ու անմարմինը,—այդ ամենը նրանց կեանքի գիտութեան արդասիքն է: Մտքի այն զէնքերը, որոնցով ես դատում ու դատապարտում եմ այդ կեանքը, այդ բոլորը ոչ թէ

իմ, այլ նրանց ստեղծածն է: Ես ինքս ծնուել, դաստիարակուել, աճել եմ՝ շնորհիւ նրանց: Նրանք գտան երկաթը, սովորեցրին անտառ կտրել, ընտելացրին կովեր, ձիեր, սովորեցրին ցանել, սովորեցրին միասին ապրել, կարգաւորեցին մեր կեանքը. նրանք սովորեցրին ինձ մտածել, խօսել: Եւ ես—որ նրանց արտադրութիւնն եմ, նրանց կերակրածը, խմեցրածը, նրանց սովորեցրածը, նրանց մտքերով ու խօսքերով մտածողը— ես ապացուցեցի, որ նրանք անհեթեթութիւն են:

«Այստեղ ինչ-որ բան պակաս է,—ասում էի ինքս ինձ:—Որևէ տեղ ես սխալուել եմ»: Մական ինչու՞մ էր սխալը, ես ոչ մի կերպ չէի կարողանում գտնել:

VIII

Բոլոր այն կասկածները, որ այժմ այսպէս թէ այնպէս ես կարողանում եմ արտայայտել որոշ կապակցութեամբ, առաջ՝ ես անկարող էի արտայայտել: Այն ժամանակ ես զգում էի, միայն, որ՝ ինչքան էլ տրամաբանօրէն անխուսափելի լինէին մեծագոյն մտածողներից ամբապնդուած իմ եզրակացութիւնները կեանքի ունայնութեան մասին, այնուամենայնիւ մի ինչ-որ բան նրանց մէջ պակասում էր: Արդեօք հէնց դատողութեան մէջ էր թէ՞ հարցը դնելու եղանակի, ես չգիտէի. սակայն զգում էի միայն, որ բանական համոզմունքը կատարեալ էր, բայց այդ՝ բաւական չէր: Այդ բոլոր եզրակացութիւնները ինձ չէին կարող համոզել

այնպէս, որ ես անէի այն, ինչ որ բղխում էր իմ դատողութիւններից, այսինքն՝ որ ես ինձ սպանէի: Եւ ես ճշմարիտը խօսած չէի լինի, եթէ ասէի, որ բանակաւորութեամբ եմ հասել այն մտքին, որին հասել եմ և չեմ սպանել ինձ: Բանականութիւնս գործում էր, բայց գործում էր և մի այլ բան, որը չեմ կարող անուանել ուրիշ կերպ, քան՝ կեանքի գիտակցութիւն: Գործում էր նաև այն զօրութիւնը, որը ստիպում էր ինձ ուշադրութիւն դարձնել սրա և ոչ նրա վրայ, և հէնց այդ զօրութիւնը դուրս բերեց ինձ իմ յուսահատ դրութիւնից և միանգամայն այլ ուղղութիւն տուեց իմ բանականութեանը: Այդ զօրութիւնը ստիպեց ինձ ուշադրութիւն դարձնել այն բանի վրայ, որ ես՝ ինձ նման հարիւրաւորների հետ՝ ամբողջ մարդկութիւնը չեմ կազմում, որ մարդկութեան կեանքը ինձ անծանօթ է:

Դիտելով իմ հասակակից մարդկանց սեղմ շրջանը, ես տեսնում էի միմիայն այն մարդկանց, որոնք խնդիրը չէին ըմբռնում, այլ ըմբռնում ու խլացնում էին այն՝ կեանքի արբեցումով, ըմբռնում ու դադար տալիս կեանքին, ըմբռնում ու թուլութեան շնորհիւ ապրում յուսահատ կեանքով: Եւ ուրիշ տեսակ մարդկանց ես չէի պատահել: Ինձ թւում էր, թէ գիտնականների, հարուստների ու պարապ մարդկանց սերտ շրջանը, որին ես պատկանում էի, կազմում է համայն մարդկութիւնը. իսկ այն՝ միլիարդներով՝ անցեալում ապրող և այժմ կենդանի՝ մարդիկ, դրանք մարդիկ չեն, այլ ինչ-որ անասուններ:

Որքան էլ տարօրինակ, անհաւատալի-անհասկանալի է երևում այժմ ինձ համար այն, թէ ինչպէս եմ ես կարողացել ինձ շրջապատողներին ամեն կողմից

գիտել, դատելով մարդկութեան կեանքի մասին, ինչպէս եմ մինչ այն աստիճան ծիծաղելի կերպով մոլորուել, որ մտածել եմ, թէ իմ Սողոմոնական և Շօպէնհաուէրական կեանքը իսկական կեանքն է, բնական կեանքը, իսկ միլիարդաւոր մարդկանց կեանքը՝ ուշադրութեան ոչ-արժանի մի հանգամանք, — որքան էլ դա այժմ ինձ համար տարօրինակ է, ես տեսնում եմ, որ դա այդպէս էր: Սեփական խելքի հպարտութեան մոլորութեամբ՝ ինձ կասկածից դուրս էր թւում, որ մենք Սողոմոնի և Շօպէնհաուէրի հետ հարցը դրել ենք միանգամայն ուղիղ և ճշմարիտ, որ այլ ոչինչ լինել չէր կարող, թւում էր այնքան կասկածից դուրս, որ թոյլ տայ միլիարդները պատկանում են նրանց, որոնք տակաւին չեն հասել հարցի ամբողջ խորութեան ըմբռնմանը, որ ես որոնում էի իմ կեանքի իմաստը, որ և ոչ մի անգամ չեմ մտածել, թէ «վերջապէս ինչ իմաստ են տալիս և էին իրանց կեանքին բոլոր այն միլիարդները, որոնք ապրել են անցեալում և ապրում են այժմ այս աշխարհում»:

Երկար ժամանակ ես ապրում էի խելագարութեան մէջ, որը առանձնապէս յատուկ է մեզ՝ ոչ խօսքերով, այլ գործի մէջ՝ ամենաազատամիտ և գիտնական մարդկանց: Բայց արդեօք իմ ինչ-որ ֆիզիքական մի տարօրինակ սիրոյ շնորհիւ էր՝ դէպի բանուորական ժողովուրդը, որը ստիպեց ինձ հասկանալ նրան և տեսնել, որ նա այնքան էլ յիմար չէ, ինչպէս մենք կարծում ենք. կամ՝ արդեօք շնորհիւ իմ համոզմունքի անկեղծութեան էր, որ ես ոչինչ չեմ կարող իմանալ, բացի այն, ինչ որ ես կարող էի անել իբրև լաւագոյն գործ — կախուել, — զգում էի միայն, որ եթէ ես կամենում

եմ ապրել և ըմբռնել կեանքի իմաստը, ապա այդ իմաստը պէտք է որոնել անշուշտ ոչ այն մարդկանց մէջ, որոնք կորցրել են կեանքի իմաստն ու կամենում են սպանել իրանց, այլ այն միլիարդ մարդկանց մէջ՝ անցեալում և այժմ ապրող՝ որոնք շինում են և իրանց ուսերին կրում իրանց և մեր կեանքը: Եւ ես դարձայ նայելու անցեալում և այժմ ապրող հասարակ ստուար մասսաների, ոչ-գիտնական և ոչ-հարուստ մարդկանց վրայ, և տեսայ միանդամայն այլ բան: Ես տեսայ, որ բոլոր այդ՝ անցեալում և այժմ միլիարդներով ապրող մարդիկ՝ բոլորը, սակաւ բացառութեամբ, չեն համապատասխանում իմ դասաւորութեանը, որ ես նրանց՝ խնդիրը չհասկացողներ համարել չեմ կարող, որովհետեւ նրանք իրանք էլ են զնում նոյն հարցը և անչափ հասարակօրէն պատասխանում նրան: Համարել նրանց էպիկուրէականներ՝ դարձեալ չեմ կարող, որովհետեւ նրանց կեանքը դասաւորվում է աւելի շատ զրկանքներով ու տառապանքներով, քան բաւականութիւններով: Համարել նրանց՝ իրանց անիմաստ կեանքի միացորդը անմիտ կերպով անցկացնող՝ ես դարձեալ չեմ կարող, որովհետեւ իրանց կեանքի իւրաքանչիւր գործողութիւնը, նոյն և մահը նրանք բացատրում են: Սպանել ինքն իրան՝ նրանք համարում են մեծագոյն չարիք: Դուրս էր գալիս, որ համայն մարդկութիւնը օժտուած է իմ կողմից չընդունուած և արհամարհուած մի ինչ-որ կեանքի իմաստի գիտութեամբ: Դուրս էր գալիս, որ բանական գիտութիւնը չէ տալիս կեանքի իմաստ, բացասում է կեանքը, այն իմաստը սակայն, որը միլիարդաւոր մարդիկ, համայն մարդկութիւնը հաղորդում է կեանքին, հիմնուած է

ինչ-որ ատելի մոլար գիտութեան վրայ: Բանական գիտութիւնը՝ յանձին գիտնականներին և իմաստուններին՝ կեանքի իմաստը ժխտում է, իսկ մարդկանց ստուար զանգուածները, համայն մարդկութիւնը ընդունում են այդ իմաստը՝ հակաբանական գիտութեան մէջ: Եւ այդ հակաբանական գիտութիւնը այն հաւատքն է, որը ես անկարող եղայ մի կողմ շարտել: Դա Աստուածն է 1 և 3, դա 6 օրում ստեղծագործութիւնն է, դեւերն ու հրեշտակները և այն ամենը, որը ես ընդունել չեմ կարող, քանի չեմ խելագարուած:

Սոսկալի էր իմ կացութիւնը: Գիտէի, որ բանական գիտութեան ճանապարհի վրայ ես ոչինչ չեմ գտնի, բացի կեանքի ժխտումից, իսկ այնտեղ՝ դաւանանքի մէջ՝ ոչինչ, բացի բանականութեան ժխտումից, որը առաւել ևս անհնարին է, քան կեանքի ժխտումը: Ըստ բանական գիտութեան՝ այնպէս էր դուրս գալիս, թէ իբր կեանքը չարիք է և մարդիկ գիտեն այդ չապրելը մարդկանցից է կախուած, իսկ նրանք ապրել են և ապրում, և ես էլ եմ ապրել, թէպէտև վաղուց գիտեմ այն ևս, որ կեանքը անիմաստութիւն է և չարիք: Ըստ դաւանանքի՝ դուրս էր գալիս, որ կեանքի իմաստը ըմբռնելու համար ես պէտք է հրաժարուեմ բանականութիւնից, այն բանից, որի համար իսկապէս հարկաւոր է իմաստը:

IX

Ստեղծվում էր մի հակասութիւն, որից դուրս գալու համար երկու ելք կար. կամ այն, ինչ որ ես անուանում էի բանական, այնքան էլ բանական չէր, ինչպէս կարծում էի ես. կամ այն, ինչ որ ինձ թւում էր բանականութիւնից դուրկ, այնքան էլ զուրկ չէր, ինչպէս կարծում էի ես: Եւ ես սկսեցի վերաստուգել իմ բանական գիտութեան դատողութիւնների ընթացքը:

Վերաստուգելով բանական գիտութեան դատողութիւնների ընթացքը՝ ես գտայ այն միանգամայն կանօնաւոր: Որ կեանքը ոչնչութիւն է՝ այդ մասին եզրակացութիւնը անխուսափելի էր, սակայն ես նկատեցի սխալը: Սխալը նրանումն էր, որ ես իմ դրած հարցին համապատասխան չէի մտածում: Հարցը այսօրինակ էր. ինչո՞ւ պէտք է ես ապրեմ, այսինքն՝ ի՞նչ մի այնպիսի իսկական, չոչնացող բան դուրս կը գայ իմ խարուսիկ ոչնչացուող կեանքից, ի՞նչ իմաստ ունի իմ վախճանական գոյութիւնը այս անվախճան տիեզերքի մէջ: Եւ որպէս զի կարողանամ պատասխանել այս հարցին, ես ուսումնասիրում էի կեանքը: Կեանքի բոլոր հնարաւոր հարցերի լուծումը, ըստ երեոյթին, ինձ չէին կարող բուականացնել, որովհետեւ իմ հարցը, որքան էլ նա սկզբում հոտարակ երեւայ, իր մէջ է պարփակում վախճանականը անվախճանով բացատրելու պահանջը և ընդհակառակը:

Ես հարցնում էի. ո՞րն է իմ կեանքի արտաքոյ ժամանակի, արտաքոյ պատճառի, արտաքոյ տարածու-

թեան նշանակութիւնը: Իսկ պատասխանում էի ես հարցին. ո՞րն է իմ կեանքի ժամանակաւոր, պատճառական, տարածական նշանակութիւնը... Դուրս եկաւ այն, որ մտքի երկար աշխատանքից յետոյ ես պատասխանեցի՝ ո՛չ մի:

Դատողութիւններիս մէջ ես շարունակ հաւասարեցնում էի վախճանականը վախճանականի հետ և անվախճանականը անվախճանականի հետ, թէև այլ կերպ էլ ես անկարող էի վարուել, ուստի և դուրս էր գալիս այն, ինչ որ պէտք է դուրս գար. զօրութիւնը զօրութիւն է, նիւթը նիւթ, կամքը կամք, անվախճանականը անվախճանական, ոչնչութիւնը ոչնչութիւն, որից յետոյ ոչինչ դուրս գալ չէր կարող:

Սա նման էր այն բանին, երբ մտածում ես լուծիկ հաւասարութիւններ մաթեմատիկայի մէջ, լուծում ես նոյնութիւններ: Մտածողութիւնների ընթացքը կանօնաւոր է, սակայն ի վերջոյ ստացվում է այս պատասխանը. Ա-ն հաւասար է Ա-ի, կամ՝ $X=X$, կամ՝ $0=0$. Նոյնը պատահեց և իմ դատողութիւնների հետ՝ իմ կեանքի նշանակութեան հարցի նկատմամբ: Այդ հարցի վերաբերեալ զիտութեան տուած պատասխանները՝ միմիայն նոյնութիւններ են:

Եւ յիրաւի՝ մաքուր ու զուտ գիտութիւնը, այն գիտութիւնը, որը սկսում է լիակատար կասկածով ամեն ինչի նկատմամբ, ինչպէս դա արեց Իեկարդը, մի կողմն է նետում հաւատքով թոյլատրած իւրաքանչիւր գիտութիւն և ամեն ինչ սկզբից հիմնում բանականութեան և փորձի օրէնքները վրայ,—և անկարող է տալ կեանքի հարցին մի այլ պատասխան, քան այն, ինչ որ ես ստացայ,—պատասխանը անորոշ է: Ինձ սկզբ-

բում միայն թուում էր, թէ գիտութիւնը զրական պատասխան տուեց — Շօպէնհաուէրի պատասխանը. — կեանքը չունի իմաստ, նա չարիք է: Սակայն երբ գործը վերաքննեցի, ես հասկացայ, որ պատասխանը զրական չէ, որ միայն իմ զգացումն է այդպէս արտայայտել այն: Բայց լրջօրէն արտայայտուած պատասխանը, ինչպէս որ նա արտայայտուած է և՛ բրամինների, և՛ Սողոմոնի, և՛ Շօպէնհաուէրի կողմից, դա՛ միմիայն անորոշ պատասխան է, կամ նոյնութիւն. — Օ-ն հաւասար է Օ-ի, կեանքը ոչնչութիւն է: Ըստ այդմ՝ փիլիսոփայական գիտութիւնը ոչինչ չէ ժխտում, այլ միայն պատասխանում է, որ այդ հարցը նա ինքը չէ կարող լուծել, որ լուծումը նրա համար մնում է անորոշ:

Ըմբռնելով այդ, ես հասկացայ և այն, որ իմ հարցին անհնարին է պատասխան որոնել բանական գիտութեան մէջ. և որ՝ բանական գիտութեան տուած պատասխանը միայն մի ցուցումն է այն բանի վրայ, որ պատասխան կարող է ստացուել բացառապէս այն դէպքում, երբ հարցը այլ կերպ դրուի, երբ դատողութեան մէջ ներմուծուի նաև վախճանականի և անվախճանականի յարաբերականութեան խնդիրը: Ես ըմբռնեցի այն ևս, որ սրբան էլ հաւատքի տուած պատասխանները լինեն անիմաստ և այլանդակ, նրանք ոյն առաւելութիւնն ունեն, որ իւրաքանչիւր պատասխանի մէջ մտցնում են վախճանականի և անվախճանականի յարաբերականութիւնը, առանց որի պատասխան չէ կարող լինել:

Ինչ ձևով էլ որ ես դնեմ այս հարցը՝ «ինչպէս ապրեմ», — պատասխանը կը լինի՝ Աստուծու օրհնքով:

Գրական ինչ դուրս կը գայ իմ կեանքից: Յաւիտենական տառապանքներ կամ յաւիտենական երանութիւն: Ո՛րպիսի իմաստ, որին մահը չօչնչացնի: Միութիւն անվախճան Աստուծու հետ, արքայութիւն:

Այնպէս որ, բացի բանական գիտութիւնից, որը ինձ համար միակն էր հանդիսանում, ես անխուսափելի կերպով բերուած էի այն մտքին, որ ապրող համայն մարդկութիւնը ունի ինչ-որ մի այլ՝ բանականութիւնից զուրկ գիտութիւն ևս — ապրելու հաւատք, հնարաւորութիւն տուող:

Հաւատքի ամբողջ անիմաստութիւնը ինձ համար միևնոյնն էր մնում, ինչպէս և առաջ, սակայն ես անկարող էի չընդունել այն, որ նա միայն մարդկութեանը տալիս է կեանքի հարցերի պատասխանները և, հետևաբար, ապրելու հնարաւորութիւն:

Բանական գիտութիւնը ինձ հասցրեց այն համոզման, որ կեանքը անիմաստութիւն է. և իմ կեանքը կանգ առաւ և ես կամեմում էի ոչնչացնել ինձ: Դարձնելով հայեացքս մարդկանց վրայ, ամբողջ մարդկութեան վրայ, ես տեսայ, որ մարդիկ ապրում են և պնդում, թէ իրանք գիտեն կեանքի իմաստը: Նայեցի ինձ վրայ. ես ապրում էի, քանի գիտէի կեանքի իմաստը: Ինչպէս ուրիշ մարդկանց, այնպէս էլ ինձ՝ կեանքի իմաստ և կեանքի հնարաւորութիւն տալիս էր հաւատքը:

Ապա նայելով այլ երկիրների մարդկանց վրայ, թէ ինձ ժամանակակից և թէ վաղուց ապրողների, ես տեսայ միևնոյնը: Ուր կեանքն է, այնտեղ է և հաւատքը, սկսած այն օրից, երբ գոյութիւն է ստացել մարդկութիւնը, որ և տալիս է հնարաւորութիւն ապ-

րելու, ըստ որում հաւատքի գլխաւոր գծերը ամենուրեք և միշտ միևնոյնն են:

Ինչպիսի պատասխաններ էլ տայ որևէ մէկին որևէ հաւատք, հաւատքի իւրաքանչիւր պատասխան մտրդու վախճանական գոյութեանը տալիս է անվախճանական իմաստ, մի իմաստ, որ չէ ոչնչանում տառապանքներով, զրկանքներով ու մահուամբ: Հետևաբար՝ միմիայն հաւատքի մէջ հնարաւոր է գտնել կեանքի իմաստ և հնարաւորութիւն: Ի՞նչ բան է այդ հաւտքը: Եւ ես հասկացայ, որ հաւտքը աներևոյթ իրերի յայտնագործութիւն չէ միայն և այլն, յայտնութիւն չէ (դա միայն հաւտքի նշաններից մէկի նկարագրութիւնն է), մարդու առ Աստուած վերաբերմունքը չէ (անհրաժեշտ է որոշել հաւտքը, ապա Աստուծուն, և ոչ թէ Աստուծու միջոցով որոշել հաւտքը), համաձայնութիւն չէ միայն այն բանի հետ, ինչպէս ասել են մարդուն և ինչպէս յաճախ հասկացվում է հաւտքը: Հաւտքը մարդկային կեանքի իմաստի գիտութիւնն է, որի հիման վրայ մարդը չէ ոչնչացնում ինքն իրան, այլ ապրում է: Հաւտքը կեանքի զօրութիւնն է: Եթէ մարդ ապրում է, նա անպայման որևէ բանի հաւտում է: Եթէ նա չհաւտար, որ անհրաժեշտ է որևէ բանի համար ապրել, նա չէր ապրի: Եթէ նա չէ նկատում և չէ ըմբռնում վախճանականի խարուսիկ էութիւնը՝ նա հաւտում է վախճանականութեանը, եթէ նա ըմբռնում է վախճանականի խարուսիկ լինելը՝ նա պէտք է հաւտայ անվախճանականութեանը: Առանց հաւտքի ապրել չէ կարելի:

Եւ ես յիշեցի իմ ներքին աշխատանքի ամբողջ ընթացքը և սարսափեցի: Այժմ ինձ համար պարզ էր:

որպէս զի մարդ կարողանայ ապրել, նրան հարկաւոր է կամ չտեսնել անվախճանականը, կամ ունենալ կեանքի իմաստի այնպիսի բացատրութիւն, որով վախճանականը հաւասարուէր անվախճանականին: Այդօրինակ բացատրութիւն ես ունէի, սակայն այդպիսին ինձ հարկաւոր չէր, քանի ես հաւտում էի վախճանականին, և ես սկսեցի բանականութեամբ վերաստուգել այն: Եւ բանականութեան լոյսի առջև նախկին ամբողջ բացատրութիւնը յօդս ցնդեց. սակայն հասաւ ժամանակը, երբ ես դադարեցի հաւտալ վախճանականին: Եւ այն ժամանակ ես սկսեցի իմ գիտութեան պաշարով բանական հիմունքների վրայ կառուցանել այնպիսի մի բացատրութիւն, որը կեանքին հաղորդէր մի իմաստ. բայց ոչ մի բան չկառուցուեց: Մարդկային լաւագոյն ուղեղների հետ ես եկայ այն մտքին, թէ Օ-ն հաւտար է Օ-ի, և չափազանց զարմացայ, որ այդօրինակ մի վճիռ ստացայ, մինչդեռ ոչինչ այլ իսկապէս չէր էլ կարող դուրս գալ:

Ի՞նչ էի անում ես, երբ փորձնական գիտութիւնների մէջ պատասխան էի որոնում: Ես կամենում էի իմանալ, թէ ինչո՞ւ եմ ապրում, և զբա համար հէնց ուսումնասիրում էի այն ամենը, ինչ որ ինձանից դուրս էր: Պարզ է, որ ես պիտի շատ բան իմանայի, սակայն ոչինչ այն ամենից, ինչ որ ինձ կարեւոր էր:

Ի՞նչ էի անում ես, երբ պատասխանը որոնում էի փիլիսոփայական գիտութիւնների մէջ: Ես ուսումնասիրում էի այն արարածների մտքերը, որոնք ինձ պէս գտնուել են միևնոյն կացութեան մէջ, որոնք չեն ունեցել պատասխան այն հարցին, թէ՛ ինչո՞ւ եմ ապրում: Պարզ է, որ ես ուրիշ ոչինչ չէի կարող իմանալ:

քացի այն, որ ես գիտէի, այն է՝ ոչինչ իմանալ չէ կարելի:

Ի՞նչ բան եմ ես: Անվախճանի մասը: Չէ որ հէնց այս երկու բառերի մէջ է ամփոփվում ամբողջ խնդիրը:

Մի՞թէ այս հարցը միմիայն երէկ է ստեղծել մարդկութիւնը: Մի՞թէ ոչ ոք ինձանից առաջ չէ դրել այդ հարցը, մի հասարակ հարց, որ իւրաքանչիւր խելացի մանկան լեզուի ծայրին էլ է յատուկ:

Չէ որ այդ հարցը դրուած է մարդկութեան գոյութեան առաջին օրից. և նրա գոյութեան առաջին օրից՝ հասկանալի է, որ այդ հարցի լուծման համար անբաւարար է ինչպէս վախճանականը վախճանականին հաւասարելը, այնպէս էլ անվախճանականը անվախճանականին. և այն օրից, երբ մարդիկ սկսել են գոյութիւն ունենալ, գտնուած են վախճանականի և անվախճանականի յարաբերականութիւնները և արտայայտուած:

Բոլոր այն գաղափարները, որոնցով հաւասարեցվում է վախճանականը անվախճանականի հետ և ստացվում կեանքի իմաստ, Աստուծու ազատութեան, բարութեան գաղափարները, սրանց մենք ենթարկում ենք տրամաբանական հետախուզութեան: Եւ այդ գաղափարները չեն դիմանում բանականութեան քննադատութեանը:

Եթէ այնքան սարսափելի չլինէր, կը լինէր ծիծաղելի, թէ ինչպէս մենք պարծանքով ու ինքնահաւանութեամբ երեխաների պէս քանդում ենք ժամացոյցը, հանում նրա զսպանակը, շինում նրանից խաղալիք և ապա զարմանում, որ ժամացոյցը կանգնել է:

Անհրաժեշտ է և թանգարժէք վախճանականի և

անվախճանի հակասութեան լուծումն ու կեանքի հարցի այնպիսի պատասխանը, որով հնարաւոր համարուէր կեանքի գոյութիւնը: Եւ դա միակ լուծումն է, որը մենք գտնում ենք ամենուրեք, միշտ և բոլոր ազգերի մէջ, մի լուծումն, որ դուրս է բերուած ժամանակից, որի մէջ կորչում է մեզ համար մարդկանց կեանքը, և այդ լուծումը այնքան ծանր է, որ մենք դրա նման ոչինչ անել չենք կարող,—հէնց այդ լուծումը մենք կործանում ենք թեթեամտօրէն այն նպատակով, որպէս զի կրկին դնենք միևնոյն հարցը, որը յատուկ է իւրաքանչիւրին և որի համար մենք պատասխան չունենք:

Աստուծու անվախճանականութեան գաղափարը, հոգու աստուածայնութեան, մարդկային գործերի կապակցութեան՝ Աստուծու հետ, հոգու միութեան և էութեան գաղափարները, բարոյական բարու և չարի մարդկային գաղափարը — դրանք գաղափարներ են, որոնք մշակուած են անվախճանականութեան մէջ թագնուած մարդկային մտքում, այն գաղափարները, աւանց որոնց չէր լինի կեանքը և ես ինքս, իսկ ես, մերժելով համայն մարդկութեան այդ ամբողջ աշխատանքը, ուզում եմ ինքս մենակ այդ ամենը դարձնել ըստ իմ ուզած նոր ձևի:

Այն ժամանակ ես այնպէս չէի մտածում, բայց այդ մտքերի սաղմը իմ մէջ կար արդէն: Ես՝ նախ՝ հասկանում էի, որ իմ դրութիւնը Շօպէնհաուէրի և Սոդոմոնի հետ միասին՝ ջնայած մեր իմաստութեանը՝ անմիտ է. մենք հասկանում ենք, որ կեանքը չարիք է, և այնուամենայնիւ ապրում ենք: Դա պարզապէս յիմար դրութիւն է, որովհետև եթէ կեանքը յիմար է,—

իսկ ես այնքան սիրում եմ բանականութիւնը, — ապա ուրեմն անհրաժեշտ է կեանքը ոչնչացնել, որով և նրան ժխտող այլ ես չի լինի: Երկրորդ՝ ես հասկանում էի, որ մեր բոլոր դատողութիւնները պտտւում են կախարդուած շրջանակի մէջ ինչպէս մի փնիւ, որ չէ դիպչում միւս անիւի ատամներին: Որքան էլ և ինչ պէս էլ լաւ դատողութիւն ունենանք, այնուամենայնիւ մենք չենք կարող հարցին պատասխան ստանալ, և միշտ Օ-ն հաւասար կը լինի Օ-ին, ուստի և, երևի, մեր ճանապարհը սխալ է: Երրորդ՝ ես սկսում էի հասկանալ, որ հաւատի տուած պատասխանների մէջ պարփակվում է մարդկային ամենախորունկ իմաստութիւնը, և որ ես իրաւունք չունէի ժխտել նրանց՝ բանականութեան հիմունքներով, և որ միմիայն այս գլխաւոր պատասխանները տալիս են կեանքի հարցի պատասխանը:

X

Ես այդ հասկանում էի, բայց դա ինձ չէր սփոփում:

Ես պատրաստ էի այժմ ընդունելու ամեն մի դաւանանք, միայն թէ նա չպահանջէր ինձանից բանականութեան շեշտակի ժխտումը, որը մի կեղծիք կը լինէր: Եւ ես ուսումնասիրեցի և՛ բուդդայականութիւնը, և՛ մահմեդականութիւնը գրքերի միջոցով, իսկ ամենից շատ՝ քրիստոնէութիւնը թէ՛ գրքերով և թէ՛ կենդանի

ինձ շրջապատող մարդկանց նայելով:

Բնականօրէն ես դիմեցի ամենից առաջ իմ շրջանի հաւատացեալ մարդկանց, գիտնականներին, ուղղափառ աստուածաբաններին, արեղայ-ճգնաւորներին, նորագոյն տեսակի աստուածաբաններին և նոյն իսկ այսպէս կոչուած նոր քրիստոնեաներին, որոնք դաւանում են փրկութիւնը՝ քաւութեան միջոցով: Եւ կառչում էի ես այդ հաւատացեալներին, հարց ու փորձ անում նրանց այն մասին, թէ ինչպէս են իրանք հաւատում և ինչնմն են տեսնում կեանքի իմաստը:

Չնայելով որ ես անում էի ամեն տեսակ զիջողութիւններ, խորշում զանազան վէճերից, այնուամենայնիւ անկարող եղայ ընդունելու այդ մարդկանց դաւանանքը. տեսայ, որ այն, ինչ որ նրանք դաւանանքի տեղ էին դրել, բացառութիւն չէր, այլ կեանքի իմաստի մթնացումը, մանաւանդ որ նրանք պնդում էին իրանց դաւանանքի վրայ ոչ այն նպատակով, որ նա պատասխանած լինի կեանքի այն հարցի վերաբերեալ, որը հասցրել է ինձ դաւանանքի գողափարին, այլ ինչ-որ ուրիշ, ինձ համար միանգամայն օտար նպատակների համար:

Յիշում եմ իմ նախկին յուսահատութեան սարսափի տանջող զգացումը այն յոյսերից յետոյ, որ ես կրում էի իմ մէջ շատ և շատ անգամ՝ այդ մարդկանց հետ ունեցած յարաբերութիւններիս ժամանակ:

Որքան շատ, որքան մանրամասն կերպով էին մեկնում նրանք իմ առջև իրանց դաւանաբանութիւնը, այնքան պարզօրէն տեսնում էի ես նրանց մոլորութիւնը և իմ յոյսերի խորտակումը՝ գտնելու նրանց դաւանանքի մէջ կեանքի իմաստի բացատրութիւնը:

Ոչ թէ սյն էր ինձ յետ մղողը, որ իրանց դաւա-
նաբանութեան մեկնաբանութեան մէջ նրանք խառնում
էին նաև իմ սրտին միշտ մօտ եղած քրիստոնէական
ճշմարտութիւններ և այլ բաղմամբիւ անպէտք ու անի-
մաստ բաներ, ոչ. այլ ինձ յետ մղեց այն, որ այդ
մարդկանց կեանքը նոյնն էր, ինչ որ իմը, այն տար-
բերութեամբ սակայն, որ նա չէր համապատասխանում
այն սկզբունքներին, որ մեկնաբանում էին նրանք ի-
րանց դաւանաբանութեան մէջ: Եւ պարզապէս զգում
էի, որ նրանք խաբում են իրանք իրանց և որ նրանք
էլ, ինչպէս և ես, չունին կեանքի այլ իմաստ, բացի
այն, որ ապրենք՝ քանի կարելի է ապրել, վերցնել
այն, ինչ կարող է ձեռք բերուել: Ես այդ տեսնում էի
այն պատճառով, որ եթէ նրանք ունենային այն իմաս-
տը, որով ոչնչանում է զրկանքների, տառապանքների
և մահուան սարսափը, այն դէպքում նրանք երկիւղ
չէին ունենայ վերջիններից: Դրանք՝ մեր շրջանի այդ
հաւատացեալները, ճիշտ ինձ պէս, ապրում էին լիու-
թեան և առատութեան մէջ, ճգնում էին շատացնել
կամ պահպանել այդ առատութիւնը, վախենում էին
զրկանքներից, տառապանքներից, մահից՝ միևնոյն կերպ,
ինչպէս և ես ու բոլոր ոչ-հաւատացեալները. ապրում
էին, բաւարարութիւն տալով ցանկութիւններին, ապ-
րում էին նոյնպէս վատ՝ գուցէ և աւելի վատ, քան ոչ-
հաւատացեալները:

Ո՛չ մի դատողութիւն չէր կարող ինձ համոզել
նրանց դաւանութեան ճշմարտութեան մէջ: Միմիայն
այնպիսի գործողութիւններ, որոնք ինձ ցոյց տալ կա-
րողանային, որ նրանց դաւանանքի մէջ կեանքի մի
այնպիսի իմաստ կայ, որով ինձ համար սարսափելի

աղքատութիւնը, հիւանդութիւնը, մահը սարսափելի
չեն նրանց, միմիայն դրանք կարող էին ինձ համոզել:
Իսկ այդպիսի գործողութիւններ ես չտեսայ մեր շրջանի
բաղմազան հաւատացեալների մէջ: Ընդհակառակը, ես
տեսնում էի այդպիսի գործողութիւններ մեր շրջանի
մարդկանց մէջ, հէնց մոլեռանդ ոչ-հաւատացեալների
մէջ, բայց երբէք՝ մեր շրջանի այսպէս կոչուած հաւա-
տացեալների մէջ:

Եւ ես հասկացայ, որ այդ մարդկանց դաւանանքը
այն դաւանանքը չէ, որ ես վնասում էի, որ նրանց
դաւանանքը դաւանանք չէ, այլ միմիայն կեանքի էպի-
կուրէական միթարութիւններից մէկը: Ես հասկացայ,
որ այդ դաւանանքը պէտքական է գուցէ և ոչ միթա-
րութիւնների համար, այլ մահուան մահիճը ընկած՝
զղջացող Սողոմոնին մի փոքր սփոփելու համար, սա-
կայն նա չէ կարող պիտանի լինել մարդկութեան ըս-
տուար մեծամասնութեան համար, որը կոչուած է ոչ
թէ զուարճանալու համար՝ ուրիշների աշխատանքներից
օգտուելով, այլ՝ կեանք ստեղծագործելու:

Որպէս զի ամբողջ մարդկութիւնը կարողանայ
ապրել, որպէս զի շարունակէ կեանքը, օժտելով նրան
իմաստով, նրանց մօտ՝ այդ միլիարդների՝ պէտք է լի-
նի դաւանանքի մի այլ, մի իսկական գիտութիւն: Յի-
րաւի՝ այն, որ մենք Սողոմոնի և Շօպէնհաուէրի հետ
մեզ չսպանեցինք, այն չէր ինձ համոզողը դաւանանքի
գոյութեան մէջ, այլ այն, որ այդ միլիարդները ապրել
են ու ապրում են և մեզ էլ Սողոմոնների հետ՝ իրանց
կեանքի ալիքների վրայ տարել:

Եւ ես սկսեցի մերձենալ աղքատ և հասարակ հա-
ւատացեալներին, ոչ-գիտնականներին, ուխտաւորնե-

րին, արեղաներին, աղանդաւորներին, գիւղացիներին: Այդ ժողովրդի մարդկանց դաւանաբանութիւնը նոյն-պէս քրիստոնէական էր, ինչպէս և մեր շրջանի կեղծ-հաւատացեալների դաւանաբանութիւնը: Քրիստոնէական ճշմարտութիւններին այստեղ էլ խառնուել էին բազմաթիւ նախապաշարմունքներ, սակայն այն տարբերութեամբ, որ մեր շրջանի հաւատացեալների նախապաշարմունքները բոլորովին հարկաւոր չէին իրանց, չէին կապուում իրանց կեանքի հետ, այլ կազմում էին մի տեսակ էպիկուրէական զուարճութիւն. իսկ աշխատաւոր ժողովրդի հաւատացեալների նախապաշարմունքները այն աստիճան էին կապուած իրանց կեանքի հետ, որ անհնարին էր երևակայել նրանց՝ առանց այդ նախապաշարմունքների. դրանք այդ կեանքի անհրաժեշտ պայմանն էին կազմում: Մեր շրջանի հաւատացեալների ամբողջ կեանքը հակասական է նրանց դաւանանքի նկատմամբ, իսկ աշխատաւոր հաւատացեալների ամբողջ կեանքը ապացոյց էր կեանքի այն իմաստի, որը տալիս էր դաւանանքի գիտութիւնը: Եւ ես սկսեցի դիտել այդ մարդկանց կեանքն ու դաւանանքը. և որքան շատ էի դիտում, այնքան աւելի համոզվում, որ նրանք ունեն իսկական դաւանանք, որ դաւանանքը նրանց համար անհրաժեշտութիւն է, որը և տալիս է նրանց կեանքին իմաստ ու ապրելու հնարաւորութիւն: Հակառակ այն բանին, ինչ տեսնում էի ես մեր շրջանում, որտեղ առանց դաւանանքի կեանքը հնարաւոր է և որտեղ հազարից մէկն է իրան հաւատացեալ համարում, առաջինների շրջանում հազարից հազիւ մէկը լինի ոչ-հաւատացեալ: Հակառակ այն բանին, որ ես տեսնում էի, թէ մեր շրջանում կեանքը ինչպէս

անց է կենում պարապութեան և զուարճութիւնների մէջ և կեանքից դժգոհ մնալով, այստեղ, ընդհակառակը, տեսնում էի, որ այս մարդկանց ամբողջ կեանքը անց է կենում ծանր աշխատանքի մէջ, և որ նրանք կեանքից բաւական են: Հակառակ այն բանին, որ մեր շրջանի մարդիկ ընդդիմանում ու զայրանում էին ճակատագրի վրայ՝ զրկանքների և տառապանքների համար, այս մարդիկ ընդունում էին հիւանդութիւններն ու դառնութիւնները առանց որևէ թիւրիմացութեան, ընդդիմադրութեան, անդորր ու հաստատ համոզումով, որ այդ ամենը՝ բարիք է: Հակառակ այն բանին, որ մենք որ չափով որ խելացի լինենք, այն չափով էլ պակաս ենք ըմբռնում կեանքի իմաստը և մի ինչ-որ նեղագաւոր ծաղր ենք տեսնում այն բանում, որ մենք տառապում ու մեռնում ենք, ընդհակառակը՝ այս մարդիկ ապրում են, տառապում և մօտենում մահուան, տառապում անդորրութեամբ, աւելի յաճախ՝ ուրախութեամբ: Հակառակ այն բանի, որ անդորր մահը, մահ առանց սարսափի և յուսահատութեան, ամենասակաւ բացառութիւնն է մեր շրջանի մէջ, —մինչդեռ անհանգիստ, անհնազանդ մահը՝ խիստ ժողովրդի մէջ բացառիկ երևոյթ է: Եւ այդօրինակ մարդկանց թիւը, — որոնք զրկուած են այն ամենից, ինչ որ մեզ համար՝ Սողոմոնի հետ միասին՝ կազմում է կեանքի միակ երանութիւնը, որի մէջ նրանք տեսնում են մեծագոյն բախտ, — անթիւ անհամար է: Ես աւելի հեռուն դիտեցի իմ շուրջը: Ես թափանցեցի անցեալում և այժմ ապրող մարդկանց խոշոր զանգուածների կեանքի մէջ՝ Եւ տեսայ այնպիսիներին, որոնք ըմբռնել էին կեանքի իմաստը, գիտէին ապրել և մեռնել, և ոչ միայն երկու-

սին, երեքին, տասին, այլ հարիւրներով, հազարներով՝ միլիօններով: Եւ նրանք բոլորը, իրանց բարքերով՝ խելքով, կրթութեամբ, կացութեամբ անվերջ տարբերուող, բոլորը միակերպ՝ միանգամայն հակառակ իմ անգիտութեան՝ ըմբռնել էին կեանքի և մահուան իմաստը, աշխատում էին հանգիստ, ամեն տեսակ զրկանքներ ու տառապանքներ կրելով ապրում ու մեռնում, որի մէջ տեսնում էին ոչ թէ ունայնութիւն, այլ՝ բարութիւն:

Եւ ես սիրեցի այդ մարդկանց: Որքան շատ էի թափանցում նրանց կեանքի մէջ, կենդանի մարդկանց ու ապրած-մեռած մարդկանց կեանքի մէջ, որոնց մասին ես կարդացել ու լսել եմ, այնքան շատ էի սիրում նրանց և այնքան էլ ինձ համար թիթեանում էր կեանքը: Մյուսպէս ապրեցի ես երկու տարի, երբ իմ մէջ կատարուեց մի յեղաշրջում, որը վաղուց նախապատրաստվում էր իմ ներսը և որի սաղմերը միշտ եղել են մէջս: Իմ մէջ տեղի ունեցաւ այն, որ մեր շքշանի կեանքը — հարուստների, գիտնականների — ոչ միայն դարձաւ ինձ համար զգուցի, այլ կորցրեց ամեն մի իմաստ: Մեր բոլոր գործողութիւնները, դատողութիւնները, գիտութիւնները, արուեստները՝ իմ աչքում ստացան նոր նշանակութիւն: Ես հասկացայ, որ այդ բոլորը՝ միմտութիւն է, որ դրա մէջ կեանքի իմաստ որոնելը անհնարին բան է: Իսկ աշխատաւոր ժողովրդի, համայն մարդկութեան, կեանքի ստեղծագործողի ամբողջ կեանքը ներկայացաւ իմ առջև իբր իսկական նշանակութեամբ: Ես հասկացայ, որ դա՛ ինքը կեանքն է, և որ կեանքի այդ իմաստը՝ ճշմարտութիւն է, և ես ընդունեցի այն:

XI

Եւ յիշեցի այն, թէ ինչպէս միևնոյն հաւատալիքները ինձ մի կողմ էին վանում և անիմաստ բաներ թւում, երբ այդպիսիք դաւանում էին այդ հաւատալիքներին հակառակ կեանք վարող մարդիկ, և թէ ինչպէս միևնոյն հաւատալիքները զրաւեցին ինձ և թուացին խելամիտ բաներ, երբ ես տեսնում էի, որ կոն մարդիկ, որոնք ապրում են դրանցով. այն ժամանակ ինձ համար հասկանալի դարձաւ, թէ ինչո՞ւ մի ժամանակ ես զէն էի զցել այդ հաւատալիքները և թէ ինչո՞ւ համարել դրանց անմտութիւններ, իսկ այժմ ընդունեցի նրանց և համարեցի իմաստալից: Ես հասկացայ, որ մոլորուած եմ, և այն էլ ինչպէ՞ս մոլորուած: Ես մոլորուած եմ ոչ այնքան նրանից, որ անկասօն եմ մտածել, այլ նրանից, որ ապրել եմ վատ կեանքով: Ես հասկացայ, որ ճշմարտութիւնը ինձնից քողարկել էր ոչ այնքան իմ մտքերի մոլորութիւնը, որքան իմ կեանքը՝ էպիկուրէականութեան ցանկութիւններիս յազուրդ տալու այն բացառիկ պայմաններում, որոնց մէջ անց եմ կացրել ես իմ կեանքը: Ես հասկացայ, որ իմ հարցը, թէ ի՞նչ է իմ կեանքը, և պատասխանը, թէ՛ չարիք, միանգամայն ուղիղ էր: Ուղիղ չէր միայն այն, որ յատկապէս ինձ վերաբերող պատասխանը՝ ես վերագրեցի ամբողջ կեանքին. ես ինձ հարցրի, թէ ինչ բան է իմ կեանքը, և ստացայ պատասխան՝ չարիք է և անմտութիւն: Եւ յիշաւի, իմ կեանքը—կեանք՝ ցանկութիւնների փայփայման—անմտութիւն ու չարիք է, ուստի և պատասխանը՝ «կեանքը չարիք է ու անմտու-

Թիւն»՝ վերաբերում էր միմիայն իմ կեանքին և ոչ թէ ընդհանուր մարդկայինին: Ես ըմբռնեցի այն ճշմարտութիւնը, որը յետոյ գտայ նաև Աւետարանի մէջ, որ մարդիկ աւելի սիրել են խաւարը, քան լոյսը, որովհետև նրանց գործերը եղել են չար: Որովհետև իւրաքանչիւր ոք՝ վատ գործեր կատարող՝ ատում է լոյսը, չէ գնում դէպի լոյսը, որպէս զի չմերկացնէ իր գործերը: Ես ըմբռնեցի, որ կեանքի իմաստը հասկանալու համար անհրաժեշտ է նախ՝ որ կեանքը չլինի չարիք ու անմտութիւն, որից յետոյ կարևոր է բանականութիւն՝ այդ կեանքը հասկանալու համար: Ես ըմբռնեցի, թէ ինչո՞ւ այդքան ժամանակ պտտուել եմ մի այդպիսի ակնյայտնի ճշմարտութեան շուրջը, և որ եթէ կարևոր է մարդկութեան կեանքի մասին մտածել ու խօսել, ապա կարևոր է նաև մտածել ու խօսել համայն մարդկութեան կեանքի մասին և ոչ թէ մի քանի պորտաբոյծների կեանքի: Այդ ճշմարտութիւնը միշտ եղել է ճշմարտութիւն, ինչպէս երկու անգամ երկուսը չորս է, սակայն ես չեմ ընդունել այն, որովհետև՝ ընդունելով երկու անգամ երկու չորս լինելը՝ ես պէտք է ընդունէի իմ վատ լինելը: Բայց ինքս ինձ լաւ համարելը ինձ համար աւելի կարևոր և անհրաժեշտ էր, քան երկու անգամ երկու չորս լինելը: Ես սիրեցի լաւ մարդկանց, ատեցի ինձ, որով և ընդունեցի ճշմարտութիւնը: Այժմ ինձ համար ամեն բան պարզուեց:

Ի՞նչ կը լինէր, եթէ իր կեանքը տանջանքների և գլուխներ կտրելու մէջ անց կացնող զահիճը, կամ այնպէս արբեցողը, կամ խելագարը, որ իր ամբողջ կեանքը անց է կացրել մութ սենեակում, աղտոտէր այդ սենեակը, երևակայելով ինքը նա կոչնչանայ, եթէ այդ

տեղից դուրս գալու լինի, ինչ կը լինէր, եթէ նա հարցնէր՝ ի՞նչ բան է կեանքը: Ակնյայտնի է, որ նա այդ հարցին չէր կարող այլ պատասխան ստանալ, քան որ՝ կեանքը մեծագոյն չարիք է. և խելագարի այդ պատասխանը միանգամայն ուղիղ կը լինէր, սակայն բացառապէս իրան համար: Իսկ եթէ ես էլ նոյնպիսի մի խելագար եմ: Իսկ եթէ մենք բոլորս, հարուստ ու պարտաւ մարդիկս, միևնոյն խելագարներն ենք: Այո, ես ըմբռնեցի, որ մենք յիբաւի այդպիսի խելագարներ ենք: Ես մանտանդ՝ անպայման այդպիսի խելագարներից եմ:

Իսկապէս՝ թռչունը գոյութիւն ունի այնպէս, որ նա պէտք է թռչի, սնունդ ժողովի, բուն շինի. և երբ ես տեսնում եմ թռչունի այդ գործը՝ ես ուրախանում եմ նրա ուրախութեամբ: Այժը, նապաստակը, գայլը գոյութիւն ունեն այնպէս, որ նրանք պէտք է կերակրուեն, բազմանան, կերակրեն իրանց ընտանիքը. և երբ նրանք անում են այդ՝ ես հաստատապէս գիտակցում եմ, որ նրանք երջանիկ են և նրանց կեանքը խելացի է: Սակայն ի՞նչ պէտք է անի մարդը: Նա միևնոյն կերպ պէտք է ձեռք բերէ կեանքը, ինչպէս և կենդանիները, այն տարբերութեամբ սակայն, որ նա կոչնչանայ, եթէ միայնակ գործէ. նա պէտք է ձգտի ձեռք բերել ոչ թէ միայնակ և այն էլ իր համար, այլ բոլորի: Եւ երբ նա անում է այդ, ես հաստատապէս գիտակցում եմ, որ նա երջանիկ է և նրա կեանքը բանական: Բայց ի՞նչ էի անում ես իմ ամբողջ երեսնամեայ գիտակցական կեանքում: Ես ոչ միայն կեանք չէի հայթայթում բոլորի համար, այլ նոյն իսկ ինձ համար այդ չէի անում: Ես ապրում էի որպէս պորտաբոյծ. և երբ

հարցրի ինքս ինձ, թէ ինչո՞ւ եմ ապրում, ստացայ պատասխան՝ ոչ մի բանի համար: Եթէ մարդկային կեանքի իմաստը կեանքի հայթայթման մէջ է, ապա ի՞նչ պէս ամբողջ երեսուն տարի չզբաղուելով կեանքի հայթայթմամբ, այլ զբաղուելով նրա կործանմամբ իմ և ուրիշների մէջ, ես կարող էի ստանալ մի այլ պատասխան, քան այն, որ իմ կեանքը անմտութիւն է ու չարիք:»

Նա յիրաւի անմտութիւն էր և չարիք: Տիեզերքի կեանքը կատարվում է ինչ-որ մէկի կամքով. ինչ-որ մէկը ամբողջ տիեզերքի և մեր կեանքերով իր ինչ-որ գործն է կատարում: Որպէս զի յոյս ունենաս՝ հասկանալու համար այդ կամքի իմաստը, ամենից առաջ անհրաժեշտ է կատարել այդ կամքը, անել այն, ինչ որ մեզանից պահանջում են: Իսկ եթէ ես չեմ անելու այն, ինչ որ ինձանից ուզում են, ապա ես երբէք չեմ հասկանայ և այն, ինչ որ ինձանից են ուզում, և մանաւանդ՝ ինչ որ ուզում են ամենքիցս և ամբողջ տիեզերքից:

Եթէ մերկ, քաղցած տնանկին վերցնէինք ուղեկտուրից, բերէինք գեղեցիկ հիմնարկութեան մէջ, կերակրէինք, խմեցնէինք և ապա ստիպէինք մի որևէ փայտ վար և վեր շարժել, ակնյայտնի է, որ նախ քան քննելը՝ թէ ինչո՞ւ են իրան վերցրել, ինչո՞ւ շարժել փայտը, խելացի՞ կերպով է արգեսք կառուցուել այս հիմնարկութիւնը, — տնանկին կարևոր էր ամենից առաջ փայտը շարժել: Եթէ նա կը շարժի փայտը, ապա նա կը հասկանայ, որ այդ փայտը շարժում է ջրհան գործիքը, որ գործիքը հանում է ջուր, որ ջուրը գնում է ածուներով, և այն ժամանակ նրան դուրս կը բերեն ծածկուած ջրհորից և կը յանձնեն մի այլ գործ:

Նա կը սկսի հաւաքել պտուղներ, միանալով իր տիրոջ ցնծութեանը, որով անցնելով ստորից դէպի բարձր գործը, հետզհետէ հասկանալով ամբողջ հիմնարկութեան կառուցուածքը և մասնակցելով նրան՝ երբէք չի էլ մտածի հարց տալու, թէ ինչո՞ւ է ինքը այստեղ, և մանաւանդ ոչ մի պարագայում չի պախարակի տիրոջը:

Հէնց նոյն կերպ չեն պախարակում տիրոջը ներանք, որոնք կատարում են նրա կամքը՝ հասարակ, բանուոր, ոչ-գիտնական մարդիկ, նրանք, որոնց մենք անասուն էինք համարում. բայց անձ մենք՝ իմաստուններս՝ ատելով ատում ենք ամբողջ տիրականը և չենք ուզում գործել այն, ինչ որ մեզանից պահանջում է տէրը. ընդհակառակը, գործելու փոխարէն մենք կազմել ենք մի շրջան և դատողութիւններ ենք անում. «Ինչո՞ւ համար շարժել փայտը: Չէ՞ որ դա յիմար բան է»: Եւ վերջապէս խելքի եկանք: Հասանք այն մտքին, որ տէրը յիմար է, կամ նա չկայ, իսկ մենք խելացի մարդիկ ենք, զգում ենք միայն, որ ոչ մի բանի պիտանի չենք, և հարկաւոր է, որ որևէ կերպ մենք մեզանից ազատուենք:

XII

Բանական գիտութեան մէջ սխալման գիտակցութիւնը օգնեց ինձ ազատուելու պարապ խելամտութեան գայթակղութիւնից: Այն համոզմունքը, որ ճշմարտութեան գիտութիւնը հնարաւոր է գտնել միմիայն

կեանքի միջոցով, ստիպեց ինձ կասկածելու իմ կեանքի կանօնաւորութեան վերաբերութեամբ. սակայն փրկեց ինձ միմիայն այն հանգամանքը, որ ես գտայ հնար՝ անջատուելու իմ բացառիկ գրութիւնից և տեսնելու հասարակ բանուոր ժողովրդի իսկական կեանքը: Ես հասկացայ, որ եթէ ես ուզում եմ ըմբռնել կեանքն ու նրա իմաստը՝ ինձ հարկաւոր է ապրել ոչ թէ պորտաբոյծի կեանքով, այլ իսկական կեանքով. ապա ընդունելով այն իմաստը, որը յատկացնում է նրան իսկական մարդկութիւնը, և ձուլուելով այդ կեանքի հետ՝ վերաստուգել այն:

Հէնց միեւնոյն ժամանակ ինձ հետ պատահեց հետեւեալը: Այդ ամբողջ տարում, երբ գրեթէ իւրաքանչիւր րօպէ ես հարց էի տալիս ինքս ինձ՝ վերջ տամ արդեօք կեանքիս պարանով կամ փամփուշտով, — այդ ամբողջ ժամանակ, մտքերի և դիտողութիւնների այն ընթացքների հետ միաժամանակ, որոնց մասին ես ասում էի, իմ սիրտը տառապում էր տանջող զգացումով: Այդ զգացումը ես չեմ կարող այլ կերպ անուանել, քան Աստուծու որոնումն:

Ես ասում եմ, որ Աստուծու այդ որոնումը դատողութիւն չէր, այլ զգացում, որովհետև այդ որոնումը բղխում էր ոչ թէ իմ մտքերի ընթացքից, — դա նոյնիսկ ուղղակի հակադիր էր նրանց, — այլ նա բղխում էր սրտից: Իս որբութեան, մենակութեան սարսափի զգացումն էր՝ բոլոր այդ օտարների մէջ, մի ինչ-որ մէկից ունեցած՝ օգնութեան ակնկալութիւնները:

Չնայելով որ ես միանգամայն համոզուած էի Աստուծու գոյութիւնը ապացուցանելու հնար չլինելու մէջ (որովհետև Կանտը ինձ ապացուցել էր, և ես լիովին

ըմբռնել էի նրան, որ այդ բանը ապացուցել չէ կարելի), ես այնուամենայնիւ որոնում էի Աստուծուն. յուսով էի, որ կը գտնեմ Նրան, և ըստ հին սովորութեան դիմում էի աղերսանքով Նրան, Որին ես որոնում էի, բայց չէի գտնում: Երբեմն մտքումս վերաստուգում էի Կանտի և Ծօպէնհաուէրի առարկութիւնները Աստուծու գոյութեան ապացոյցի անհնարին լինելու նկատմամբ, երբեմն սկսում էի վերաստուգել այդ առարկութիւնները և հերքել նրանց: Պատճառը, ասում էի ինքս ինձ, մտածողութեան միեւնոյն կատեգորիան չէ, ինչպէս տարածութիւնն ու ժամանակը: Եթէ ես կամ, ապա ուրեմն կայ և դրա պատճառը, պատճառների պատճառը: Եւ այդ բոլորի պատճառը նա է, ինչ որ անուանում ենք Աստուած: Եւ ես կանգ էի առնում այդ մտքի վրայ և իմ ամբողջ էութեամբս ձգտում էի գիտակցել այդ պատճառի ներկայութիւնը: Հէնց որ ես գիտակցեցի, որ կայ մի ոյժ, որի իշխանութեան տակ գտնվում եմ ես, անմիջապէս նաև յզգացի կեանքի կարելիութիւնը: Բայց ես հարցնում էի ինքս ինձ. «Ի՞նչ բան է սակայն այդ պատճառը, այդ զօրութիւնը: Ի՞նչպէս մտածեմ դրա մասին, ինչպէս վերաբերուեմ նրան, որին ես անուանում եմ Աստուած»: Եւ միմիայն ինձ ծանօթ պատասխաններն էին ծագում իմ գլխում. «Նա՛ Ստեղծող է, Նախախնամող»: Այս պատասխանները ինձ չէին գոհացնում, և ես զգում էի, որ իմ մէջ կորչում է այն, ինչ որ կարևոր է կեանքի համար: Ես ընկնում էի սարսափի մէջ և սկսում աղօթել Նրան, Որին և որոնում էի, աղօթում այն մասին, որ Նա ինձ օգնէ: Եւ որքան շատ էի աղօթում, այնքան ինձ համար աւելի ակնյայտի

էր դառնում, որ Նա ինձ չէ լսում, և չկայ մի այնպիսին, որին կարելի լինէր դիմել: Եւ սրտի խոր յուսահատութեամբ, որ Աստուած չկայ ու չկայ, ես ասում էի. «Տէր, ողորմիր, փրկիր ինձ: Տէր, սովորեցրու ինձ, Աստուած իմ»: Եւ սակայն ոչ ոք չէր ողորմում ինձ, և ես զգում էի, որ իմ կեանքը նորից կանգ է առնում:

Բայց կրկին և կրկին զանազան այլ կողմերից ես գալիս էի այն համոզման, թէ չէի կարող հօ առանց որևէ զրգման, պատճառի և իմաստի աշխարհ գալ, չէի կարող լինել բնից վայր ընկած թռչնակի նման, ինչպիսին ես զգում էի ինձ: Թող ես լինեմ վայր ընկած թռչնակ, պանկեմ կոնակի վրայ, ծվծվամ բարձր խոտերի մէջ, սակայն ծվծվամ, գիտենալով որ մայրս ինձ իր մէջ է կրել, ջերմացրել, կերակրել, սիրել: Ո՞ւր է նա, այդ մայրը: Եթէ ինձ դէն են ձգել, ո՞վ է ձգել: Չեմ կարող ինձանից թագցնել, որ մէկը ինձ ծնել է սիրելով: Ո՞վ է սակայն այդ մէկը:—Կրկին Աստուած:

Նա գիտէ և տեսնում է իմ որոնումները, յուսահատութիւնը, կոիւր: «Նա կայ», ասում էի ես ինձ: Եւ բաւական էր, որ մի վայրկեան ընդունէի այդ բանը, որպէս զի նոյն միջոցին բարձրանար կեանքը իմ մէջ, և ես զգայի գոյութեան թէ հնարաւորութիւնը և թէ ուրախութիւնը: Սակայն Աստուծու գոյութեան համոզումից ես կրկին անցում էի Նրա յարաբերութիւններին որոնմանը, և կրկին ներկայանում էր իմ առջև այն Աստուածը, մեր Ստեղծողը Իր երեք դէմքով—երրորդութեամբ—Որը ուղարկեց Որդուն՝ Փրկչին: Եւ կրկին տիեզերքից, ինձանից բաժանուած այդ առանձին Աստուածը ստոյգի պէս հարվում, հարվում էր իմ աչքերի

առջև և կրկին ոչինչ չէր մնում, կրկին չորանում կեանքի աղբիւրը. ես յուսահատվում էի և զգում, որ ինձ ուրիշ ոչինչ չէ մնում անել, բան անձնասպան լինել: Եւ՛ որ առաւել ևս վատ էր՝ զգում էի, որ այդ ևս անկարող եմ ես անել:

Ոչ թէ երկու, երեք անգամ, այլ տասնեակ, հարիւրաւոր անգամ ես ընկնում էի այդ զրութիւնների մէջ՝ մերթ ցնծութեան և կենդանութեան, մերթ կրկին յուսահատութեան և կեանքի անհնարին լինելու գիտակցութեան մէջ:

Յիշում եմ, դա վաղ զարնանը պատահեց. ես մեռակ էի անտառում և ականջ դնում նրա հնչիւններին: Ես ականջ էի դնում և մտածում շարունակ այն մասին, թէ ինչպէս միշտ ես մտածում էի միայն միևնոյն բանի մասին՝ այս վերջին երեք տարուայ ընթացքում: Ես դարձեալ որոնում էի Աստուծուն:

«Լաւ, ո՛չ մի Աստուած չկայ»,—ասում էի ինքս ինձ.—չկայ այնպիսին, որը չլինէր իմ մտապատկերը, բայց լինէր նոյնպիսի մի իրականութիւն, ինչպիսին է իմ ամբողջ կեանքը, չկայ այնպիսին: Եւ ո՛չ մի բան, ոչ մի հրաշք չէ կարող ապացուցանել այդ, որովհետև հրաշքներն էլ պիտի իմ մտապատկերը լինեն, այն ևս անմիտ մտապատկեր:

«Իսկ իմ հասկացողութիւնը Աստուծու մասին, Նրա մասին, Որին ես որոնում եմ,—հարցրի ես ինձ:—Հէնց այդ հասկացողութիւնը ռոտեղից ստացուեց»: Եւ այդ մտքի շտրկիւ կրկին իմ մէջ բարձրացան կեանքի ուրախ ալիքները: Ամեն ինչ իմ շուրջը կենդանացաւ, ստացաւ իմաստ: Սակայն իմ ուրախութիւնը երկար չտևեց: Խելքը շարունակում էր իր գործը:

«Աստուծու գաղափարը Աստուած չէ, — ասացի ինքս ինձ:— Գաղափարը այն է, ինչ որ իմ մէջ է տեղի ունենում. գաղափարը Աստուծու մասին՝ դա այն է, ինչ որ ես կարող եմ իմ մէջ կամ զարթեցնել կամ ոչ: Դա այն չէ, ինչ որ ես որոնում եմ: Ես որոնում եմ նրան, առանց որի կեանք լինել չէ կարող»: Եւ կրկին իմ մէջն ու շուրջը սկսեց մեռնել ամեն ինչ, և ես կրկին կամենում էի սպանել ինձ: Սակայն այստեղ ես նայեցի ինձ վրայ, թէ ինչ է տեղի ունենում իմ մէջ, և յիշեցի՝ հարիւրաւոր անգամ իմ մէջ տեղի ունեցող մեռելութիւնն ու կենդանութիւնը: Ես յիշեցի, որ ապրել եմ միմիայն այն ժամանակներում, երբ հաւատացել եմ Աստուծուն: Ինչպէս էր առաջ, այնպէս է և այժմ. բաւական է որ ճանաչեմ Աստուծուն, և ես ապրում եմ. բաւական է, որ մոռանամ, չհաւատամ Նրան, և ես մեռնում եմ:

Ի՞նչ բան է վերջապէս այդ կենդանութիւնն ու մեռելութիւնը: Չէ՞ որ ես չեմ ապրում, երբ հաւատա Աստուծու գոյութեան մասին կորցնում եմ. չէ՞ որ վաղուց սպանած կը լինէի ինձ, եթէ ես իմ մէջ չունենայի Նրան գտնելու աղօտ յոյսը: Չէ՞ որ ես ապրում եմ, ապրում միայն այն ժամանակ, երբ զգում եմ Նրան և որոնում Նրան: Դէհ, ուրեմն էլ ինչո՞ւ եմ որոնում Նրան,—բացազանչեց իմ ձայնը:—Ահա՛ Նա: Նա այն է, առանց Որի ապրել անհնարին է: Ճանաչել Աստուծուն և ապրել՝ միևնոյն բանն է: Աստուած կեանք է: Ապրի՛ր, որոնելով Աստուծուն, և այն ժամանակ չի լինի կեանք առանց Աստուծու: Եւ առաւել ուժգնօրէն, բան երբևիցէ, ամեն բան լուսաւորուեց թէ իմ ներսը

և թէ իմ շուրջը, որից յետոյ այդ լոյսը այլ ես ինձանից չբաժանուեց:

Եւ փրկուեցի ես անձնասպանութիւնից: Թէ երբ և ինչ ձևով կատարուեց իմ ներսը այդ յեղաշրջումը՝ այդ ասել ես չէի կարող: Ինչպէս որ աննկատելի կերպով, աստիճանաբար ոչնչանում էր իմ մէջ կեանքի զօրութիւնը, և ես հասայ ապրելու անկարելիութեան գաղափարին, կեանքի դադարման, անձնասպանութեան պահանջին, այնպէս էլ աստիճանաբար, աննկատելի կերպով վերադառնում էր իմ մէջ կեանքի այդ զօրութիւնը: Եւ տարօրինակ երևոյթ, որ կեանքի այդ զօրութիւնը, որ վերադարձաւ իմ ներսը, նոր չէր, այլ շատ հին,—հէնց այն, որը գրաւում էր ինձ իմ կեանքի սկզբնական շրջաններում:

Ես ամեն բանում վերադարձայ դէպի իմ վաղեմի անցեալը, դէպի մանկութիւնն ու պատանեկութիւնը: Ես վերադարձայ այն կամքի դաւանանքին, որը ինձ արտադրել է և ինչ-որ բան էլ կամենում է ինձանից. ես վերադարձայ այն հարցին, որ իմ կեանքի գլխաւոր և միակ նպատակն է՝ աւելի լաւ լինել, այսինքն՝ աւելի համերաշխ ապրել այդ կամքի հետ. ես վերադարձայ այն հարցին, որ այդ կամքի արտայայտութիւնը ես կը գտնեմ ինձանից թագնուած հեռաւորութեան մէջ ամբողջ մարդկութեան՝ իր ղեկավարութեան համար՝ մշակածը, այսինքն՝ ես վերադարձայ Աստուծուն հաւատալու սկզբունքին, բարոյական կատարելագործման և այն աւանդութեան, որ խօսում է կեանքի իմաստի նկատմամբ: Միայն տարբերութիւնը նրանումն էր, որ այն ժամանակ ամեն ինչ ընդունում էի անգիտակցօ-

դէն, այժմ սակայն գիտէի, որ առանց դրան ապրել ես
այլևս չեմ կարող:

Կարծես ինձ հետ պատահեց հետեեալը. ես չեմ
յիշում, թէ երբ ինձ նստեցրին նաւակ, հրեցին ինձ
համար անյայտ մի ինչ-որ եզերքից, անփորձ ձեռքերիս
յանձնեցին թիերը և թողին մենակ: Ես թիավարում
էի, ինչքան գիտէի, և լողում առաջ, բայց որքան հե-
ռանում էի ափից և մօտենում կենտրօնին, այնքան
հոսանքը արագանում էր, որ և հեռացնում էր ինձ իմ
նպատակից, — այնքան էլ յաճախ և յաճախ հանդիպում
էին ինձ լուղորդներ, որոնք և ինձ նման տարվում
էին հոսանքով: Կային միայնակ լուղորդներ, որոնք
շարունակում էին թիավարել. կային լուղորդներ, ո-
րոնք թողել էին թիերը. կային մեծ նաւակներ, հսկա-
յական նաւեր՝ լցուած մարդկանցով. ոմանք կուում
էին հոսանքի հետ, ոմանք անձնատուր լինում նրան:
Եւ որքան ես առաջ էի լողում, այնքան աւելի՝ նայելով
ներքև ուղղութեան վրայ՝ մոռանում ինձ տրուած ուղ-
ղութիւնը: Հոսանքի ամենակենտրօնում, դէպի ցած
տարուող նաւակների և նաւերի նեղ արանքներում, ես
վերջնականապէս կորցրի իմ ուղղութիւնը և թիերը
թողեցի: Ամեն կողմից իմ շուրջը ցնծութեամբ և ու-
րախութեամբ տարվում էին առաքաստներով ու թիե-
րով լուղորդներ՝ ջրի հոսանքով, հաւատացնելով ինձ և
իրար, որ այլ ուղղութիւն չէ. էլ կարող լինել: Ես հա-
ւատացի ու լողացի նրանց հետ միասին: Եւ տարուեցի
հեռուն, այնքան հեռուն, որ սահանքաժայռերի աղմուկն
էի միայն լսում, որոնց մէջ ես պէտք է ջարդ ու փշուր
լինէի. և տեսնում էի դրանց խփուած ու ջարդուած
նաւակներ: Եւ ես սթափուեցի: Երկար ժամանակ ան-

կարող էի լինում հասկանալ, թէ ինչ է պատահել ինձ:
Իմ առաջը ես տեսնում էի միմիայն կորուստ, դէպի
որը ես վաղում էի, որից սակայն վախենում. ոչ մի
տեղ ես չէի տեսնում փրկութիւն և չգիտէի ինչ անել.
բայց դարձնելով հայեացքս յետ՝ ես տեսայ անազին
քանակութեամբ նաւակներ, որոնք առանց դադարի
յամաուրէն յաղթահարում էին հոսանքը, յիշեցի եզեր-
քը, թիերը և ուղղութիւնը և սկսեցի թիավարել յետ,
հոսանքով դէպի վեր, դէպի եզերքը:

Այդ եզերքը՝ Աստուածն էր. այդ ուղղութիւնը՝
աւանդութիւնը. թիերը՝ դա ինձ տրուած ազատու-
թիւնն էր, թիավարելու մինչև եզերքը՝ Աստուծու հետ
միանալու համար: Եւ այդպէս՝ կեանքի զօրութիւնը իմ
մէջ վերանորոգուեց, և ես կրկին սկսեցի ապրել:

XIII

Ես հրաժարուեցի մեր շրջանի կեանքից, ընդու-
նելով որ դա կեանք չէ, այլ միայն կեանքի նմանու-
թիւնը, որ առատութեան պայմանները, որոնց մէջ
մենք ապրում ենք, զրկում են մեզ կեանքը ըմբռնելու
հնարաւորութիւնից, որով և կեանքը ըմբռնելու համար
եւ պէտք է հասկանամ ոչ թէ բացառութիւնների կեան-
քը, մեր՝ պորտաբոյծներիս կեանքը, այլ հասարակ,
աշխատաւոր ժողովրդի, այն ժողովրդի, որը կուում ու
կփում է թէ կեանքը և թէ այն իմաստը, որ հաղոր-
դում է նրան: Իբրև հասարակ ժողովուրդ՝ իմ շուրջը

ուս ժողովուրդն էր, ուստի և ես դիմեցի նրան ուս
 այն իմաստին, որը նա հաղորդում է կեանքին: Այդ ի-
 մաստը, եթէ կարելի է արտայայտել այն, հետեւեալն
 էր: Իւրաքանչիւր մարդ աշխարհ է գալիս Աստուծու
 կամքով: Եւ Աստուած մարդուն այնպէս է ստեղծել,
 որ իւրաքանչիւր անհատ կարող է իրան և՛ կորցնել, և՛
 փրկել: Կեանքի մէջ մարդու նպատակն է՝ փրկել իր
 հոգին. հոգին փրկելու համար պէտք է ապրել Աստու-
 ծու կամքով, իսկ Աստուծու կամքով ապրելու համար
 պէտք է հրաժարուել կեանքի բոլոր զուարճութիւննե-
 րից, աշխատել, հնազանդուել, համբերել և լինել ողոր-
 մած: Այդ իմաստը ժողովուրդը քաղում է այն բոլոր
 դաւանաբանութիւնից, որը աւանդուել է և աւանդ-
 վում է նրան ժողովրդի մէջ ապրող հովիւներից և ա-
 ւանդութիւններից: Այդ իմաստը ինձ համար պարզ էր
 և իմ սրտին մօտիկ: Բայց ժողովրդական հաւատքի
 այդ իմաստը անխղիժ կերպով կապուած է՝ մեր ոչ-
 աղանդաւոր ժողովրդի մէջ, որի շրջանում ես ապրել
 եմ՝ շատ բանով, որ ինձ վրայ վանողական հետեանք
 էր ունենում և թուում անբացատրելի. խորհուրդներ,
 եկեղեցական արարողութիւններ, պահք, մասունքների
 և սրբի պատկերների պաշտամունքը: Մէկը միւսից
 բաժանել ժողովուրդը չէ կարող. չէի կարող և ես: Որ-
 քան էլ ինձ տարօրինակ երևար մեծ մասը այն ամե-
 նից, ինչ որ մտնում էր ժողովրդի դաւանանքի մէջ,
 այնուամենայնիւ ես ընդունեցի բոլորը. յաճախում էի
 ժամերգութիւններին, առաւօտ և երեկոյ կանգնում էի
 աղօթքի, պաս էի պահում, հաղորդվում, և առաջին
 նուագ բանականութիւնս չէր ընդդիմանում դրան:
 Այն, ինչ որ առաջ թւում էր ինձ անկարելի, այժմ իմ

մէջ դիմադրութիւն չէր առաջացնում: Իմ վերաբեր-
 մունքը դէպի դաւանանքը անցեալում և այժմ միան-
 դամայն տարբեր էր: Առաջ կեանքը ինձ թւում էր ի-
 մաստալից, իսկ դաւանանքը՝ ինչ-որ միանգամայն ան-
 պէտք, ինձ համար անիմաստ և կեանքի հետ ոչ մի
 կապ չունեցող դրութիւնների արհեստական հաստա-
 տութիւն: Ես հարցրի այն ժամանակ ինձ, թէ ինչ ի-
 մաստ ունեն այդ դրութիւնները. և, համոզուելով որ
 նրանք չունեն այդպիսին, ես հրաժարուեցի դրանցից:
 Այժմ սակայն, ընդհակառակը, ես քաջ գիտէի, որ իմ
 կեանքը չունի և չէ կարող ունենալ ոչ մի իմաստ. և
 դաւանանքի դրութիւնները ոչ միայն թւում էին ան-
 պէտք, այլ և իրական վտրձով եկել էի այն համոզ-
 ման, որ միմիայն՝ դաւանանքի այդ դրութիւններն են
 իմաստ տալիս կեանքին: Առաջ ես նայում էի նրանց
 վրայ իբրև միանգամայն անպէտք շողակրատութեան
 վրայ. այժմ սակայն, եթէ ես չէի էլ հասկանում նրանց,
 գիտէի, որ իմաստը նրանց մէջ է, և կրկնում էի, որ
 պէտք է սովորել՝ նրանց հասկանալու համար:

Հետեւեալ դատողութիւնն էի անում ես և ասում
 ինքս ինձ. դաւանանքի գիտութիւնը, ինչպէս և ամբողջ
 մարդկութիւնը իր բանականութեան հետ, բղիւում է
 խորհրդաւոր սկզբունքից: Այդ սկզբունքը՝ Աստուած
 է, սկզբունք՝ և՛ մարդկային մարմնի, և՛ նրա բանակա-
 նութեան: Ինչպէս որ ժառանգաբար Աստուծուց ինձ է
 հասել իմ մարմինը, այնպէս էլ հասել են ինձ իմ բա-
 նականութիւնն ու կեանքի ըմբռնողութիւնը, ուստի և
 կեանքի այդ ըմբռնողութեան զարգացման բոլոր աս-
 տիճանները չէին կարող անհիմն լինել: Այն ամենը,
 որին մարդիկ ճշմարտօրէն են հաւատում, պէտք է լինի

ճշմարտութիւնն. նա կարող է տարբեր կերպով արտա-
 յայտուել, սակայն սուտ նա չէ կարող լինել, ուստի և
 եթէ նա ինձ թուում է անհիմն, սուտ, ապա դա նշա-
 նակում է միայն, որ ես չեմ ըմբռնում այն: Բայց
 այդ՝ ես ինձ ասում էի. իւրաքանչիւր դաւանանքի
 էութիւն կայանում է նրանում, որ նա կեանքին հա-
 ղորդում է մի այնպիսի իմաստ, որը չէ ոչնչանում
 մահով: Բնական է՝ որպէս զի դաւանանքը կարող լինի
 պատասխանելու մեռ՝ ողի հարցին, լինի այդ հարցը
 ճոխութեան մէջ մեռնող թաղաւորից, աշխատանքից
 հիւժուած, ծերունի ստրկից, անգիտակից մանկան քե-
 րանից, իմաստուն ծերուկից, կիսախելագար պառուից
 թէ երիտասարդ բախտաւոր կնոջից, որ գրգռվում է
 պատանու կրքերից, կեանքի բազմազան պայմանների
 և կրթութեան բոլոր մարդկանցից,— բնական է, եթէ
 կայ մի պտտասխան, որ պտտասխանէր կեանքի յա-
 լիտենական միակ հարցին, թէ «ինչո՞ւ եմ ապրում,
 ի՞նչ դուրս կը գայ իմ կեանքից», այդ պտտասխանը,
 իր էութեամբ միակը, պէտք է լինի անսահմանօրէն
 բազմազան իր արտայայտութիւնների մէջ. և որչափ
 որ միաձոյլ, որչափ ճշմարտապատում է, խորունկ այդ
 պտտասխանը, այնչափ բնականօրէն աւելի տարօրի-
 նակ ու այլանդակ պէտք է լինի նա իր արտայայտ-
 ման փորձերում՝ համապատասխան իւրաքանչիւրի
 կրթութեան և կացութեան:

Բայց այդ դատողութիւնները՝ ինձ համար դա-
 ւանանքի ծիսական կողմի տարօրինակութիւնը ար-
 դարացնող՝ բաւական չէին, որպէս զի ես, ինձ համար
 կեանքի այդ միակ գործում, դաւանանքի մէջ թոյլ
 տայի ինձ անել այնպիսի գործողութիւններ, որոնց

մէջ ես ինքս կասկածէի. ես իմ հոգու բոլոր զօրու-
 թեամբ կամենում էի ձուլուել ժողովրդի հետ, կատա-
 րելով նրա դաւանանքի ծիսական մասը, սակայն ես
 չէի կարող անել այդ: Զգում էի, որ դրանով ես կեղ-
 ծած կը լինէի իմ առջև, ծաղրած կը լինէի այն, որը
 ինձ համար սուրբ է, եթէ այդպէս վարուած լինէի:
 Բայց այստեղ ինձ օգնութեան հասան ուսուական մեր
 նորագոյն աստուածաբանական հեղինակութիւնները:

Ըստ բացատրութեան այդ աստուածաբանների,
 դաւանանքի հիմնական առարկութիւնը՝ եկեղեցու ան-
 սխալականութեան մէջ է: Այդ զօգմայի ընդունելուցն
 է բղխում՝ իբրև անհրաժեշտ հետեանք՝ եկեղեցու ամ-
 բողջ դաւանաբանութեան ճշմարտութիւնը: Եկեղեցին,
 որպէս հաւաքածու հաւատացեալների՝ կապակցուած
 սիրոյ գաղափարով, ուստի և օժտուած ճշմարիտ նշա-
 նակութեամբ, ինձ համար դարձաւ դաւանանքիս հի-
 մունքը: Ես ասում էի ինձ, որ աստուածային ճշմար-
 տութիւնը չէ կարող մատչելի լինել միայն մի անհատի
 համար. նա բացվում է միմիայն մարդկանց միահա-
 մուտութեան առջև, որոնք միացած են իրար հետ սի-
 րով: Ըճմարտութիւնը ըմբռնելու համար՝ չպէտք է բա-
 ժանուել. իսկ չբաժանուելու համար պէտք է սիրել և
 հաշտուել այն բանի հետ, որին համաձայն ես: Ըճմար-
 տութիւնը կը պարզուի սիրոյ առջև, ուստի և, եթէ
 դու եկեղեցու ծէսերին չես հպատակվում, ապա խախ-
 տում ես սէրը. իսկ խախտելով սէրը, դու զրկվում ես
 ճշմարտութիւնը ըմբռնելու հնարաւորութիւնից: Այն
 ժամանակ ես չէի նկատում այն սովեստութիւնը, որով
 օժտուած էր այդ դատողութիւնը: Այն ժամանակ ես
 չէի նկատում և այն, որ սիրոյ միութիւնը կարող է

ստեղծել մեծագոյն սէր, սակայն երբէք աստուածային ճշմարտութիւն՝ Նիկիոյ խորհրդանշանի մէջ արտայայտուած որոշ խօսքերով. չէի նկատում այն ևս, որ սէրը երբէք չէ կարող ճշմարտութեան որոշ արտայայտութիւնը դարձնել պարտաւորեցուցիչ՝ միութեան համար: Այն ժամանակ ես չէի նկատում այդ դատողութեան սխալանքները և դրա շնորհիւ հնարաւորութիւն ստացայ ընդունելու և կատարելու ուղղափառ եկեղեցու բոլոր ծէսերը, առանց հասկանալու դրանց մեծագոյն մասը: Ես այն ժամանակ իմ հոգու բոլոր զօրութեամբ ճգնում էի խուսափել ամեն մի դատողութիւնից, հակասութիւնից և փորձում էի բացատրել ըստ հնարաւորութեան խելացիօրէն, եկեղեցական այն հիմունքները, որոնց ևս հանդիպում էի:

Կատարելով եկեղեցական ծէսերը, ես խաղաղեցնում էի իմ բանականութիւնը և ինքս ինձ ենթարկում էի այն աւանդութեան, որ ունէր համայն մարդկութիւնը: Ես միանում էի իմ նախորդների հետ, իմ սիրելիների՝ հօրս, մօրս, պապերիս, տատերիս հետ: Նըրանք և բոլոր նախնիքները հաւատում էին և ապրում. ինձ էլ նրանք արտադրեցին: Ես միանում էի նաև ինձ համար յարգելի՝ ժողովրդի մարդկանցից միլիօնաւորների հետ: Բացի դրանից՝ այդ գործողութիւնները ինքնին ոչինչ վատ չունէին իրանց մէջ (վատ էի համարում ևս շուայտ ցանկութիւնների շոյումը): Առաւօտեան վաղ վեր կենալով ժամերգութեան համար, ես գիտէի, որ լաւ բան եմ անում, հէնց միայն այն հիման վրայ, որ — սեփական խելքի հպարտութեան խոնարհման համար, իմ նախահայրերի և ժամանակակիցների հետ մերձեցման համար, յանուն կեանքի իմաստի որոնման

— դրանով ես զոհում էի իմ մարմնի հանգստութիւնը: Նոյնն էր և հաղորդուելիս, իւրաքանչիւր օր աղօթքս անելիս՝ երկրպագութիւններով, նոյնը և բոլոր պահքերը պահելիս: Որչափ էլ այդ զոհողութիւնները աննշան լինէին, այնուամենայնիւ նրանք յանուն լաւագոյնի էին կատարվում: Ես հաղորդվում, պահք էի պահում, օրուայ պատշաճ աղօթքներ ասում թէ տանք և թէ եկեղեցում: Եկեղեցական արարողութեան միջոցին ես թափանցում էի իւրաքանչիւր խօսքի մէջ և տալիս էի նրանց իմաստ՝ ըստ հնարաւորութեան: Պատարագին ինձ համար ամենանշանաւոր բաներն էին. «սիրենք իրար համախոհութեամբ»... Յետագայ խօսքերը՝ «միաբան դաւանենք Հօրը և Որդուն և Սուրբ Հոգուն», — ես բաց էի թողնում, որովհետև նրանք ինձ համար անհասկանալի էին:

XIV

Այնքան անհրաժեշտ էր այն ժամանակ ինձ հաւատքը՝ ապրելու համար, որ ես անգիտակցօրէն ծածկում էի ինձանից հակասութիւնները և դաւանաբանութեան մթութիւնը: Սակայն ծէսերին իմաստ հաղորդելու ճիշդ ունէր իր սահմանը: Եթէ մաղթանքը ինձ համար հեղհետէ հասկանալի էր դառնում իր գլխաւոր խօսքերի մէջ, եթէ ես մի կերպ բացատրում էի այս խօսքերը՝ «Մեր Տիրամօրը՝ ս. Աստուածածնին և բոլոր սրբերին յիշատակելով, ինքնիրս մեզ և իրար, ընդ

նմին մեր ամբողջ կեանքը Քրիստոս Աստուծուն նուիրենք»։ Եթէ ես թագաւորի և նրա ծնողների մասին արտասանուած աղօթքների յաճախակի կրկնութիւնը բացատրում էի նրանով, որ նրանք աւելի շատ են թաղայ են գայթակղութեան, քան ուրիշները, ուստի և աւելի շատ են կարօտ աղօթքների. ապա աղօթքները՝ թշնամիներին և հակառակորդներին ոտնատակ տալով յաղթահարելու մասին՝ եթէ ես բացատրում էի նրանով, որ թշնամին չարիք է,—այդ և ուրիշ աղօթքները, ինչպէս քերովբէական և ընծայման բոլոր խորհուրդները կամ «գինուորեալ զօրապետի» և այլն, ամբողջ ժամերգութեան գրեթէ երկու-երրորդ մասը կամ բոլորովին չունէին բացատրութիւն, կամ զգում էի, որ ես, յատկացնելով նրանց մի բացատրութիւն, կեղծում եմ և դրանով հիմնովին կործանում իմ յարաբերութիւնը առ Աստուած, միանգամայն կորցնում եմ հաւատքի ամեն հնարաւորութիւն։

Միևնոյն բանն էի զգում գլխաւոր տօները տօնելիս։ Յիշել շարաթ օրը, այն է՝ նուիրել մի օր Աստուծուն դիմելու համար, հասկանալի էր ինձ։ Սակայն գլխաւոր տօնը՝ յարութեան դէպքի յիշողութիւնն էր, որի իրողութիւն լինելը ոչ մի պարագայում ես երևակայել և հասկանալ չէի կարող։ Եւ յարութեան այդ անունով էր կոչվում իւրաքանչիւր շարաթուայ տօնուող օրը։ Եւ այդ օրերին հէնց կատարվում էր հաղորդութեան խորհուրդը, որը ինձ համար միանգամայն անհասկանալի էր։ Մնացած բոլոր տասն-երկու տօները, բացի Քրիստոսի ծնունդից, յիշողութիւններ էին հրաշքների նկատմամբ, որոնց մասին ես աշխատում էի չմտածել՝ չփխտելու համար. Համբարձումը, Հոգե-

գալուստը, Աստուածայայտնութիւնը, պաշտպանութիւն Աստուածածնի և այլն։ Զգալով որ այդ տօների տօնման միջոցին կարևորութիւնը վերագրվում է հէնց այն բանին, որը ինձ համար կազմում էր միանգամայն հակառակ կարևորութիւն, ահա այդ պարագայում ես կամ հնարում էի ինձ հանգստացնող բացատրութիւն և կամ փակում աչքերս՝ չտեսնելու համար այն, ինչ որ ինձ գայթակղութիւն էր պատճառում։

Այդ բանը իմ մէջ ամենագօրեղ կերպով արտայայտվում էր այն ժամանակ, երբ ես մասնակից էի շինում կարևորագոյն համարուող եկեղեցական սովորական խորհուրդների մէջ՝ մկրտութեան և հաղորդի։ Այստեղ ես ընդհարվում էի ոչ թէ անհասկանալի, այլ կատարելապէս հասկանալի գործողութիւնների հետ. այդ գործողութիւնները ինձ թւում էին գայթակղեցուցիչ, և ես կանգնած էի մի դիլլեմի առջև՝ կամ կեղծել, կամ պէն շարտեր։

Երբէք չեմ մոռանայ այն տանջալից դրութիւնը, որը ես զգացի՝ երկար տարիներից յետոյ առաջին անգամ հաղորդուելիս։ Ժամասացութիւնները, խոստովանութիւնը, կանօնները—այդ ամենը ինձ համար հասկանալի էին և իմ մէջ առաջացնում էին այն ցնծապին գիտակցութիւնը, թէ կեանքի իմաստը բացվում է իմ առջև։ Հաղորդման խորհուրդը ես բացատրում էի որպէս մի գործողութիւն, որ կատարվում է Քրիստոսի յիշատակութեան համար և նշանակում է մեղքերի սըրբումն ու Քրիստոսի վարդապետութեան լիակատար ըմբռնումը։ Թէկուզ այդ բացատրութիւնը լինէր արհեստական, այնուամենայնիւ ես չէի նկատում նրա արհեստականութիւնը։ Այնքան ուրախալի էր ինձ հա-

մար՝ ստորանալով և հնազանդուելով հոգևորականի, հասարակ, վախկոտ քահանայի առջև՝ բաց անել սեփական հոգու ամբողջ զդատելութիւնը, զղջալով սեփական մտութիւնները. այնքան ուրախալի էր հայրերի հեզութեան հետ մտքով ձուլուելը, այն հայրերի, որոնք գրել են կանօնների աղօթքները. այնքան ուրախալի էր միացումը բոլոր՝ անցեալում և այժմ հաւատացեալներին հետ, որ ես չէի զգում իմ բացատրութեան արհեստականութիւնը: Մակայն երբ ես մօտեցայ եկեղեցու բնօրէններին և քահանան ստիպեց՝ ինձ կրկնել, որ ես հաւատում եմ, թէ իմ կլանածը ճշմարիտ մարմին է և արիւն, այդ վայրկեանին սիրտս մի բան խրուեց. բաւական չէր, որ դա մի կեղծիք էր, դա և այնպիսի մէկի խստագոյն պահանջն էր, որը, ըստ երևոյթին, երբէք էլ չէ իմացել, թէ ինչ է դաւանանքը:

Մակայն այժմ ես թոյլ եմ տալիս ինձ ասել, որ դա մի խստագոյն պահանջ էր, թէպէտ այն ժամանակ դրա մասին ես չեմ էլ մտածել. բայց դա անպատմելի ցաւ էր պատճառում ինձ: Ես այլևս չէի գտնվում այն դրութեան մէջ, ինչպէս երիտասարդութեան օրերումս, երբ ինձ համար կեանքում ամեն ինչ պարզ էր թւում. դաւանանքի զաղափարին ես հասայ այն պատճառով, որ դաւանանքից զատ իսկապէս ոչինչ չգտայ, բացի կորուստը, ուստի և դէն շարտել այդ դաւանանքը՝ անհնարին էր. և ես հպատակուեցի: Ես գտայ իմ հոգու մէջ այն կորովը, որը ինձ օգնեց տանելու այդ ամենը համբերութեամբ: Դա՛ ինքնաստորացման և հնազանդութեան զգացումն էր: Ես հնազանդուեցի. այդ արիւնն ու մարմինը առանց սրբապիղծ զգացումների կլանեցի՝ հաւատալու ցանկութեամբ, սակայն

հարուածը արդէն տրուած էր: Եւ իմանալով, թէ ինչ է սպասում ինձ առաջիկայում, ես այլևս անկարող էի երկրորդ անգամ հաղորդուելու քնալ:

Ես շարունակում էի միևնոյն ձևով կատարել եկեղեցական ծէսերը և տակաւին հաւատում էի, որ իմ ընդունած դաւանաբանութիւնը ճշմարտութիւն է. և իմ մէջ տեղի էր ունենում այն, որը ինձ համար այժմ պարզ է, սակայն այն ժամանակ ինձ թւում էր տարօրինակ:

Լսում էի ես անգրագէտ զիւղացու, ուխտաւորի խօսակցութիւնը Աստուծու, դաւանանքի, կեանքի, փրկութեան մասին, և դաւանագիտութիւնը իմ առջև պարզվում էր. լսելով ժողովրդի դատողութիւնները կեանքի և դաւանանքի մասին, ես մօտենում էի նրան աւելի և աւելի հասկանում ճշմարտութիւնը: Նոյնն էր լինում, երբ կարդում էի Յայսմաւուրքն ու տօնական գրքերը. դա ինձ համար մի հաճելի ընթերցանութիւն էր: Բացառութեամբ հրաշքների, — նայելով զբանց վրայ որպէս մի միտք արտայայտող Ֆարուայի վրայ, — այդ ընթերցանութիւնը բաց էր անում իմ առջև կեանքի իմաստը: Այնտեղ կային Մեծ Մակարիոսի, Յովսափաա արքայազնի (Բուզդայի պատմութիւնը) կենսագրութիւնները, այնտեղ կային Յովհան Ոսկերեւրանի խօսքերը, պատմութիւններ ջրնորի ճանապարհորդի, ոսկի գտնող արեղայի, մաքսաւոր Պետրոսի մասին. այնտեղ՝ պատմութիւնն է այն նահատակների, որոնք կրկնում էին միաբերան, թէ մահը չէ ոչնչացնում կեանքը. այնտեղ է և՛ անգրագէտ, անմիտ ու եկեղեցական ուսմունքներից ոչինչ չիմացողների փըրկութեան պատմութիւնը: Բայց բաւական էր ինձ որոշ

մերձեցումն ունենալ գիտնական հաւատացեալների հետ, կամ վերցնել նրանց գրքերը, որպէս զի իմ մէջ ծագէր կասկած, անբաւականութիւն ու վիճելու բարկութիւն, որով զգում էի, թէ որքան շատ եմ թափանցում նրանց ճշմարտութեան մէջ, այնքան հեռանում ճշմարտութիւնից և քայլում դէպի կորուստ:

XV

Քանի՜ անգամ ես նախանձել եմ գիւղացիներին՝ նրանց անգրագիտութեան և տգիտութեան համար: Դաւանանքի այն դրութիւնները, որոնցից բխում էին ինձ համար ակնյայտնի անհեթեթութիւններ, նրանց համար սակայն ոչ մի կեղծիք չէին ներկայացնում. նրանք կարող էին ընդունել դրանց և միևնոյն ժամանակ հաւատալ ճշմարտութեան, այն ճշմարտութեան, որին ես ևս հաւատում էի: Միմիայն ինձ դժբախտիս համար պարզ էր, որ ճշմարտութիւնը ամենանուրբ թելերով հիւսուած է կեղծիքի հետ, և որ այդ ձևով ես անկարող եմ ընդունել այն:

Այդպէս ես ապրեցի երեք տարի, և սկիզբներում, երբ, իբրև նոր հաւատացեալ, աստիճանաբար ծանօթացայ ճշմարտութեան հետ, միմիայն բնազդով առաջնորդուելով էի գնում այնտեղ, ուր ինձ աւելի պայծառ էր թուում, և այդ ընդհարումները ինձ աւելի պակաս չափով էին շանթահարում: Երբ ես որևէ բան չէի ըմբռնում, ինքս ինձ ասում էի. «Ես մեղաւոր եմ, ես

յիմար եմ»: Սակայն որչափ շատ եմ ես թափանցել այն ճշմարտութիւնները, որոնց ուսումնասիրել եմ, որչափ նրանք հետզհետէ դառնում էին կեանքի հիմունք, այնչափ ծանր և ազդու էին լինում այդ ընդհարումները և այնչափ սուր էր դառնում այն զիծը, որ կար այն բանի մէջ, որը ես չէի հասկանում, որովհետև ես չգիտեմ հասկանալ այն, որը չէ կարելի հասկանալ առանց որ դու քեզ քո առաջ խաբէիր:

Չնայելով այդ կասկածանքներին և տառապանքներին, ես տակաւին մնում էի ուղղափառութեան մէջ: Սակայն առաջ եկան կեանքի խնդիրներ, որոնց պէտք էր լուծումն տալ, և այդտեղ այդ խնդիրների լուծումը եկեղեցու կողմից—հակառակ՝ դաւանանքի այն հիմունքին, որով ես ապրում էի—վերջնականապէս սփիւլեց ինձ հրաժարուելու ուղղափառութեանը պատկանելու հնարաւորութիւնից: Այդ հարցերն էին՝ նախ ուղղափառ եկեղեցու վերաբերմունքը դէպի ուրիշ եկեղեցիները՝ կաթօլիկութիւնը և այսպէս ասած աղանդաւորները: Այդ ժամանակները՝ շնորհիւ իմ ունեցած հետաքրքրութեանը դաւանանքի նկատմամբ՝ ես մօտեցայ գանազան գաւանանքների հաւատացեալներին՝ կաթօլիկներին, բողոքականներին, հնածէսներին, մօլօկաններին և ուրիշներին: Եւ դրանց մէջ շատերին ես գտայ բարոյապէս բարձր և ճշմարիտ հաւատացեալներ: Ես կամենում էի այդ մարդկանց եղբայրը լինել: Եւ սակայն ինչ: Այն ուսմունքը, որը ինձ խոստացաւ միացնելու բոլորին մի հաւատով և մի սիրով, հէնց այդ ուսմունքը յանձին իր լաւագոյն ներկայացուցիչների յայտնեց ինձ, որ բոլոր այդ մարդիկ խաբխափում են կեղծիքի մէջ, որ այն, ինչ որ նրանց կեանքին զօրութիւն է հա-

դորդում, սատանայի փորձն է, և որ միմիայն մենք ենք տիրապետում միակ հնարաւոր ճշմարտութեանը: Եւ ես տեսայ, թէ ինչպէս սրանց հաւատքը չընդունողներին ուղղափառները համարում են հերետիկոսներ հէնց միևնոյն կերպ, ինչպէս կաթօլիկներն ու ուրիշները ուղղափառութիւնն են համարում հերետիկոսական. ես տեսայ, որ ուղղափառութիւնը իր դաւանանքի արտաքին խորհրդանշաններն ու խօսքերը չդաւանողներին—թէպէտ նա այդ բանը ճգնում է քօղարկելու — վերաբերվում է թշնամաբար, ինչպէս որ և պէտք է լինէր, որովհետև առաջին՝ այն պնդումը, թէ դու կեղծիքի մէջ ես, իսկ ես ճշմարտութեան, ամենախստազոյն խօսքն է, որ կարող է ասել մի մարդ միւսին, և՛ երկրորդ՝ որովհետև իր դաւաններին և եղբայրներին սիրող անձը անկարող է թշնամաբար չվերաբերուել այն մարդկանց նկատմամբ, որոնք ցանկանում են նրա մանուկներին և եղբայրներին դարձնել մոլար դաւանանքի: Եւ այդ թշնամութիւնը սաստկանում է դաւանաբանութեան գիտութեան ընդլայման հետ միասին: Եւ ինձ՝ ճշմարտութիւնը սիրոյ միութեան մէջ ենթադրողիս համար ակամայից պարզուեց, որ դաւանաբանութիւնը ինքնին կործանում է այն, ինչ որ նա ինքը պէտք է ստեղծէր:

Այդ գայթակղութիւնը այն աստիճան ակնյայտնի է, այն աստիճան, մանաւանդ մեզ՝ կրթուածներին, այլ երկիրներում եղած մարդկանցս համար,—որտեղ դաւանվում են զանազան կրօններ, որտեղ ականատես ենք եղել այն արհամարհական, ինքնավստահ, անյողգող դժխտման, որով կաթօլիկը վերսբերվում է ուղղափառի և բողոքականի նկատմամբ, ուղղափառը՝ կա-

թօլիկի և բողոքականի, իսկ բողոքականը՝ երկուսինկատմամբ, նոյն վերաբերմունքը նաև հնածէսի, պաշկօլցու, շէքէրի և բոլոր դաւանանքների,—որ գայթակղութեան ակնյայտնի լինելը առաջին նուազ տարակուսելի է թւում: Ասում ես ինքը քեզ. ճօ չէ կարող լինել, որ այդ ամենը մի հասարակ երևոյթ լինի, որ մարդիկ այնուամենայնիւ չտեսնեն այն, որ եթէ երկու պնդումները իրար ժխտում են, ապա ուրեմն ոչ մէկի և ոչ միւսի մէջ չկայ այն միակ ճշմարտութիւնը, որ պիտի պէտք է լինի դաւանանքը: Այստեղ ինչ-որ բան կայ: Կայ որևէ բացատրութիւն. հէնց ես մտածում էի, որ կայ, և որոնում էի այդ բացատրութիւնը, կարողմ այն բոլորը, ինչ կարողանում էի և ինչ վերաբերում էր այդ առարկային, խորհրդակցում բոլոր նրանց հետ, որոնց հետ հնար ունէի: Եւ ոչ մի բացատրութիւն ես չէի ստանում, բացի նրանից, որով սոււական հուսարները կարծում են, թէ առաջին գունդը տիեզերքում՝ սոււայի հուսարականն է, իսկ դեղին ուլանները կարծում են, թէ տիեզերքում առաջին գունդը՝ դա զեղին ուլանականն է: Բազմազան դաւանանքների հոգևոր անձերը, նրանց լաւագոյն ներկայացուցիչները ոչինչ չասացին ինձ, բացի այն, որ իրանց հաւատքով՝ նրանք ճշմարտութեանը մօտ են, իսկ ուրիշները՝ մոլորութեան, և որ այն բոլորը, ինչ որ նրանք կարող են անել միւսների նկատմամբ, դա նրանց աղօթքն է մոլորեալների մասին: Ես գնացել եմ վարդապետների, հովուապետների, ճգնաւորների, միանձնների մօտ և հարցրել, բայց ոչ ոք ոչ մի փորձ չէ արել՝ բացատրելու ինձ այդ գայթակղութիւնը: Մէկը միայն նրանցից բացատրեց ինձ ամեն բան, սակայն բացատրեց այն-

պէս, որ ես այլևս ոչ ոքին չզիմեցի այդ հարցով:

Ես ասում էի այն մասին, թէ իւրաքանչիւր ոչ-հաւատացեալի համար, որ գալիս է դարձի (իսկ այդպիսի դարձի պէտք է բերուի մեր ամբողջ երիտասարդ սերունդը), այդ հարցը առաջնակարգ տեղն է բռնում. ինչո՞ւ ճշմարտութիւնը իւրօրինակութեան, կաթօլիցիզմի մէջ չէ, այլ ուղղափառութեան: Նրան սովորեցնում են գիմնազիայում, և նա չէ կարող չիմանալ, — ինչպէս որ այդ չգիտեն գիւղացիները, — որ բողոքականը, կաթօլիկը նոյնպէս պնդում են իրանց դաւանանքի միակ ճշմարիտ լինելը: Պատմական ապացոյցները, որոնց՝ իւրաքանչիւր դաւանանք իր կողմն է թեքում, բաւական չեն: Չէ՞ կարելի արդեօք, — ասում էի ես, — գիտութիւնը աւելի բարձր ըմբռնել, այնպէս որ գիտութեան այդ բարձունքից ոչնչանային բոլոր տարբերութիւնները, ինչպէս նրանք ոչնչանում են ճշմարիտ հաւատացեալի համար: Չէ՞ կարելի արդեօք գնալ աւելի առաջ այն ճանապարհով, որով գնում ենք հնածէսերի հետ: Նրանք պնդում են, որ խաչը, ալէլուիան և եկեղեցու բեմի շուրջկալիլը մեղանում այլ է: Մենք ասացինք. դուք հաւատում էք Նիկիոյ խորհրդանշանին, եթէ խորհուրդներին. մենք էլ ենք հաւատում: Եկէք հաստատ լինենք զբանում, իսկ մնացածը կատարեցէք, ինչպէս ուզում էք: Մենք միացանք նրանց հետ այն բանով, որ էականը առաւել բարձր դասեցինք, քան ոչ-էականը: Չէ՞ կարելի արդեօք այժմ ասել կաթօլիկներին. դուք այս-ինչ կամ այն-ինչ բանին հաւատում էք՝ գլխաւոր հարցում, իսկ Filio-que-ի և պապի նկատմամբ եղէք՝ ինչպէս կամենաք: Չէ՞ կարելի միթէ միևնոյնը ասել նաև բողոքականներին՝

միանալով նրանց հետ գլխաւոր հարցում: Իմ զրուցակիցը ինձ հետ համաձայնուեց, սակայն առարկեց, որ այդպիսի զիջումները առաջ կը բերեն դժկամակութիւններ հոգևոր իշխանութեան վերաբերմամբ այն մասին, թէ նա նախնիների կրօնից շեղվում է, և առաջ կը գայ բաժանումն, իսկ հոգևոր իշխանութեան կողմն է՝ պահպանել յոյն-ուղաւական ուղղափառ դաւանանքը՝ իր նախնիներից նրան յանձնուած ամբողջ մաքրութեամբ:

Եւ ես ամեն ինչ հասկացայ: Ես որոնում եմ հաւատք, կեանքի զօրութիւն, իսկ նրանք որոնում են մարդկանց առջև մարդկային յայտնի պարտականութիւնների կատարման լաւագոյն միջոց: Եւ կատարելով մարդկային այդ գործերը՝ նրանք այդ կատարում են ըստ մարդկային: Ո՛րքան էլ նրանք խօսեն մոլորեալ եղբայրների վրայ ունեցած իրանց ցաւակցութեան մասին, նրանց համար Բարձրեալի աթոռի առջև վերաւաքուած աղօթքների մասին, այնուամենայն մարդկային գործերը կատարելու համար անհրաժեշտ է բռնութիւն, որը և միշտ յարակցուած է եղել, յարակցվում է և պիտի յարակցուի: Եթէ երկու դաւանանքներ իրանց համարում են ճշմարիտ, բայց միմեանց՝ մոլար, ապա, կամենալով եղբայրներին զբաւել դէպի ճշմարտութիւն, նրանք պիտի քարոզեն իրանց վարդապետութիւնը: Իսկ եթէ մոլար վարդապետութիւնը քարոզվում է ճշմարտութեան մէջ գտնուող եկեղեցու անփորձ որդիներին, ապա այդ եկեղեցին չէ կարող չը սպել այն զրքերը, չհեռացնել այն մարդուն, որոնք գայթակղեցնում են նրա որդիներին: Ապա ինչ անել մոլար՝ ըստ ուղղափառ եկեղեցու՝ դաւանանքի բոցով

այրուող այն աղանդաւորին, որը կեանքի ամենանշանաւոր գործում՝ դաւանանքի մէջ՝ գայթակղութիւն է պատճառում եկեղեցու որդիներին: Ի՞նչպէս վարուել նրա հետ, ի՞նչպէս չկտրել նրա գլուխը կամ զնդանը չզցել: Ալէքսէյ Միխայլովիչի*) ժամանակ մարդկանց այրում էին խարոյկի վրայ, այսինքն՝ իր ժամանակի ամենածանր պատժի էին ենթարկում. այժմ՝ նոյնպէս ենթարկում են ամենածանր պատժի՝ առանձին բանտարգելութեան: Եւ ես ուշադրութիւն դարձրի այն բանի վրայ, թէ յանուն դաւանանքի ինչ է կատարվում. և սարսափեցի, որից յետոյ ուղղափառութիւնից գրեթէ հրաժարուեցի:

Եկեղեցու երկրորդ վերաբերմունքը կենսական ինդիքների նկատմամբ՝ պատերազմի և մահապատիժների մասին էր:

Այդ ժամանակները Ռուսաստանը պատերազմում էր: Եւ ուսմանը սկսեցին յանուն քրիստոնէական սիրոյ սպանել իրանց եղբայրներին: Չմտածել այդ մասին՝ անհնարին էր: Չտեսնել, որ սպանութիւնը չարիք է՝ հակառակ իւրաքանչիւր կրօնի ամենատարրական հիմունքներին, անհնարին էր: Բայց միևնոյն ժամանակ եկեղեցիներում աղօթում էին մեր զէնքի աշողութեան համար, իսկ դաւանանքի ուսուցիչները այդ սպանութիւնը ուղղակի դաւանանքից բխող գործ էին համարում: Եւ ոչ միայն պատերազմի այդ սպանութիւնները, այլ և ներքին խառնակ զրութեան միջոցին, որը յաջորդեց պատերազմին, ես տեսայ եկեղեցու պաշտօնեաներին, նրա ուսուցիչներին, արեղաներին,

միանձներին, որոնք մոլորուած, անօգնական պատանիների սպանութիւնը արդարացնում էին: Եւ ես ուշադրութիւն դարձրի այն ամենի վրայ, ինչ որ քրիստոնէութիւնը դաւանող մարդիկ անում էին. տեսայ և սարսափեցի:

XVI

Եւ ոչ միայն դադարեցի կասկածելուց, այլ և կատարելապէս համոզուեցի, որ դաւանութեան այն գիտութեան մէջ, որին ես միացել էի, ամեն բան ճշմարիտ չէ: Առաջ ես կարող էի ասել, թէ ամբողջ դաւանաբանութիւնը՝ մոլար բան է. սակայն այժմ չէր կարելի այդ ասել: Ամբողջ ժողովուրդը ունէր այդ ճշմարտութեան գիտութիւնը. դա անկասկած էր, որովհետեւ այլ կերպ նա չէր ասիր: Բացի դրանից՝ ճշմարտութեան այդ գիտութիւնը ինձ համար էլ արդէն մատչելի էր դարձել. և ես ապրում էի նրանով և զգում նրա ամբողջ արդարութիւնը, բայց հէնց նոյն գիտութեան մէջ կար և մոլորութիւն: Եւ գրանում ես անկարող էի չկասկածել: Եւ այն ամենը, ինչ որ առաջ ինձ վրայ վանողական տպաւորութիւն էր գործում, այժմ կենդանի կերպով կանգնեց իմ առջև: Թէպէտ տեսնում էի և այն, որ ամբողջ ժողովուրդի մէջ աւելի պակաս չափով է՝ ինձ վանող՝ մոլորութեան խառնուրդը, քան եկեղեցու ներկայացուցիչների մէջ, սակայն այնուամենայնիւ տեսնում էի, որ ժողովրդի հաւատա-

*) Թագաւոր ուսուց, XVII դարում:

ցեալները մէջ էլ մոլորութիւնը խառնուած էր ճշմարտութեան հետ:

Ի այց ճրտեղից առաջ եկաւ մոլորութիւնը և որտեղից՝ ճշմարտութիւնը: Ե՛ւ մոլորութիւնը, և՛ ճշմարտութիւնը ամփոփվում են աւանդութեան և, այսպէս կոչուած, սրբազան աւանդութեան և գրութեան մէջ: Եւ մոլորութիւնը, և՛ ճշմարտութիւնը աւանդուած են եկեղեցու կողմից:

Եւ կամայ-ակամայ ես հասայ ուսումնասիրութեան գաղափարին, այդ գրութեան և աւանդութեան ուսումնասիրութեան,—մի ուսումնասիրութիւն, որից ես անքան վախենում էի մինչև այժմ:

Եւ ես դիմեցի հէնց այն աստուածաբանութեան ուսումնասիրութեանը, որը մի ժամանակ ես մի առանձին արհամարհանքով դէն շարտեցի, որպէս անպէտք բան: Այն ժամանակ նա ինձ թուում էր անպէտք անհեթեթութիւնների մի շարք, այն ժամանակ ամեն կողմից շրջապատում էին ինձ կեանքի երևոյթները, որոնք թուում էին պարզ և լի իմաստով. այժմ սակայն ես ուրախ կը լինէի մի կողմ շարտելու այն, ինչ որ առողջ գլխի մէջ չէ մտնում. սակայն ազատուելու հնար չկար: Այդ դաւանաբանութեան վրայ հիմնուած է, կամ գոնէ անկապտելի կերպով կապուած է նրա հետ կեանքի իմաստի այն միակ գիտութիւնը, որը բացուեց իմ առջև: Որքան էլ նա տարօրինակ և վայրենի երևայ իմ ձեր, ամուր խելքի տեսակէտից, դա՛ փրկութեան միակ յոյսն էր: Պէտք է զգուշութեամբ, ուշադրութեամբ քննել այն՝ ըմբռնելու համար, և ոչ թէ այնպէս հասկանալ, ինչպէս ես հասկանում եմ գիտութեան հիմունքները. ես այդ չեմ որոնում և չեմ

էլ կարող որոնել, ճանաչելով դաւանանքի գիտութեան առանձնաշատկութիւնը: Ես չեմ որոնելու ամեն ինչի բացատրութիւնը: Ես գիտեմ, որ ամեն ինչի բացատրութիւնը պէտք է ծածկուած լինի անվախձանականութեան մէջ, ինչպէս և ամեն ինչի սկիզբը: Սակայն ես ուզում եմ հասկանալ այնպէս, որ հասած լինեմ անխուստիելի անբացատրելիին. ես ուզում եմ, որ այն բոլորը, ինչ որ անբացատրելի է, լինէր այդպէս ոչ այն պատճառով, որ իմ խելքի պահանջները անկանօն էին (նրանք կանօնաւոր են և նրանցից դուրս՝ ես ոչինչ հասկանալ չէի կարող), այլ այն պատճառով, որ ես տեսնում եմ իմ խելքի սահմանները: Ես ուզում եմ հասկանալ այնպէս, որ իւրաքանչիւր անբացատրելի սկզբունք կանգնէր իմ առջև որպէս նոյն բանականութեան անխուստիելիութիւն, և ոչ թէ որպէս՝ հաւատալու սոսկ պարտականութիւն:

Որ ուսմունքի մէջ կայ ճշմարտութիւն՝ դա ինձ համար անկասկած է. սակայն կասկածից դուրս է և այն, որ նրա մէջ մոլորութիւններ կան, և ես պէտք է գտնեմ թէ ճշմարտութիւնը և թէ մոլորութիւնը և դատեմ մէկը միւսից: Եւ ահա ես ձեռք եմ զարկում դրան: Թէ ինչ եմ գտել ես այդ վարդապետութեան մէջ իբրև մոլորութիւն, ինչ եմ գտել իբրև ճշմարտութիւն և ինչ եզրափակումների յանգել, դա կազմում է իմ յետագայ հեղինակութիւնների մասերը, որը եթէ ունի որևէ արժէք և կարևոր կը լինի որևէ մէկի համար, ապա, հաւանախան է, որ նա երբեքից գրուի և մի որևէ տեղում տպագրուի:

Սա գրուած է իմ ձեռքով սրանից երեք տարի առաջ: Այդ մասերը պիտի տպագրուեն:

Այժմ, երբ վերաքննելով այդ և վերադառնալով մտքի այն ընթացքին և այն զգացմունքներին, որոնք կային իմ մէջ և որոնց ես վերապրել եմ, այս օրերս ես մի երազ տեսայ: Այդ երազը ինձ համար սեղմ պատկերով արտայայտեց այն ամենը, ինչ որ ես վերապրել եմ ու նկարագրել, ուստի և մտածում եմ թէ՛ այն մարդկանց համար ես, որոնք ինձ հասկացան, զբա նկարագրութիւնը թարմացուցիչ կը լինի, կը բացատրի ու կը ժողովէ ի մի այն բոլորը, ինչ որ այնպէս երկարօրէն պատմուած է այս էջերի մէջ: Ահա այդ երազը:

Տեսնում եմ ինձ պատկած՝ անկողնու մէջ: Ո՛չ լաւ եմ զգում, ո՛չ վատ. պատկած եմ կոնակի վրայ: Սակայն սկսում եմ մտածել այն մասին, թէ ըսւ է արդեօք իմ պատկած մնալը. ինչ-որ մի բան, թւում է, անյարմար էր ոտներին համար,—կարճ էր, անհարթ էր, թէ ինչ, մի խօսքով անյարմար էր. ես շարժում եմ ոտներս և միևնոյն ժամանակ սկսում մտածել՝ ինչպէս և ինչի վրայ եմ ես պատկած, մի բան՝ որ մինչ այդ ես չէի էլ մտածում: Դիտելով իմ անկողինը, տեսնում եմ, որ պատկած եմ պարսնէ կապիչների հիւսուածքի վրայ, ամբացուած՝ մահճակալի կողերին: Այդօրինակ կապիչներից մէկի վրայ գրուած էին իմ գարշապարները, ծնկներս՝ մի ուրիշի վրայ. ոտներին անյարմար էր: Ես չգիտեմ ինչպէս իմանում էի, որ այդ կապիչները կարելի է տեղափոխել: Եւ ոտների շարժումով ծայրի կապիչը հեռացնում եմ ոտքերիս տակից, և թւում է, թէ այդպէս աւելի հանգիստ կը

լինի: Բայց ես նրան չափազանց հեռու գցեցի. ուզում եմ ոտներով բռնել նրան, սակայն այդ շարժումով իմ ծնկների տակից սահում է և միւս կապիչը, և ոտներս մնում են կախ ընկած: Ես շարժում եմ, գործում ամբողջ մարմնովս՝ ուղղուելու համար, լիովին համոզուած՝ որ այժմ կը տեղաւորուեմ. սակայն այդ շարժումով սահում են և տեղափոխվում իմ տակին և միւս կապիչները, և ես տեսնում եմ, որ գործը բոլորովին լւանդարվում է. իմ մարմնի ամբողջ ներքին մասը ցածրանում, կախ է ընկնում. ոտներս գետնին. չեն հասնում: Ես պահվում եմ միայն կոնակիս վերնամասովը, և այդ միջոցին ինձ համար ո՛չ միայն անյարմար է դառնում, այլ և սարսափելի: Այստեղ հէնց ես ինքս ինձ հարց եմ տալիս այն մասին, որը առաջ չէի էլ մտաբերում: Ես հարցնում եմ ինքս ինձ. սրտեղ եմ ես և ինչի՞ վրայ եմ պառկած: Եւ սկսում եմ զիտել շուրջս ու ամենից առաջ նայում ներքև, այնտեղ, որտեղ կախուած է իմ մարմինը, որտեղ—եւ այդ զգում եմ—նա պիտի ընկնի այս բօպէիս: Ես նայում եմ ներքև և չեմ հաւատում իմ աչքերին: Ո՛չ թէ որոշ բարձրութեան վրայ եմ, նման ամենաբարձր աշտարակի կամ լեռան բարձրութեան, այլ ես գտնվում եմ այնպիսի բարձրութեան վրայ, որպիսին երբէք չէի կարող երևակայել:


Չեմ էլ կարողանում որոշել՝ տեսնում եմ արդեօք որեէ բան այնտեղ ներքևում, այն անյատակ անդունդի մէջ, որի վրայ ես կախ եմ ընկած և որը դէպի իրան է ինձ քաշում: Միբայտ ճմրվում է, և ես զգում եմ մի սարսափ: Ներքև նայելը սարսափելի է: Եթէ ես նայելու լինեմ ներքև, զգում եմ, որ անմիջապէս պիտի

սահեմ վերջին կապիչից և մասնուեմ կորստի: Ես չեմ նայում: Բայց չնայել՝ աւելի ևս վատ է. որովհետև մտածում եմ այն մասին, թէ ինչ կը լինի այժմ ինձ՝ երբ ես նետուեմ վերջին կապիչից ևս: Զգում եմ, որ սարսափի ոյժից ես կորցնում եմ իմ վերջին յենակէտը և դանդաղորէն սահում կռնակով ցած և աւելի ցած: Մի ակնթարթ ևս՝ և ես կը նետուեմ: Այն ժամանակ իմ մէջ ծագում է մի միտք, թէ դա ճիշտ բան լինել չէ կարող: Դա երազ է: Զարթիր: Ես փորձում եմ զարթնել, բայց չեմ կարողանում: Ի՞նչ անել, ի՞նչ անել,—հարցնում եմ ինքս ինձ և նայում վերև: Վերևը նոյնպէս անյատակ է: Նայում եմ երկնքի այդ անհունութեան և ճգնում մոռանալու ներքևի անյատակութիւնը և, յիրաւի, մոռանում եմ. ներքևի անվախճանականութիւնը վառնում է ինձ և սարսափեցնում. վերևի անվախճանականութիւնը քաշում և ամբացնում է ինձ: Ես միեւնոյն կերպ կախ ընկած մնում եմ անդունդի վրայ վերջին՝ տակաւին իմ տակից դուրս չընկած կապիչներին կպած. գիտեմ, որ կախուած եմ, բայց նայում եմ միմիայն վերև, և իմ սարսափը անյատանում է: Ինչպէս որ այդ լինում է երազի մէջ, մի ինչ-որ ձայն ասում է. նշմարիր այդ, դա նա է: Ես նայում եմ շարունակ դէպի խորունկ անվախճանականութիւն, վերև, և զգում եմ, որ ես հանգստանում եմ, իշում այն ամենը, ինչ որ եղաւ անցաւ, և վերյիշում, թէ ինչպէս պատահեց այդ ամենը, թէ ինչպէս շարժում էի սաներով, ինչպէս կախ ընկայ, ինչպէս սարսափեցի և ինչպէս փրկուեցի սարսափից նրանով, որ սկսեցի վերև նայել: Եւ ես հարց եմ տալիս ինձ. ուրեմն այժմ էլ նոյնկերպ եմ տեսնում: Եւ սչ այն-

բան դիտում եմ շուրջս, որքան ամբողջ մարմնովս զգում եմ այն յենակէտը, որից կախ ընկած մնում եմ: Եւ տեսնում եմ, որ ես արդէն կախուած չեմ և չեմ ընկնում, այլ ուժեղ կառչած մնում: Հարցնում եմ ինձ, թէ ինչպէս եմ ամբացած, ինչպէս շօշափվում. շուրջս դիտում և տեսնում եմ, որ իմ տակին, մարմնի հէնց մէջտեղը մի կապիչ կայ, և որ նայելով վերև՝ ես պառկած եմ ամենահիմնաւոր հաւասարակշռութեան վրայ, որը և առաջ էլ մէն-մենակ պահում էր ինձ: Եւ այստեղ, ինչպէս որ լինում է դա երազի մէջ, իմ առջև պատկերանում է այն մեխանիզմը, որի միջոցով ես պահվում եմ. շատ բնական, հասկանալի և կասկածից դուրս բան է, չնայելով որ այդ մեխանիզմը իրականութեան մէջ ոչ մի իմաստ չունի: Երազում ես նոյն իսկ զարմանում եմ, թէ ինչպէս է եղել, որ ես այդ չեմ հասկացել առաջ. դուրս է գալիս, որ իմ գլխի կողմը կանգնած է մի սիւն, որի ամբողջութիւնը կասկածից միանգամայն վեր է, չնայելով որ այդ բարակ սեան համար կանգնելու տեղ չկար: Ապա այդ սիւնից անց էր կացուած մի կապ-հանգոյց՝ խորամանկորէն, բայց հասարակ ձևով. և եթէ պառկած ես այդ հանգոյցակապի վրայ մարմնի կենտրոնով ու նայում վերև, ապա ընկնելու մասին նոյն իսկ ոչ մի հարց չէ կարող լինել: Այդ բոլորը ինձ համար պարզ էր, և ես ուրախ էի ու անդորր: Եւ կարծես մէկը ինձ ասում է՝ նայիր, չմոռանաս:

Եւ ես զարթնեցի:

8 2/2 1/2 1/2



«ԱՐՕՐԻ» հրատարակած գրքերի ցուցակը

-
- | | |
|---|-------|
| 1) Մի հնչիւնից մի գիր, Ստ. Մալխասեանցի, գինը | 20 կ. |
| 2) Հայաստանն երբեմն եւ այժմ, Լեման Հառապտի,
Թարգմ. Իս. Յարութիւնեանի, գինը | 20 կ. |
| 3) Ասացուածներ Մահովդի, ընտրուած Լ. Ն. Տօլստօյի
ձեռքով, Թարգմ. Լ. Գանիէլեանի, գինը | 5 կ. |
| 4) Կօնճուցիտ, կազմեց Պ. Ա. Բուլանժէ, խմբ. Լ. Ն.
Տօլստօյի, Թարգմ. Սուրբաթեանի, գինը | 7 կ. |
| 5) Ճորճերի ազատագրութեան յիսնամեակը, գինը | 15 կ. |
| 6) Խոստովանութիւնը, Լ. Ն. Տօլստօյի, Թարգմանութ.
Սուրբաթեանի, գինը | 30 կ. |
-

«Ազգային գրադարան»



NL0254546

12